According to the principle of legality enshrined in Article 6 of the Constitution ('Principle of Legality'), the Government may adopt sub-legislative normative legal acts to ensure the implementation of laws, but such acts cannot alter or supplement the substance of the tax or the scope of the tax obligation. This means that any term used in the Tax Code, the content of which affects the scope of tax obligations, must be defined by law.

The same decision of the Constitutional Court also emphasized that the phrase 'taxes established in accordance with the law' means that both the tax and its constitutive elements must be established exclusively by law. In each individual case, a tax obligation will be considered lawfully established if it is not only formally prescribed by law but also if its constituent elements are fully reflected in that law. Otherwise, the situation will amount to unlawful interference with the right to property.

The European Court of Human Rights (ECtHR) has also developed consistent case law on taxation as interference with the right to property, specifically under Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights.

The ECtHR recognizes that taxation constitutes an interference with the right to property. However, such interference is not inherently incompatible with Article 1 of Protocol No. 1, provided certain conditions are met⁶.

States enjoy a wide margin of appreciation in matters of taxation, as these fall within the domain of economic and social policy. The ECtHR generally defers to the judgment of national authorities unless tax measures are arbitrary or disproportionate⁷.

Taxation must pursue a legitimate aim in the public or general interest, such as increasing public revenues or promoting economic fairness. The ECtHR typically accepts the existence of a public interest in tax legislation without extensive scrutiny⁸.

³ ՀՀՊՏ 2009.07.29/38(704) Հնդ.880:

⁴ ՀՀՊՏ 2014.04.16/19(1032) Հնդ.288:

⁵ ՀՀՊՏ 2018.12.05/90(1448) Հնդ.1216:

⁶ Guide on Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights. Council of Europe/European Court of Human Rights, 2020, p. 61.

⁷ Taxation at the European Court of Human Rights. Human Rights Law Review, Volume 24 (1):1, 2024, p.15.

⁸ Balancing Privacy and the Public Interest: The Application of the 'General Measures' Doctrine in L.B. v. Hungary in the Absence of Any Substantive Proportionality Assessment. European Constitutional Law Review, Volume 20, Issue 1, March 2024, p. 148.

The principal criterion applied by the Court is whether there is a reasonable relationship of proportionality between the means employed and the aim pursued. This includes determining whether a fair balance has been struck between the general interest of the community and the individual's right to property. Imposing an excessive or disproportionate tax burden on an individual may result in a violation of the Convention.

Thus, both the ECtHR and the Constitutional Court of Armenia have consistently held that the definition of taxes, duties, and other mandatory payments inherently constitutes a limitation on the right to property. Such limitations may only be considered lawful if they are prescribed exclusively by law, conform to the principle of legal certainty, pursue a legitimate aim, and are reasonably justified.

Developing these positions further, both high courts have affirmed that the imposition of a tax obligation is a lawful restriction on the right to property only when the tax is established by law, and the term 'tax established by law' encompasses both the legal definition of the tax type and the specification of its constituent elements exclusively in legislation.

In other words, any legal norm that affects the scope of a person's tax obligation must be defined by law. To illustrate, consider the following practical example:

According to Article 62(8) of the RA Tax Code⁹, in the case of alienation of buildings, structures (including unfinished constructions), residential or other premises, and land plots, the VAT base is determined according to Article 61 of the Code and the present article, but not less than 80% of the taxable base determined under Article 228, except in cases provided for by the same article.

Article 228(1) provides that the taxable base for property tax shall be the cadastral value approximating market value, as determined by a law regulating cadastral assessment for taxation purposes.

Hence, Article 62 refers to Article 228, which in turn refers to the Law on Cadastral Assessment for Property Taxation Purposes¹⁰. To determine whether the elements comprising a tax obligation are defined by law, one must also examine the relevant provisions of the latter law.

According to Article 3(1) of the Law on Cadastral Assessment, the cadastral value approximating the market value of land plots (except those for agricultural use) is calculated using the following formula:

$CV = BP \times A \times ZC$, where:

CV – cadastral value approximating market value for taxation purposes;

BP – base price per square meter of the land plot (excluding agricultural land);

A – surface area of the assessed land plot in square meters;

ZC – zoning coefficient (reflecting the location-based valuation zone of the land plot).

While two of the three required elements for calculating the cadastral value (base price and zoning coefficient) are defined by the same law (in Articles 3(2) and 3(3)), the zoning boundaries themselves are defined not by law but by Government Decision No. 1023-N of June 4, 2020¹¹, based on Article 3(5) of the same law.

⁹ ՀՀՊՏ 2016.11.04/79(1259) Հնդ.1038:

¹⁰ ՀՀՊՏ 2019.12.11/87(1540) Հնդ.1127:

¹¹ ՀՀՊՏ 2020.06.23/67(1622).1 Հնդ.843.1:

Therefore, one of the components required to determine the cadastral value—zoning boundaries—affecting the scope of the taxpayer’s obligation, is not prescribed by law, but by a sub-legislative act. This means that by changing zoning boundaries via a government decree, the amount of a tax obligation can be increased.

Such delegation contradicts the constitutional requirement that tax obligations be established in accordance with the law and thus may amount to unlawful interference with the right to property.

Conclusion

Taxation as a Constitutional Limitation

The obligation to pay taxes, duties, and other mandatory payments, as enshrined in Article 60(8) of the Constitution of Armenia, constitutes not merely a civic duty but a legitimate limitation on the right to property.

Requirement of Legal Basis

For tax obligations to be lawful under the Constitution, both the type of tax and its essential elements (tax base, rates, conditions, etc.) must be prescribed exclusively by law. Sub-legislative acts may not define or modify these components.

Principle of Legal Certainty

The legal framework governing taxation must satisfy the principle of legal certainty—taxpayers must be able to understand, foresee, and calculate their obligations on the basis of legislation, not administrative discretion.

Alignment with ECHR Standards

The interpretation of taxation as interference with property rights is consistent with Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights, which permits such interference only when it is lawful, pursues a legitimate public aim, and is proportionate.

Judicial Doctrine of the Constitutional Court

The Constitutional Court of Armenia has affirmed that tax obligations are constitutionally valid restrictions on property rights only when established in accordance with the principle of legality and when each element of the obligation is enshrined in statute.

Unlawful Delegation of Tax Components

Delegating the determination of tax-related elements (e.g., zoning boundaries in cadastral valuation) to executive acts violates the constitutional requirement for legality and may result in unlawful interference with property rights.

Implications for Legislative Practice

Going forward, legislative and tax policy-makers must ensure that no component of tax obligations—especially those impacting the scope of the financial burden—is left to be defined by governmental or administrative decisions without clear statutory authority.

ՄԱՅԱՂ ԲԱՂԱԼՅԱՆ – Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների՝ օրենքին համապատասխան սահմանված լինելու սահմանադրական պահանջի էությունը – Հոդվածում վերլուծվում են Հայաստանի Հանրապետությունում հարկային պարտավորությունների սահմանադրական և մարդու իրավունքներին առնչվող հարթությունները՝ կենտրոնանալով ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասի վրա, որով

հարկեր, տուրքեր, այլ պարտադիր վճարներ կատարելն ամրագրված է ոչ միայն որպես սահմանադրական պարտականություն, այլև որպես սեփականության իրավունքի սահմանափակում և միջամտություն այդ իրավունքին: Նշվածը, անշուշտ, առավել լիարժեք է համապատասխանում այդ պարտականության բովանդակությանը:

ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայի, մասնավորապես՝ ՍԴՈ-753 (2008), ՍԴՈ-816 (2009), ՍԴՈ-1142 (2014) և ՍԴՈ-1436 (2018) որոշումների վերլուծության արդյունքում կատարվում է եզրահանգում այն մասին, որ օրինականության սահմանադրական սկզբունքի համատեքստում ոչ միայն հարկերի տեսակները և դրանց վճարման կարգը, այլև հարկի բոլոր բաղադրատարրերը (օրինակ՝ հարկման բազան, հարկման օբյեկտը և այլն) պետք է սահմանված լինեն բացառապես օրենքով: Այլ կերպ ասած՝ ցանկացած իրավանորմ, որը կարող է հանգեցնել անձի հարկային պարտավորության ծավալի փոփոխությանը, պետք է սահմանված լինի օրենքով:

Հոդվածում նաև համեմատական վերլուծության է ենթարկվում Մարդու իրավունքների վերոպական դատարանի պրակտիկան և կատարվում է եզրահանգում, ըստ որի՝ հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների սահմանում՝ որպես սեփականության իրավունքի սահմանափակման ձև, կարող է առերևույթ գնահատվել որպես իրավաչափ միայն այն պարագայում, երբ այն նախատեսված է բացառապես օրենքով, համապատասխանում է որոշակիության սկզբունքին, ինչպես նաև հետապնդում է իրավաչափ նպատակ և ունի արդարացի հիմնավորում:

Հոդվածում հողամասերի կադաստրային արժեքների որոշման պրակտիկ օրինակով նաև ցույց է տրվում, թե ինչպես է հողամասերի տարածազնահատման գոտիները սահմանելու լիազորությունը կառավարությանը վերապահելը խախտում օրինականության սկզբունքը և հանգեցնում սեփականության իրավունքի ոչ իրավաչափ միջամտության:

Բանալի բառեր – *հարկային պարտավորություններ, հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ, օրինականության սկզբունք, իրավական որոշակիություն, սեփականության իրավունք*

САЯД БАДАЛЯН – *Суть конституционного требования об установлении налогов, пошлин и иных обязательных платежей в соответствии с законом.* – В настоящей статье рассматриваются конституционные аспекты налоговых обязательств в Республике Армения, в контексте статьи 60(8) Конституции 2015 года, которая трактует обязанность уплаты налогов, пошлин и иных обязательных платежей как ограничение права собственности. В результате анализа выявляется правовая трансформация: если в предыдущих редакциях Конституции налоговые обязательства рассматривались как гражданская обязанность, то в Конституции 2015 года они приобрели статус ограничения права собственности.

Посредством доктринального анализа решений Конституционного суда, в частности ՍԴՈ-753 (2008), ՍԴՈ-816 (2009), ՍԴՈ-1142 (2014) и ՍԴՈ-1436 (2018), раскрывается применение принципа законности в налоговой сфере. Суд последовательно утверждает, что как типы налогов, так и их составляющие элементы должны определяться исключительно законом.

В статье также проводится сопоставление армянских конституционных норм с практикой Европейского суда по правам человека в рамках статьи 1 Протокола № 1 к Европейской конвенции. Налогообложение, как вмешательство в право собственности, признается допустимым при условии его законности, легитимной цели и пропорциональности.

Пример из практики – порядок расчета кадастровой стоимости – показывает, что делегирование полномочий по определению элементов налогового обязательства подзаконным актам может привести к нарушению Конституции.

В заключение делается вывод, что налоговые обязательства будут соответствовать Конституции и международным стандартам прав человека, если они четко и исчерпывающе урегулированы законом и обеспечивают правовую определенность.

Ключевые слова: *налоговые обязательства, налоги, пошлины, обязательные платежи, принцип законности, правовая определённость, право собственности*

References

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի – Եր.: «Իրավունք», 2010:
- Balancing Privacy and the Public Interest: The Application of the “General Measures” Doctrine in L.B. v. Hungary in the Absence of Any Substantive Proportionality Assessment. *European Constitutional Law Review*, Volume 20, Issue 1, March 2024.
- Constitution of the Republic of Armenia (with the amendments of 2015), European Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Tax Code of the Republic of Armenia,
- Decision No. 1023-N of the Government of the Republic of Armenia dated 4 June 2020, on Defining the Zoning Boundaries, Boundary Coordinates, and Zoning Maps for Location-Based Valuation of Land Plots (Except for Agricultural Land) and Constructions in the Republic of Armenia, on Repealing Government Decisions No. 470-N of 17 April 2003 and No. 462 of 28 September 1994, and on Amending Government Decision No. 1101-N of 25 July 2002,
- Decision No. ՄԴՈ-1142 of the Constitutional Court of the Republic of Armenia dated 2 April 2014, on the case concerning the application of Members of the National Assembly of the Republic of Armenia regarding the constitutionality of Articles 5, 7, 8, 37, 38, 45, 49, and 86 of the Law of the Republic of Armenia “On Funded Pensions.
- Decision No. ՄԴՈ-1436 of the Constitutional Court of the Republic of Armenia dated 27 November 2018, on the case concerning the application of the Human Rights Defender of the Republic of Armenia regarding the compliance with the Constitution of Clause 11 of Part 4 of Article 109 and Subclauses “a” of Clause 2 of Part 1 of Article 123 of the Tax Code of the Republic of Armenia, as well as Subclauses 2 of Points 3 and 15 of the Procedure established by Annex No. 1 to Government Decree No. 1373-N of 5 October 2017.
- Decision No. ՄԴՈ-753 of the Constitutional Court of the Republic of Armenia dated 13 May 2008, on the case concerning the application of “Radio Hay” LLC regarding the compliance of Part 3 of Article 53 of the Law of the Republic of Armenia “On Television and Radio” with the Constitution of the Republic of Armenia.
- Decision No. ՄԴՈ-816 of the Constitutional Court of the Republic of Armenia dated 18 July 2009, on the case concerning the applications of “BJNI Mineral Water Plant” CJSC and “Komunnakhagits” CJSC regarding the compliance of Articles 7 and 19 of the Law of the Republic of Armenia “On Environmental and Nature Use Fees” and Part 2 of Article 22 of the Law of the Republic of Armenia “On Taxes” with the Constitution of the Republic of Armenia.
- Guide on Article 1 of Protocol No. 1 to the European Convention on Human Rights. Council of Europe/European Court of Human Rights, 2020.
- Law of the Republic of Armenia “On Defining the Procedure for Cadastral Valuation of Real Estate Approximating Market Value for the Purpose of Property Taxation,
- Taxation at the European Court of Human Rights. *Human Rights Law Review*, Volume 24 (1):1, 2024.

ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻԲԻՆԳԻ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԵՎ ԶՈՂԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԻՆՅԱՆ 
Երևանի պետական համալսարան

Հոդվածում քննվում են քրեակատարողական համակարգում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դրսևորումները, նման դեպքերի բացահայտման մեխանիզմները, զոհերի իրավունքների շրջանակը և պետության պարտավորությունները:

Այդ նպատակով իրականացվել է հայրենական և օտարերկրյա գրականության և մարդու իրավունքների միջազգային չափանիշների համապարփակ ուսումնասիրություն՝ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի մանրամասն վերլուծություն: Տարբեր երկրների վերաբերելի փորձի մասով համապատասխան աղբյուրներում արված դիտարկումների հաշվառմամբ՝ քրեակատարողական հիմնարկներում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի հնարավոր դրսևորումները բաժանվել են մի քանի ձևի, որոնցից յուրաքանչյուրի վերաբերյալ ներկայացվել են հատուկ եզրակացություններ:

Ընդգծելով քրեակատարողական համակարգում դատապարտյալների վերասոցիալականացման կարևորությունը՝ արձանագրվել է, որ պետությունը, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը, պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը՝ բացառելու մարդկանց թրաֆիքինգը և շահագործումը՝ դիտարկելով դրա դրսևորումը որպես պետության պարտավորությունների կատարման ձախողում և մարդու իրավունքների կոպիտ խախտում:

Հետազոտության արդյունքում, այլ պետությունների և միջազգային հաջողված փորձի հաշվառմամբ, արվել են առաջարկություններ քրեակատարողական համակարգում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի վերաբերյալ: Այդ շարքում են նման դեպքերի բացահայտման, զոհերի աջակցության և պաշտպանության,

* **Մերգեյ Ղազինյան** – ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս, ԵՊՀ եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնի փորձագետ

Сергей Казинян – Преподаватель кафедры европейского и международного права ЕГУ, эксперт Центра европейских исследований ЕГУ

Sergey Ghazinyan – Lecturer at YSU Chair of European and International Law, Expert at YSU Center for European Studies

Էլ. փոստ՝ sergey.ghazinyan@ysu.am <https://orcid.org/0000-0003-2796-1322>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 03.04.2025

Գրախոսվել է՝ 13.05.2025

Հաստատվել է՝ 25.06.2025

© The Author(s) 2025

ուղղորդման և այլ մարմինների հետ համագործակցության կառուցակարգերի ներդրումը, այս հիմնախնդրին առնչվող չափորոշիչների ներառումը ռիսկերի և կարիքների գնահատման համատեքստում և այլն:

Բանալի բառեր – մարդկանց թրաֆիքինգ, աշխատանքային շահագործում, քրեակատարողական համակարգ, ազատությունից զրկում, ռիսկերի և կարիքների գնահատում, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա

Ներածություն

Մարդու իրավունքների կառուցակարգերը միտված են պաշտպանելու մարդու հիմնարար իրավունքները հատկապես այն վայրերում, որտեղ դրանք վտանգված են: Քրեակատարողական հիմնարկները սահմանադրական իրավունքների պաշտպանության առումով հատուկ միջավայր են, որտեղ իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքը, մարդու արժանապատվության խթանումը և անվտանգության պահպանումը կարող են վտանգվել: Նման մարտահրավերները ենթադրում են, որ հաճախ չեն երաշխավորվում և խախտվում են մարդու իրավունքները¹: Այս տեսանկյունից մարդու իրավունքների խախտումների կանխումը ենթադրում է իրավասու մարմինների կողմից պահանջվող գործողություններ և անհրաժեշտ պատասխանատվության սահմանում նախատեսող կառուցակարգերի արդյունավետության ապահովում²:

Մարդկանց թրաֆիքինգը խաթարում է մարդու արժանապատվությունն ու ազատությունը: Այն միջազգայնորեն ճանաչված է որպես ժամանակակից ստրկության ձև և բազմաթիվ երկրների ներպետական քրեական օրենսդրությամբ ամրագրված հանցանք է: Ավելին, միջազգային իրավունքի համաձայն՝ մարդկանց թրաֆիքինգը նաև համարվում է մարդու իրավունքների կոպիտ խախտում: Այս իմաստով հարկ է նկատել նաև, որ պետությունները մարդկանց թրաֆիքինգի զոհերի նկատմամբ ունեն պարտավորություններ, որոնք առնչվում են մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանը, զոհերին համապատասխան օգնություն, պաշտպանություն տրամադրելուն և այլ միջոցառումների³:

¹ Տե՛ս «Experiencing human rights protections in prisons: The case of prison monitoring in Ireland» (07.10.2020), Sophie van der Valk, Mary Rogan, <https://journals.sagepub.com/doi/full/10.1177/1477370820960024>

² Տե՛ս «Preventing Human Rights Violations in Places of Detention: A European Initiative» (03.03.2014), Timothy W. Harding, MD, Dominique Bertrand, MD, LLB, <https://bpb-us-e1.wpmucdn.com/sites.harvard.edu/dist/f/680/files/2014/03/3-Harding.pdf>

³ Տե՛ս «States' Obligations under Human Rights Law towards Victims of Trafficking in Human Beings: Positive Developments in Positive Obligations» (11.05.2012), Ryszard Piotrowicz, <https://academic.oup.com/ijrl/article-abstract/24/2/181/1538030>

Քրեակատարողական համակարգում մարդկանց թրաֆիքինգը կարող է լուրջ խնդիր դառնալ՝ կապված փակ միջավայրին բնորոշ հարաբերությունների հիերարխիայի և այնտեղ պահվող անձանց խոցելիության հետ: Այն կարող է կապված լինել նաև քրեակատարողական ծառայողների պաշտոնից կամ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցության հետ: Չնայած առկա հակազդեցության իրավական մեխանիզմներին՝ արդյունավետ վերահսկողությանը վերաբերող բացերը հանգեցնում են գործնական խնդիրների:

Ազատությունից զրկված անձանց միջև աստիճանակարգային համակարգը նույնպես պարունակում է մարդկանց թրաֆիքինգի տեսանկյունից զգալի ռիսկեր: Արտոնյալ դիրքերում գտնվող ազատությունից զրկված անձինք կարող են վերահսկողություն իրականացնել ավելի խոցելիների նկատմամբ, այդ թվում՝ անձնակազմի անգործության կամ սահմանափակ կարողությունների հետևանքով: Սա պարունակում է նման խոցելի վիճակում գտնվող անձանց՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման վտանգ:

Չնայած մարդկանց թրաֆիքինգին առնչվող խնդիրներին՝ կարևոր է նաև դատապարտյալի վերասոցիալականացման միջոցների կիրառումը, մասնավորապես՝ աշխատանքի տեղավորումը և դրա առանձնահատկությունները: Մարդկանց թրաֆիքինգի բացառմանը և դրա դեմ արդյունավետ պայքարին զուգահեռ՝ անհրաժեշտ է ընդգծել դատապարտյալների աշխատանքի նշանակությունը նրանց արդյունավետ վերականգնման համար:

Հաշվի առնելով վերը նշված խնդիրները՝ հարկավոր է ուսումնասիրել քրեակատարողական համակարգում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի և զոհերի իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները: Այս իմաստով կարևոր է անդրադառնալ դրա վտանգների հարուցիչներին և կանխարգելմանը, նման դեպքերի բացահայտման ընթացակարգերին և զոհերի պաշտպանությանը, ինչպես նաև արձանագրված դեպքերում ենթադրյալ զոհերի ուղղորդմանը և իրավասու մարմինների միջև համագործակցությանը:

1. Քրեակատարողական համակարգում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման արգելքը որպես մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշ

Անժխտելի է, որ մարդկանց թրաֆիքինգը մարդու իրավունքների կոպիտ խախտում է: Դրա դեմ պայքարում պետության պարտավորության շրջանակը ներառում է նման արատավոր երևույթը խթանող գործոնների դեմ պայքարը, վտանգի տակ գտնվող կամ զոհ դարձած անձանց պաշտպանությունը և աջակցությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը, մասնավորապես *Ռանցն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի / Rantsev v. Cyprus and Russia (2010), application no. 25965/04* գործն այս իմաստով ունի բեկումնային նշանակություն: ՄԻԵԴ-ն այս

գործով մարդկանց թրաֆիքինգը ճանաչել է որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում, որը ենթակա է պաշտպանության Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ ՄԻԵԿ) 4-րդ հոդվածով: Դատարանն ընդգծել է, որ թրաֆիքինգն ի սկզբանե ենթադրում է հարկադրանքի, իշխանության չարաշահման և շահագործման միջոցով մարդկանց ընկալել որպես ապրանքներ՝ դրանով իսկ ոտնահարելով նրանց արժանապատվությունը և հիմնարար ազատությունները: Այն արձանագրել է, որ նման գործելաոճն անհամատեղելի է ժողովրդավարական հասարակության արժեքների հետ և հաստատել, որ մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը կամ շահագործելու նպատակներով պահելը ուղղակիորեն մտնում է 4-րդ հոդվածի՝ ստրկության և հարկադիր աշխատանքի արգելման շրջանակ⁴:

«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (2005 թ.) ընդգծում է, որ թրաֆիքինգը մարդու իրավունքների, անհատների արժանապատվության ու անձեռնմխելիության կոպիտ խախտում է: Այն ընդգծում է իրավունքահեն մոտեցման անհրաժեշտությունը՝ ճանաչելով մարդկանց թրաֆիքինգը ոչ միայն որպես հանցագործություն, այլև մարդու իրավունքների միջազգային օրենսդրությամբ ամրագրված հիմնարար իրավունքները խախտող երևույթ: Ուստի այս կոնվենցիան պետություններից պահանջում է ապահովել արդյունավետ կանխարգելում, զոհերի պաշտպանություն և հանցագործների հետապնդում՝ բացահայտորեն կապելով այդ պարտավորությունները արժանապատվության, իրավունքների պաշտպանության, ազատության և անվտանգության ապահովման հետ⁵:

Մարդկանց թրաֆիքինգը և շահագործումն արգելող ոլորտի միջազգային պայմանագրերից, օրինակ՝ «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայից և «Հարկադիր աշխատանքի մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 29 կոնվենցիայից (1930թ.)⁶ և դրանց կարգավորումներից զատ, մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքը սահմանում է քրեակատարողական հիմնարկներում մարդկանց թրաֆիքինգի, ստրկության և հարկադիր աշխատանքի արգելքը: Հատկանշական է, որ այս տեսանկյունից սահմանվում է քրեակատարողական համակարգում աշխատանքի կարևոր դերը՝ որպես վերասոցիալականացման միջոց:

⁴ Sté u Rantsev v. Cyprus and Russia, §§ 282-286, application no. 25965/04, 7 January 2010, <https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549>

⁵ Sté u «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (16.05.2005թ.), Նախաբան, 1-ին և 4-րդ հոդվածներ, <https://rm.coe.int/168008371d>

⁶ Sté u «Հարկադիր աշխատանքի մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 29 կոնվենցիա (28.06.1930թ.), 2-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24578>

Քրեակատարողական հիմնարկում աշխատանքը որպես այդպիսին, նույնիսկ եթե այն պարտադիր է կամ չվճարվող, կարող է համատեղելի լինել մարդու հիմնարար իրավունքների հետ և համապատասխանել ոլորտի մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի պահանջներին: Այսպես, «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների» (Նեյտոն Մանդելայի կանոններ) համաձայն՝ դատապարտյալները պետք է հնարավորություն ունենան աշխատելու և/կամ ակտիվորեն մասնակցելու վերականգնողական աշխատանքին: Դատապարտյալին ակտիվ պահելու համար պետք է տրամադրվի հանրօգուտ աշխատանք՝ սահմանված աշխատանքային օրվա պայմաններին համապատասխան: Այդուամենայնիվ, աշխատանքը չպետք է ունենա հարկադիր շահագործող դրսևորում: Դատապարտյալները չպետք է պահվեն ստրկության պայմաններում: Ոչ մի դատապարտյալից չպետք է պահանջվի աշխատել բանտի անձնակազմի անձնական կամ մասնավոր շահի համար: Նեյտոն Մանդելայի կանոններն ամրագրում են, որ դատապարտյալները չպետք է շահագործվեն մասնավոր շահի համար և պետք է արդար վարձատրություն ստանան իրենց աշխատանքի դիմաց⁷:

«Վերանայված եվրոպական բանտային կանոնները» (2020 թ.) սահմանում են, որ դատապարտյալի աշխատանքը պետք է դիտվի որպես վերականգնողական գործընթացի դրական տարր և նախատեսված լինի որպես դատապարտյալներին հասարակության մեջ վերաինտեգրվելու հնարավորություն: Ավելին, աշխատանքը պետք է հնարավորինս կապված լինի աշխատաշուկայի հետ և կազմակերպվի այնպես, որ դատապարտյալների հմտությունները լինեն պիտանի ազատվելուց հետո: Այդուամենայնիվ, դատապարտյալների աշխատանքը չպետք է կիրառվի որպես պատիժ: Այն պետք է ունենա օգտակար բնույթ, ապահովի արդար վճարումներ և ներառի մասնագիտական ուսուցում նրանց համար, ովքեր կարող են դրանից օգտվել: Մարդկանց պետք է իրենց կատարելիք աշխատանքի ընտրության որոշակի աստիճան տրվի, և աշխատանքային պայմաններին ներկայացվող չափանիշները (ներառյալ առավելագույն ժամերը և անվտանգության ու առողջության պահպանման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը) չպետք է ավելի ցածր լինեն, քան ազատության մեջ առկա պայմաններինը: Ֆինանսական շահի հետապնդումը չպետք է հակասի դատապարտյալի շահերին⁸:

Ամփոփելով նշենք, որ մարդկանց թրաֆիքինգը և հարկադիր աշխատանքը մարդու արժանապատվության և հիմնարար իրավունքների խախտումներ են,

⁷ Տե՛ս «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» (Նեյտոն Մանդելայի կանոններ) (08.01.2006 թ.), 96 - 98-րդ կանոններ, <https://documents.un.org/doc/undoc/gen/n15/443/41/pdf/n1544341.pdf>

⁸ Տե՛ս «Վերանայված եվրոպական բանտային կանոններ» (01.08.2020 թ.), 26-րդ, 100-րդ և 105-րդ կանոններ, https://cdn.penalreform.org/wp-content/uploads/2022/03/PRI-CoE_Short-guide-to-the-European-Prison-Rules.pdf

որոնք ճանաչված են մարդու իրավունքների միջազգային և տարածաշրջանային իրավական շրջանակներում: Պետությունները պարտավոր են պայքարել այդ չարաշահումների դեմ, ներառյալ ազատությունից զրկման վայրերում, որտեղ աշխատանքը, չնայած պայմանների առանձնահատկություններին, պետք է համապատասխանի մարդու իրավունքների չափանիշներին:

Միջազգային փաստաթղթերը, ինչպիսիք են Նելսոն Մանդելայի կանոնները և «Վերանայված եվրոպական բանտային կանոնները», թույլ են տալիս դատապարտյալների աշխատանքի որոշակի ձևեր, ավելին, արձանագրելով դրանց կարևորությունն անձանց վերասոցիալականացման հետ կապված աշխատանքներում, այդ փաստաթղթերն ընդգծում են շահագործման արգելումը, արդար վարձատրության անհրաժեշտությունը և հարգանքը մարդու արժանապատվության նկատմամբ: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը ամրապնդում է այս սկզբունքները՝ ընդգծելով, որ դատապարտյալների աշխատանքը պատշաճ կերպով կարգավորվելու դեպքում կարող է նպաստել վերականգնմանը՝ առանց խախտելու հիմնարար իրավունքները:

2. Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դրսևորումները քրեակատարողական համակարգում. գոհերի իրավունքները և պետության պարտավորությունները

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ քրեական արդարադատության հակազդեցության հետ կապված բարդությունները որոշակիորեն փաստագրված են: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը՝ կանխարգելումը, իրավախախտների նկատմամբ քրեական հետապնդումը, գոհերին աջակցությունը, փոխհատուցումն ու պաշտպանությունը և այլ միջոցառումներ ենթադրում են իրավասու դերակատարների արդյունավետ համագործակցություն, նրանց ջանքերի պատշաճ ներդրում և համակարգում: Համալիր համակարգերի տեսությունը ենթադրում է, որ այնպիսի բարդ սոցիալական խնդիրը, ինչպիսին է մարդկանց թրաֆիքինգը, չի կարելի դիտարկել պարզեցված և միակողմանի, քանի որ այն պահանջում է համապարփակ մոտեցում⁹:

Այս պայքարը պահանջում է քրեական արդարադատության և սոցիալական ծառայությունների արդյունավետ արձագանք¹⁰: Երկու ոլորտներում

⁹ Stéu «(Re)configuring the criminal justice response to human trafficking: a complex-systems perspective» (10.02.2017), Marcel van der Watt, Amanda van der Westhuizen, https://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/15614263.2017.1291560?casa_token=vFqgJkloQD0AAA:AA:mruLuLrj_U7xuqQXghAwA68Z6oQTtGLGrC1PTw9dro6I5j-6JJULnRxJNaMPjTxNBtAT00T6vWNkw

¹⁰ Stéu «Social Support, Dysfunctional Coping, and Community Reintegration as Predictors of PTSD Among Human Trafficking Survivors» (18.08.2018), David Okech, Nathan Hansen, Waylon Howard, John Kwasi Anarfi, Abigail C. Burns,

մարդկանց թրաֆիքինգի և շահագործման վերաբերյալ իրազեկության բարձրացումը կարևոր է նման դեպքերի բացահայտման տեսանկյունից: Քրեական արդարադատության համակարգի տեսադաշտում, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկներում, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման գոհերի հայտնվելու հավանականությունը կարող է բարձր լինել: Նրանք կարող են ենթարկվել մարդկանց թրաֆիքինգի քրեակատարողական հիմնարկում պահվելու ընթացքում կամ այնտեղ հայտնվելուց առաջ¹¹: Յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է իրականացնել դեպքի պատշաճ բացահայտում և խնդրի հասցեագրում:

Զնայած այն կանխավարկածին, որ մարդկանց թրաֆիքինգի գոհերը որոշակիորեն շփվում են քրեական արդարադատության համակարգի ներկայացուցիչների հետ, բայց դա հաճախ չի դիտարկվում որպես այդպիսին: Դրա պատճառները կարող են լինել գիտելիքների և փորձի պակասը, արդյունավետ վերապատրաստման բացակայությունը, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և այլ հանցագործությունների միջև չբացահայտված տարբերություններն ու քրեաիրավական այլ որակումները¹²:

Այսպես, մարդկանց թրաֆիքինգի գոհերին հաճախ հարկադրում են կատարել ապօրինի գործողություններ: Օրինակ՝ մարմնավաճառության համար պատասխանատվության ենթարկված անձը կարող է դառնալ սեռական շահագործման գոհ: Անհատը, ով մեղադրվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ, կարող է լինել հարկադիր հանցավորության («forced criminality») գոհ: Միգրացիայի ոլորտի իրավակարգավորումների խախտումը կարող է աշխատանքային շահագործման ենթարկվելու պատճառ լինել:

Նման իրավիճակներում մարդկանց թրաֆիքինգի գոհերը պետք է ոչ թե ենթարկվեն պատժի, այլ օգտվեն «non-punishment» սկզբունքից, որը գործնականում հաճախ խաթարվում է, և մարդկանց թրաֆիքինգի գոհերը հայտնվում են քրեակատարողական հիմնարկում որպես իրավախախտներ¹³: Արդյունքում, մարդկանց թրաֆիքինգի գոհը կարող է հայտնվել այլ, օրինակ՝ դատապարտյալի կամ կալանավորված անձի կարգավիճակում: Ուստի նրա կատարած

https://www.researchgate.net/publication/326480880_Social_Support_Dysfunctional_Coping_and_Community_Reintegration_as_Predictors_of_PTSD_Among_Human_Trafficking_Survivors

¹¹ Տե՛ս «Human Trafficking in Correctional Institutions: A Survey of Correctional and Anti-Trafficking Leaders» (09.01.2022), Cynthia Fraga Rizo a, Christopher J. Wretmana,b, Jia Luo, Tonya B. Van Deinsa, Nicole Sullivan, Sarah M. Godoya, Erin A. Meehana, and Rebecca J. Macy, <https://www.tandfonline.com/doi/epdf/10.1080/23322705.2021.2011660?needAccess=true>

¹² Տե՛ս «Failing victims? Challenges of the police response to human trafficking» (31.08.2019), Amy Farrell, Meredith Dank, Ieke de Vries, Matthew Kafafian, Andrea Hughes, Sarah Lockwood, <https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1111/1745-9133.12456>

¹³ Տե՛ս «Human Trafficking and the Emergence of the Non-Punishment Principle» (15.01.2016), Ryszard Wilson Piotrowicz, Liliana Sorrentino, <https://www.onlinelibrary.iihl.org/wp-content/uploads/2020/05/2016-P1.pdf>

կամ ենթադրյալ հանցագործությունն ինքնին կարող է լինել մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հնարավոր առկայության նախնական ցուցիչ¹⁴։ Ավելին, նման բացթողումը կարող է հանգեցնել մարդկանց թրաֆիքինգի գոհերի կրկնազոհացման՝ ոչ միայն չճանաչվելով որպես մարդկանց թրաֆիքինգի գոհեր, այլև նույնիսկ ենթարկվելով պատասխանատվության այն արարքի համար, որը նրանց հարկադրել էր կատարել իրենց թրաֆիքինգի կամ շահագործման ենթարկող անձը¹⁵։

Տարբեր երկրներում որպես լուծում դիտարկվել է ռիսկերի և կարիքների գնահատման արդյունավետ համակարգի ներդրումը՝ մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման տեսանկյունից կոնկրետ կարիքների և խոցելիության հայտնաբերման համար։ Այն կարող է օգնել բացահայտելու հոգեկան առողջության հետ կապված խնդիրները, ինչպիսին է խոշտանգման կամ վատ վերաբերմունքի այլ ձևերը վերապրած կամ մարդկանց թրաֆիքինգի կամ սեռական և գենդերային բռնության ենթարկված լինելը¹⁶։ Կարևոր է նաև, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը տեղյակ լինի նման դեպքերի բացահայտման դեպքում իրավասու այլ մարմինների գործառնությունների, նրանց ներգրավման ճանապարհների և հետագա քայլերի մասին։ ՔԿՀ հիմնարկի վարչակազմն այս իմաստով պետք է անցնի պատշաճ վերապատրաստում¹⁷։

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ առանձին երկրներում, ռիսկերի և կարիքների ընդհանուր գործիքից զատ, ներդրվել են մարդկանց թրաֆիքինգի դեպքերի բացահայտման նպատակով մշակված ընթացակարգեր, ցուցիչներ և ուղեցույցներ։ Այսպես, «Նորվեգիայի Ուղղիչ ծառայության» («Norwegian Correctional Service») համար մշակվել է մարդկանց թրաֆիքինգի դեպքերի բացահայտման ուղեցույց։ Այն անդրադառնում է մարդկանց թրաֆիքինգի գոհերի՝ քրեակատարողական հիմնարկում հայտնվելու հիմնա-

¹⁴ St' u «The role of corrections in the fight against human trafficking» (26.03.2019), Rusty Ringler, <https://www.corrections1.com/corrections-training/articles/the-role-of-corrections-in-the-fight-against-human-trafficking-2gEgDhroZIE6uNH/>

¹⁵ St' u «Trafficked Women in Prison: The Problem of Double Victimization» (09.04.2014), Carolina Villacampa, Nuria Torres, https://www.researchgate.net/publication/271738566_Trafficked_Women_in_Prison_The_Problem_of_Double_Victimisation

¹⁶ St' u Greece: 2023 visit CPT/Inf(2024)21 | Section: 21/24 | Date: 15/03/2024, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-grc-20231120-en-21>
Lithuania: Visit 2021 CPT/Inf (2023) 01 | Section: 23/33 | Date: 27/02/2023, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-ltu-20211210-en-23>

¹⁷ St' u «The role of corrections in the fight against human trafficking» (26.03.2019), Rusty Ringler, <https://www.corrections1.com/corrections-training/articles/the-role-of-corrections-in-the-fight-against-human-trafficking-2gEgDhroZIE6uNH/>

կան իրավիճակներին, չպատժելիության սկզբունքին, խոցելիությանը, բացահայտման կարևորությունը և հնարավորություններին, ինչպես նաև հետագա քայլերին¹⁸:

Մարդկանց թրաֆիքինգի խնդիրը լուծելու համար Ամերիկայի Միացյալ Նահանգների «Ուղղումների ազգային ինստիտուտը» («National Institute for Corrections») ներդրել է ուղղիչ հիմնարկներում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի նախաձեռնությունը, որի նպատակներն են ուղղիչ հիմնարկի անձնակազմի և ազատությունից զրկված անձանց շրջանում իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև զոհերի նույնականացման և ծառայությունների ու աջակցության մատչելիությունը: Այնուամենայնիվ, չնայած այս ողջունելի նախաձեռնությանը, ուղղիչ հիմնարկներում մարդկանց թրաֆիքինգի շուրջ իրավիճակի վերաբերյալ հետազոտությունների պակաս է արձանագրվել¹⁹:

Անգլիայում և Ուելսում «Նորին գերազանցության բանտային և պրոբացիոն ծառայությունը» («His Majesty's Prison and Probation Service») բանտի անձնակազմի համար թողարկել է «Ժամանակակից ստրկության ուղեցույց»: Այն ուրվագծում է բանտի անձնակազմի պարտականությունները՝ բացահայտելու և աջակցելու ժամանակակից ստրկության զոհերին: Այն ընդգծում է ինչպես անձնակազմի, այնպես էլ ազատությունից զրկված անձանց իրազեկության բարձրացման կարևորությունը և նախատեսում հավանական զոհերի նույնականացման ընթացակարգեր²⁰:

Պետք է ողջունել նման մեխանիզմների, հատկապես մարդկանց թրաֆիքինգի և շահագործման առումով հատուկ սքրինինգային գործիքների ներդրումը և գործնական կիրառումը: Այդպիսի գործիքների կամ մեխանիզմների ներդրումը նպաստում է ազատությունից զրկված անձանց շրջանում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեպքերի արդյունավետ հայտնաբերմանը և զոհերի նկատմամբ մասնագիտական մոտեցմանը: Այդուամենայնիվ, դա ևս հանդիպում է մարտահրավերների: Կարևոր է ապահովել անձնակազմի վերապատրաստման և աջակցության շարունակականությունը՝ գործիքն արդյունավետ կիրառելու համար²¹:

¹⁸ St' u «Guideline for Identifying Human Trafficking in the Norwegian Correctional Service», https://www.rosanorge.no/rosa-page-wp/wp-content/uploads/2023/06/Veileder.pdf?fbclid=IwY2xjawIB7ntleHRuA2FlbQJxMAABHV6myfhOFibxF26qYAylpuuIE_WkzyyVH24Nh4hRI-4_UV_SPXCM4uBo3g_aem_FXVe4FeQSMirOuUd30j4pA

¹⁹ St' u «Correctional Anti-Human Trafficking Initiative (CAHTI)», <https://nicic.gov/resources/resources-topics-and-roles/topics/correctional-anti-human-trafficking-initiative-cahti>

²⁰ St' u «Modern Slavery Guidance» (March 2023), https://assets.publishing.service.gov.uk/media/64492940529eda00123b0529/HMPPS_Modern_Slavery_Guidance_March_23_-_external_version.docx?utm_source=chatgpt.com

²¹ St' u «Successes and Challenges in Implementing a Human Trafficking Screening Tool in a Local Detention Center» (31.12.2023), <https://journals.sagepub.com/doi/10.1177/19367244231219940>

Քրեակատարողական հիմնարկում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման արմատական պատճառները կարող են լինել գոհերի խոցելիությունը, քրեակատարողական հիմնարկի վարչակազմի՝ ծառայողական դիրքից կամ լիազորություններից բխող ազդեցության չարաշահումը և անօրինական օգտագործումը, դատապարտյալների և կալանավորված անձանց միջև աստիճանակարգության խնդիրը:

Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ) առանձին գեկույցներում անդրադարձ է կատարվել քրեակատարողական հիմնարկներում շահագործման դրսևորումներին: Օրինակ՝ Ուկրաինայի վերաբերյալ գեկույցում, քննադատելով պետության կողմից ձեռնարկված ոչ բավարար քայլերը, ԽԿԿ-ն արձանագրել է, որ դատապարտյալների միջև աստիճանակարգության խնդրի պատճառով «ցածր կաստայի» («low caste») դատապարտյալները հաճախ ենթարկվում էին իրենց խցակիցների կողմից բռնության, ահաբեկման և շահագործման²²:

Նման խնդիր արձանագրվել է նաև Մոլդովայում: Մասնավորապես, արձանագրվել է, որ դատապարտյալների պատշաճ ռիսկերի գնահատման և տեղաբաշխման բացակայությունը, զուգակցվելով դատապարտյալների ոչ ֆորմալ դեկլարաների և մեծ կացարանների հետ, զգալիորեն մեծացնում է խոցելի խմբերի նկատմամբ բռնության և շահագործման ռիսկը²³:

Մոնտենեգրոյում ԽԿԿ-ն հայտնաբերել է, որ բացակայում է խցերը մաքրելու և անձնական արժանապատվությունը պահպանելու համար տարրական հիգիենայի միջոցների կանոնավոր մատակարարումը: Սա հատկապես վերաբերում էր ֆինանսական միջոցներ չունեցող անձանց, ինչը նրանց ստիպում էր ապավինել իրենց խցակիցներին և կալանքի տակ գտնվող այլ անձանց՝ դրանով իսկ առաջացնելով շահագործման և ահաբեկման վտանգ²⁴:

Այլ դատապարտյալների կողմից ազդեցությունն ընդլայնվում է, երբ խոսքը վերաբերում է առավել խոցելիություն ունեցող անձանց, օրինակ, երբ իրականացվում է անչափահասների և չափահասների համատեղ տեղաբաշխում: Արձանագրելով նման խնդիր Սլովակիայում՝ ԽԿԿ-ն նշել է, որ հաշվի առնելով բռնության բոլոր ձևերի բարձր ռիսկը՝ ներառյալ սեռական կամ այլ տեսա-

²² St u Ukraine: visit 2023 CPT/Inf (2024) 20 | Section: 11/20 | Date: 27/03/2024, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-ukr-20231016-en-11>

²³ St u Moldova: visit 2022 CPT/Inf (2023) 27 | Section: 12/16 | Date: 14/09/2023, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-md-20221205-en-12>

²⁴ St u Montenegro: visit 2022 CPT/Inf (2023) 10 | Section: 14/24 | Date: 23/11/2022, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-mne-20220607-en-14>

կի շահագործման, անչափահասներին միշտ պետք է տեղավորել մեծահասակներից առանձին՝ հսկող անձնակազմի մշտական ներկայությամբ: Չափահաս դատապարտյալները չպետք է մուտք ունենան այնտեղ²⁵:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը չի կարողացել ապահովել դատապարտյալների ամենահիմնական պահանջը՝ անվտանգ միջավայրը: Օրինակ՝ Լատվիայում քրեակատարողական հիմնարկներից մեկը կառավարվում էր ահաբեկման և բռնության զուգահեռ համակարգերով: Մի դեպքում այն կազմակերպել էին հենց դատապարտյալները՝ «շեֆերի» («bosses») կողմից վերահսկվող տարբեր մակարդակների աստիճանակարգություն ունեցողների, ներքին անվտանգության բաժնի աջակցությամբ, իսկ «բարոյալքված» («untouchable») համարվող դատապարտյալներին բաժին էր հասնում նվաստացման և այլոց համար աշխատելու հարկադրանքը, որը հավասարազոր է ստրկության: Մյուսն իրականացվում էր հենց բանտի աշխատակիցների կողմից՝ կիրառելով մենախուց տեղափոխելը որպես ահաբեկման ձև, որը զուգորդվում էր բանտի աշխատակիցների կողմից կանոնավոր ծեծով: Այսպիսով, անմարդկային վերաբերմունքը ըստ երևույթին ինստիտուցիոնալացվել էր և դարձել քրեակատարողական հիմնարկի կառավարման անբաժանելի մաս²⁶:

Չնշելով մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դրսևորումներ՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում ԽԿԿ-ն արձանագրել է ընդհանուր միտում, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը մասամբ լիազորությունը փոխանցել է ընտրված թվով ազատությունից զրկված անձանց, այսպես կոչված «նայողների» («watchers»), որոնք գտնվում են բանտային ոչ ֆորմալ աստիճանակարգության վերևում, և նրանց միջոցով պահպանվում է ազատությունից զրկված անձանց նկատմամբ վերահսկողությունը: ԽԿԿ-ն Հայաստանի իշխանություններին կոչ է արել վճռական քայլեր ձեռնարկել այս գործելառճին վերջ տալու համար²⁷:

Պետք է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, այդ թվում՝ օրենսդրական բնույթի, այս պրակտիկայի դեմ պայքարելու համար: Ոչ մի դատապարտյալ չպետք է դրվի այլ դատապարտյալների նկատմամբ ղեկավար կարգավիճակում՝ վտանգելով նրանց մարդու իրավունքները, ինչպես և դնելով նրանց մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման վտանգի տակ²⁸:

²⁵ St. u Slovak Republic: Visit 2018 CPT/Inf (2019) 20 | Section: 20/39 | Date: 19/06/2019, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-svk-20180319-en-20>

²⁶ St. u Latvia: Visit 2007 CPT/Inf (2009) 35 | Section: 16/38 | Date: 15/12/2009, <https://hudoc.cpt.coe.int/eng?i=p-lva-20071127-en-16>

²⁷ St. u Armenia: Visit 2015 CPT/Inf (2016) 31 | Section: 15/37 | Date: 22/11/2016, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-arm-20151005-en-15>

²⁸ St. u Ukraine: Visit 2020 CPT/Inf (2020) 40 | Section: 7/13 | Date: 30/11/2020, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-ukr-20200804-en-7>

Չի բացառվում նաև քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից ազատությունից զրկված անձանց շահագործումը, ովքեր, ունենալով սոցիալական, կրթական և մասնագիտական վատ հմտություններ, հանդիսանալով հասարակության մարգինալացված խմբերի ներկայացուցիչներ և/կամ ունենալով հատուկ կարիքներ, ավելի մեծ կախվածության մեջ են լինում որոշակի ծառայություններից և քրեակատարողական հիմնարկի վարչակազմից: Հետևաբար, կոռուպցիոն գործունեության հետևանքով նրանք կարող են հայտնվել շահագործման ենթարկվելու վտանգի տակ²⁹:

Պատմականորեն Խորհրդային Միությունում «ազատագրվում» պատժատեսակի կիրառմամբ ուղղիչ հիմնարկներում լայնորեն օգտագործվում էր հարկադիր աշխատանքը տնտեսություններում: Ժամանակակից Ռուսաստանում ևս հարկադիր աշխատանքի տարրերը պահպանվում են քրեակատարողական համակարգում՝ այլ ծավալներով ու պայմաններով³⁰: Քրեակատարողական հիմնարկի վարչակազմի կողմից շահագործման խնդիրը կարող է կապված լինել նաև գործող օրենսդրական կարգավորումների հետ: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ ազատագրվման դատապարտված յուրաքանչյուր անձ պարտավոր է աշխատել ուղղիչ հիմնարկների վարչակազմի կողմից որոշված աշխատանքներում: Ավելին, նախատեսվում է, որ աշխատանքից հրաժարվելը և աշխատանքը դադարեցնելը «պատժի կրման սահմանված կարգի չարամիտ խախտում» են և կարող են հանգեցնել կարգապահական պատասխանատվության:

Բացի կարգապահական միջոցներից, քրեակատարողական հիմնարկի վարչակազմերը լայնորեն կիրառում են ազդեցության ոչ պաշտոնական մեթոդներ՝ սկսած պարտադիր ֆիզիկական վարժություններից և ազատ ժամանակից զրկելուց, մինչև վարչակազմի հետ համագործակցողների կողմից բռնություն: Ուստի ազատությունից զրկված աշխատող դատապարտյալները լիովին գտնվում են իրենց գործատուի՝ քրեակատարողական հիմնարկի վարչակազմի վերահսկողության ներքո: Նրանք պաշտպանված չեն աշխատանքային շահագործումից և չեն կարող հրաժարվել աշխատանքից՝ պայմանավորված պաշտոնական կամ ոչ պաշտոնական պատժի սպառնալիքով³¹: Ռուսաստանի Դաշնության քրեակատարողական հիմնարկներում

²⁹ Տե՛ս «The United Nations Convention against Corruption: Handbook on Anti-Corruption Measures in Prisons» (2017), https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/17-06140_HB_anti-corr_prisons_eBook.pdf

³⁰ Տե՛ս «Forced Labour in Russia and the Soviet Union. Continuity or Change?» (16.07.1992), Elzbieta Kaczynska, <https://www.jstor.org/stable/43658105?seq=4>

³¹ Տե՛ս ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական վերանայման շրջանակներում Ռուսաստանի չորրորդ փուլի վերանայման համար ներկայացված փաստաթուղթը, <https://uprdoc.ohchr.org/uprweb/downloadfile.aspx?filename=11913&file=EnglishTranslation>

քրեական ենթամշակույթի աստիճանակարգությունը և մարդու իրավունքների խախտումների հանգեցնող հետևանքներ արձանագրել է նաև ԽԿԿ-ն³²:

Նման արատավոր երևույթների բացառման համար, օրենսդրական բացերը վերացնելուց զատ, անհրաժեշտ է ձևավորել մշտադիտարկման անկախ համակարգ, որը կարող է ծառայել իբրև կայուն երաշխիք մարդու իրավունքների կոպիտ խախտումների, այդ թվում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ: Շատ երկրներում, ինչպես նաև Հայաստանում, քրեակատարողական հիմնարկների մշտադիտարկման գործառնությունը օժտված են մարդու իրավունքների ազգային հաստատությունները: Այդուամենայնիվ, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում ինքնին կարևոր է, որ այս հաստատությունները լինեն մասնագիտացած՝ բացահայտելու քրեակատարողական հիմնարկներում մարդկանց թրաֆիքինգի դեպքերը, ծանոթ լինելով դրանց ցուցիչներին և ունենալով հստակ ընթացակարգեր: Առհասարակ, մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում արդյունավետ մշտադիտարկման մեխանիզմները կարևոր են իրավասու մարմինների աշխատանքը գնահատելու և հզորացնելու առումով: Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտում հնարավոր են ազգային մշտադիտարկման մեխանիզմների տարբեր մոդելներ, որոնք պետք է հարմարեցվեն ազգային համատեքստին³³:

Եզրակացություններ

Քրեակատարողական համակարգում դատապարտյալների աշխատանքը, այդ թվում՝ չվարձատրվող, կարող է լինել իրավաչափ և արդյունավետ անձի վերասոցիալականացման տեսանկյունից: Այդուամենայնիվ, մարդու իրավունքների միջազգային չափանիշները հստակ նախատեսում են քրեակատարողական համակարգում շահագործումն արգելելը, արդար վարձատրությունը և մարդու արժանապատվությունը հարգելը:

Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարը պահանջում է հատուկ ուշադրություն ու համակարգված մոտեցում՝ ելնելով այդ հիմնարկի առանձնահատկություններից: Պետության պարտավորությունն է ապահովել մարդկանց թրաֆիքինգի գոհերի պաշտպանությունը, նրանց իրավունքների արդյունավետ երաշխավորումը և իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների մատչելիությունը:

Քրեակատարողական հիմնարկներում գոհերի հայտնաբերման և պաշտպանության ուղղությամբ կարող են ներդրվել արդյունավետ մեխանիզմներ,

³² St' u Russian Federation: Visit 2012 CPT/Inf (2013) 41 | Section: 8/36 | Date: 17/12/2013, <https://hudoc.cpt.coe.int/?i=p-rus-20120521-en-8>

³³ St' u «National Monitoring Mechanisms: Strengthening the Action against Trafficking in Human Beings» (27.12.2023), Sergey Ghazinyan, <https://journals.ysu.am/index.php/state-and-law/article/view/11789/9331>

ներառյալ՝ ռիսկերի և կարիքների գնահատման գործիքներ, մարդկանց թրաֆիքինգի և շահագործման նշանների բացահայտման ուղեցույցներ և գոհակենտրոն մոտեցումներ: Այս ամենը պետք է զուգորդվի քրեակատարողական հիմնարկի իրավասու անձնակազմի կանոնավոր վերապատրաստմամբ:

Միևնույն ժամանակ, թրաֆիքինգի և շահագործման արմատական պատճառների բացահայտման համար անհրաժեշտ է իրականացնել տվյալների համապարփակ ու միասնական հավաքագրում և վերլուծություն:

Առաջարկություններ՝

- *մշակել մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեպքերի բացահայտման քրեակատարողական համակարգին հատուկ սքրինինգային գործիք՝ ազատությունից զրկված անձանց շրջանում գոհերին համակարգված կերպով բացահայտելու համար: Ի տարբերություն ընդհանուր ռիսկերի և կարիքների գնահատման գործիքների՝ այս մեխանիզմը պետք է պարունակի ցուցիչներ, որոնք բնորոշ են բացառապես մարդկանց թրաֆիքինգին և շահագործմանը, օրինակ՝ աշխատանքային շահագործմանը: Այն պետք է ներառի իրավական, հոգեբանական և սոցիալական բաղադրիչներ, ինչպես նաև իրավիճակային ցուցիչներ, որոնք քրեակատարողական հիմնարկի անձնակազմը կարող է օգտագործել դեպքերի արդյունավետ հայտնաբերման համար: Նման գործիքը կխթանի նույնականացման գործընթացը և կապահովի ենթադրյալ գոհերի բացահայտումը քրեակատարողական հիմնարկ մուտք գործելիս, ինչպես նաև այնտեղ պահվելու ընթացքում,*

- *կարգավորել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի իրավասու ներկայացուցչի գործողությունները, որոնք պետք է առնչվեն ոչ միայն առերևույթ հանցանքի մասին հաղորդում ներկայացնելուն, այլ նաև, ըստ անհրաժեշտության, մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման ենթադրյալ գոհի ուղղորդմանը, աջակցությանը և պաշտպանությանը,*

- *ներդնել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար պարտադիր վերապատրաստման ծրագիր կամ դասընթաց՝ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման գոհերին բացահայտելու ու աջակցելու վերաբերյալ: Վերապատրաստումը պետք է հաշվի առնի քրեակատարողական համակարգում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դրսևորումների առանձնահատկությունները՝ չսահմանափակվելով թեմայի վերաբերյալ ընդհանրական բնույթի նյութով: Այն պետք է ընդգծի իրավախախտների ու գոհերի միջև տարբերակումը և ներառի գործնական բաղադրիչներ, ինչպիսիք են դեպքերի ուսումնասիրությունը և դերախաղի վարժությունները՝ նպաստելու ներդրված ցուցիչների արդյունավետ կիրառմանը, հարցազրույցի տեխնիկային և ուղղորդման մեխանիզմների գործնական ըմբռնմանը և այլն,*

- իրականացնել բացահայտված դեպքերի վերաբերյալ տվյալների համակարգված և միասնական հավաքագրում և վերլուծություն՝ կոնկրետ համակարգում խնդրի ծավալը, դրսևորումները և արմատական պատճառները գնահատելու համար: Այս ամենը արժեքավոր կարող է լինել նաև քրեակատարողական հիմնարկներում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի քաղաքականության մշակման, անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրական փոփոխությունների և գործնական լուծումների համար,

- պատժի անհատական պլանավորման և ռիսկերի ու կարիքների ընդհանուր գնահատման մաս դարձնել մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործման խոցելիությունը՝ աջակցելով նաև նման խնդիրներ ունեցող անձանց արդյունավետ տեղաբաշխմանը, կիրառվող վերասոցիալականացման միջոցները որոշելուն և այլն: Անհատական գնահատումը պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են տարիքը, հոգեկան առողջության վիճակը, նախկինում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման գոհ լինելու հանգամանքը, կոնկրետ երկրում իրավական կարգավիճակը և այլն: Այս գնահատումը պետք է իրականացվի վերապատրաստված մասնագետների կողմից և պարբերաբար ենթարկվի վերանայման՝ ազատությունից զրկված անձի նկատմամբ իրականացվող գործողությունները համապատասխանեցնելով հանգամանքների ցանկացած փոփոխության,

- նախատեսել մարդու իրավունքների ազգային հաստատությունների և անկախ մշտադիտարկման մարմինների անհրաժեշտ լիազորություններ՝ չհայտարարված այցեր իրականացնելու քրեակատարողական հիմնարկներ: Օրենքները պետք է ապահովեն, որ այս մարմիններն ունենան հասանելիություն ազատությունից զրկված անձանց և փաստաթղթերին, ինչը նրանց հնարավորություն կտա արդյունավետորեն բացահայտելու մարդու իրավունքների խախտումները, այդ թվում՝ մարդկանց թրաֆիքինգը կամ շահագործումը: Իրավական դրույթները պետք է պահանջեն պետական մարմիններից օպերատիվ արձագանքել մշտադիտարկման մարմինների բացահայտումներին: Քրեակատարողական հիմնարկի անձնակազմի կողմից մշտադիտարկման ցանկացած խոչընդոտ պետք է հանգեցնի պատասխանատվության:

СЕРГЕЙ КАЗИНЯН – Борьба с торговлей людьми и эксплуатацией и защита прав жертв в пенитенциарной системе. – Целью статьи является представление проявлений торговли людьми и эксплуатации в пенитенциарной системе, механизмов выявления таких случаев, объема прав жертв и обязательств государства.

Подчеркивая важность работы в пенитенциарных учреждениях с точки зрения реабилитации и ресоциализации лиц, было подчеркнуто, что государство, в частности администрация пенитенциарных учреждений, должно принимать все необходимые меры для исключения торговли людьми и эксплуатации, рассматривая ее проявления как невыполнение обязательств государства и грубое нарушение прав человека.

В результате проведенного исследования, были представлены рекомендации, направленные на решение проблемы торговли людьми и эксплуатации в пенитенциарной системе. К ним относятся внедрение механизма выявления таких случаев, поддержка и защита

жертв, перенаправление и сотрудничество с другими органами, включение конкретных критериев по данному вопросу в общий инструмент оценки рисков и потребностей и т. д. Была подчеркнута важность борьбы с любыми проявлениями торговли людьми и эксплуатации со стороны администрации тюрьмы или других лиц лишенных свободы, лишенных свободы в пределах тюрьмы.

Ключевые слова: *торговля людьми; трудовая эксплуатация; пенитенциарная система; лишение свободы; оценка рисков и потребностей; Европейский суд по правам человека; Европейская конвенция о правах человека*

SERGEY GHAZINYAN – Combating Human Trafficking and Exploitation and Protection of Victims' Rights in the Penitentiary System. – The article aims to present the manifestations of human trafficking and exploitation in the penitentiary system, the mechanisms for identifying such cases, the scope of victims' rights and the obligations of the state.

Emphasizing the importance of prison work in terms of rehabilitation and resocialization of individuals, it was underlined that the state, in particular, the prison administration, must take all necessary steps to exclude human trafficking and exploitation, considering its manifestation as a failure to fulfil the obligations of the state and a gross violation of human rights.

As a result of the research, recommendations were presented aimed at addressing human trafficking and exploitation in the prison system. These include the introduction of a mechanism for identifying such cases, supporting and protecting victims, referrals and cooperation with other bodies, the inclusion of specific criteria for this issue in the general risk and needs assessment tool, etc.

The importance of combating any manifestation of human trafficking and exploitation by the prison administration or peers deprived of liberty within the prison was emphasized.

Key words: *human trafficking; labour exploitation; penitentiary system; deprivation of liberty; risk and needs assessment; European Court of Human Rights; European Convention on Human Rights*

Գրականության ցանկ

- «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ» (Նեկլսոն Մանդելայի կանոններ) (08.01.2006 թ.) («Azatutyunits zrkvats andznants het varvecoghutyan nvazaguyn standart kanonner» (Nelson Mandelayi kanonner)) <https://documents.un.org/doc/undoc/gen/n15/443/41/pdf/n1544341.pdf>
- «Հարկադիր աշխատանքի մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 29 կոնվենցիա (28.06.1930 թ.) ("Harkadir ashkhatanki masin" Ashkhatanki mijazgayin kazmakerput'yan tiv 29 konvencia) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=24578>
- ՄԱԿ համընդհանուր պարբերական վերանայման շրջանակներում Ռուսաստանի չորրորդ փուլի վերանայման համար ներկայացված փաստաթուղթը (MAK hamyndhanur parberakan veranayman shrjanaknerum Rusastani chorrord puli veranayman hamar nerkayatsvats pashtatugh) <https://uprdoc.ohchr.org/uprweb/downloadfile.aspx?filename=11913&file=EnglishTranslation>
- «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (16.05.2005թ.) <https://rm.coe.int/168008371d> (Mardkants trafikingi dem payqari masin" Evropayi khorhrdi konvencia (16.05.2005)).
- «Վերանայված Եվրոպական բանտային կանոններ» (01.08.2020թ.), ("Veranayvats Evropakan bantanayin kanonner") https://cdn.penalreform.org/wpcontent/uploads/2022/03/PRICoE_Short-guide-to-the-European-Prison-Rules.pdf

- «(Re)configuring the criminal justice response to human trafficking: a complex-systems perspective» (10.02.2017), Marcel van der Watt, Amanda van der Westhuizen
https://www.tandfonline.com/doi/pdf/10.1080/15614263.2017.1291560?casa_token=vFqgJkloQD0AAAAA:mruLuIrj_U7xuqQXghAwA68Z6oQTtGLGrC1PTwg9d0r6I5j6JJULnRxJNaMPjTxNBtat00T6vWNkw
- Armenia: Visit 2015 CPT/Inf (2016) 31 | Section: 15/37 | Date: 22/11/2016
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-arm-20151005-en-15>
- «Correctional Anti-Human Trafficking Initiative (CAHTI)» <https://nicic.gov/resources/resources-topics-and-roles/topics/correctional-anti-human-trafficking-initiative-cahti>
- «Experiencing human rights protections in prisons: The case of prison monitoring in Ireland» (07.10.2020), Sophie van der Valk, Mary Rogan
<https://journals.sagepub.com/doi/full/10.1177/1477370820960024>
- «Failing victims? Challenges of the police response to human trafficking» (31.08.2019), Amy Farrell, Meredith Dank, Ieke de Vries, Matthew Kafafian, Andrea Hughes, Sarah Lockwood
<https://onlinelibrary.wiley.com/doi/epdf/10.1111/1745-9133.12456>
- «Forced Labour in Russia and the Soviet Union. Continuity or Change?» (16.07.1992), Elzbieta Kaczynska <https://www.jstor.org/stable/43658105?seq=4>
- Greece: 2023 visit CPT/Inf(2024)21 | Section: 21/24 | Date: 15/03/2024
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-grc-20231120-en-21>
- «Guideline for Identifying Human Trafficking in the Norwegian Correctional Service» https://www.rosanorge.no/rosa-page-wp/wpcontent/uploads/2023/06/Veileder.pdf?fbclid=IwY2xjawIB7ntleHRUA2FibQIxMAABHV6myfhOFibxF26qYAyIpuuiE_WkzyyVH24Nh4hR14_UV_SPXCM4uBo3g_aem_FXVe4FeQSMirOuUd30j4pA
- Human Trafficking and the Emergence of the Non-Punishment Principle» (15.01.2016), Ryszard Wilson Piotrowicz, Liliana Sorrentino
<https://www.onlinelibrary.iihl.org/wpcontent/uploads/2020/05/2016-P1.pdf>
- «Human Trafficking in Correctional Institutions: A Survey of Correctional and Anti-Trafficking Leaders» (09.01.2022), Cynthia Fraga Rizo a, Christopher J. Wretmana,b, Jia Luo, Tonya B. Van Deinsea, Nicole Sullivan, Sarah M. Godoya, Erin A. Meehana, and Rebecca J. Macy
<https://www.tandfonline.com/doi/epdf/10.1080/23322705.2021.2011660?needAccess=true>
- Latvia: Visit 2007 CPT/Inf (2009) 35 | Section: 16/38 | Date: 15/12/2009
<https://hudoc.cpt.coe.int/eng?i=p-lva-20071127-en-16>
- Lithuania: Visit 2021 CPT/Inf (2023) 01 | Section: 23/33 | Date: 27/02/2023
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-ltu-20211210-en-23>
- «Modern Slavery Guidance» (March 2023)
https://assets.publishing.service.gov.uk/media/64492940529eda00123b0529/HMPPS_Modern_Slavery_Guidance_March_23_-_external_version.docx?utm_source=chatgpt.com
- Moldova: visit 2022 CPT/Inf (2023) 27 | Section: 12/16 | Date: 14/09/2023
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-mds-20221205-en-12>
- Montenegro: visit 2022 CPT/Inf (2023) 10 | Section: 14/24 | Date: 23/11/2022
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-mne-20220607-en-14>
- «National Monitoring Mechanisms: Strengthening the Action against Trafficking in Human Beings» (27.12.2023), Sergey Ghazinyan <https://journals.yasu.am/index.php/state-and-law/article/view/11789/9331>
- «Preventing Human Rights Violations in Places of Detention: A European Initiative» (03.03.2014), Timothy W. Harding, MD, Dominique Bertrand, MD, LLB <https://bpb-us-e1.wpmucdn.com/sites.harvard.edu/dist/f/680/files/2014/03/3-Harding.pdf>
- Rantsev v. Cyprus and Russia*, application no. 25965/04, 7 January 2010
<https://hudoc.echr.coe.int/eng?i=001-96549>
- Russian Federation: Visit 2012 CPT/Inf (2013) 41 | Section: 8/36 | Date: 17/12/2013
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-rus-20120521-en-8>
- Slovak Republic: Visit 2018 CPT/Inf (2019) 20 | Section: 20/39 | Date: 19/06/2019
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-svk-20180319-en-20>

- «Social Support, Dysfunctional Coping, and Community Reintegration as Predictors of PTSD Among Human Trafficking Survivors» (18.08.2018), David Okech, Nathan Hansen, Waylon Howard, John Kwasi Anarfi, Abigail C. Burns
https://www.researchgate.net/publication/326480880_Social_Support_Dysfunctional_Coping_and_Community_Reintegration_as_Predictors_of_PTSD_Among_Human_Trafficking_Survivors
- States' Obligations under Human Rights Law towards Victims of Trafficking in Human Beings: Positive Developments in Positive Obligations» (11.05.2012), Ryszard Piotrowicz
<https://academic.oup.com/ijrl/article-abstract/24/2/181/1538030>
- «Successes and Challenges in Implementing a Human Trafficking Screening Tool in a Local Detention Center» (31.12.2023) <https://journals.sagepub.com/doi/10.1177/19367244231219940>
- «The role of corrections in the fight against human trafficking» (26.03.2019), Rusty Ringler
<https://www.corrections1.com/corrections-training/articles/the-role-of-corrections-in-the-fight-against-human-trafficking-2gEqgDhroZIE6uNH/>
- «The role of corrections in the fight against human trafficking» (26.03.2019), Rusty Ringler
<https://www.corrections1.com/corrections-training/articles/the-role-of-corrections-in-the-fight-against-human-trafficking-2gEqgDhroZIE6uNH/>
- «The United Nations Convention against Corruption: Handbook on Anti-Corruption Measures in Prisons» (2017) https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/17-06140_HB_anti-corr_prisons_eBook.pdf
- «Trafficked Women in Prison: The Problem of Double Victimization» (09.04.2014), Carolina Villacampa, Nuria Torres
https://www.researchgate.net/publication/271738566_Trafficked_Women_in_Prison_The_Problem_of_Double_Victimisation
- Ukraine: Visit 2020 CPT/Inf (2020) 40 | Section: 7/13 | Date: 30/11/2020
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-ukr-20200804-en-7>
- Ukraine: visit 2023 CPT/Inf (2024) 20 | Section: 11/20 | Date: 27/03/2024
<https://hudoc.cpt.coe.int/?i=p-ukr-20231016-en-11>

**ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՄ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՊԱՇՏՊԱՆՎՈՂ
ՇԱՀԵՐԻՆ ՎՆԱՍԻ ՊԱՏՃԱՌՄԱՆ ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ՝ 
Երևանի պետական համալսարան

Քրեական պատասխանատվությունը բացառող ցանկացած հանգամանքի կիրառելիությունը փաստելու համար պետք է հաստատել այդ հանգամանքի իրավաչափության պայմանների առկայությունը: Հոդվածում հետազոտվում են հեղինակի կողմից առաջարկված, «Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը» վերտառությամբ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները:

Քրեական պատասխանատվությունը բացառող այս հանգամանքի առաջարկվող բովանդակության հետազոտման արդյունքում առանձնացվել են այդ հանգամանքի իրավաչափության հենյալ պայմանները, որոնց էությունն էլ հոդվածում առանձին մանրամասն հետազոտման է ենթարկվել:

- քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պետք է պատճառվի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս,
- վնասը պետք է պատճառվի օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի կողմից,
- վնասը պետք է պատճառվի հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում,
- պետք է բացակայեն այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները,
- պետք է պահպանված լինեն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս իրավաչափ վնասի պատճառման սահմանները:

Թվարկված բոլոր պայմանների միաժամանակյա առկայության պարագայում միայն կարելի է հաստատել քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի առկայությունը:

* **Գևորգ Բարսեղյան** – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, դասախոս

Геворг Барсегян – Аспирант кафедры уголовного права ЕГУ, преподаватель

Gevorg Barseghian – PhD Student at the Chair of Criminal law of YSU, Lecturer էլ. փոստ՝ gevorg.barseghyan@ysu.am <https://orcid.org/0000-0002-5642-7658>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 27.04.2025

Գրախոսվել է՝ 02.05.2025

Հաստատվել է՝ 25.06.2025

© The Author(s) 2025

Իրականացված հետազոտության արդյունքներով հոդվածում ներկայացվել են գիտագործնական արժեք ունեցող մի շարք առաջարկներ:

Բանալի բառեր – քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք, իրավաչափության պայման, իրավաչափ վնաս, օպերատիվ-հետախուզական միջոցառում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ, հանձնարարության սահմաններ, վնաս պատճառելու հետ չկապված միջոցներ, վնաս պատճառելու սահմաններ

a. Ներածություն

Քրեական պատասխանատվությունը բացառող ցանկացած հանգամանքի կիրառելիությունը փաստելու համար պետք է հաստատել դրա իրավաչափության պայմանների առկայությունը:

Սույն հոդվածում մենք դիտարկելու և հետազոտության առարկա ենք դարձնելու նախորդ աշխատանքներում¹ մեր կողմից առաջարկված՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները: Քրեական պատասխանատվությունը բացառող առաջարկվող հանգամանքն ունի հետևյալ բովանդակությունը. **«Հոդված 41. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը**

1. Քրեական պատասխանատվության ենթակա չէ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում, եթե այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները բացակայել են:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս մարդու կյանքի կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

¹ Առավել մանրամասն տե՛ս **Բարսեղյան Գ.** Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները, Դատական իշխանություն, № 1-3 (307-309), 2025, էջ 100-118: https://www.researchgate.net/publication/391804425_Operativ-hetaxuzakan_gorcuneutyun_irakanacnog_anjanc_kreakan_patasxanatvutyun_bacarog_hangamankneri_ardi_himnaxndirner_ev_zargacman_mitummer_Current_Issues_and_Development_Trends_of_Circumstances_Excl

3. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս սույն օրենսգրքով նախատեսված հանցագործության պրովոկացիա կատարած անձը ենթակա է քրեական պատասխանատվության ընդհանուր հիմունքներով, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցագործության պրովոկացիան դրսևորվել է անձին իր դիտավորության մեջ ընդգրկված նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի համեմատությամբ ավելի թեթև հանցանքի կատարմանը սաղորդելով:

4. Սույն հոդվածի իմաստով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ է համարվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակիցը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձը»:

Քրեական պատասխանատվությունը բացառող այս հանգամանքի բովանդակության հետազոտման արդյունքում կարելի է առանձնացնել դրա իրավաչափության հետևյալ պայմանները՝

- քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս,

- վնասը պետք է պատճառվի օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի կողմից,

- վնասը պետք է պատճառվի հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում,

- պետք է բացակայեն այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները,

- պետք է պահպանված լինեն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս իրավաչափ վնասի պատճառման սահմանները:

Վերոթվարկյալ բոլոր պայմանների միաժամանակյա առկայության պարագայում միայն կարելի է հաստատել քննարկվող հանգամանքի առկայությունը:

Բ. Իրավաչափության պայմանների էությունը

Քրեական պատասխանատվությունը բացառող հետազոտվող հանգամանքի էությունը բացահայտելու նպատակով անհրաժեշտ ենք համարում ուսումնասիրման առարկա դարձնել դրա իրավաչափության պայմաններն առանձին-առանձին:

1. *Իրավաչափության առաջին պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս:*

Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի² (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական և հասարակական անվտանգությունը հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից գաղտնի և բացահայտ մեթոդների ու միջոցների կիրառմամբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստումը, իրականացումը և արդյունքների ամրագրումն ու իրացումն է»:

Հիշատակված սահմանման բովանդակության ուսումնասիրումից պարզ է դառնում, որ Օրենքը օպերատիվ-հետախուզական գործունեությունն ընկալում է որպես որոշակի նպատակով կոնկրետ մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստում, իրականացում և արդյունքների ամրագրում ու իրացում: Ասվածից հետևում է, որ օպերատիվ-հետախուզական գործունեությունը և օպերատիվ-հետախուզական միջոցառումը որպես երևույթներ գտնվում են ամբողջի և մասի հարաբերակցության մեջ, որտեղ ամբողջը օպերատիվ-հետախուզական գործունեությունն է, իսկ մասը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումը: Շարադրվածից հետևում է նաև, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս կարող է պատճառվել միայն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս, քանզի օպերատիվ-հետախուզական գործունեության՝ որպես երևույթի արտահայտման ձևը օպերատիվ-հետախուզական միջոցառումն է:

Իրավաչափության առաջին պայմանի համատեքստում հարկ ենք համարում առանձին քննարկման առարկա դարձնել «վնաս» հասկացության քրեաիրավական ընկալումը: Այս հասկացությունը, մեր կարծիքով, չունի կոնկրետ ճյուղային պատկանելություն և օգտագործվում է մեծաքանակ իրավական ակտերում, անգամ Սահմանադրությունում:

Առավել լայն կիրառություն քննարկվող հասկացությունն ունի քաղաքացիական իրավունքում. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն³ է սահմանում վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունները և առանձնացնում վնասի տեսակները: «Վնաս» հասկացության քաղաքացիաիրավական ասպեկտների հետազոտմանը նվիրված են ատենախոսական արժեքավոր աշխատանքներ և մենագրություններ⁴:

² Տե՛ս ՀՀ օրենքը Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին: Ընդունվել է 22.10.2007, ուժի մեջ է մտել 08.12.2007, ՀՕ-223-Ն: Գործում է:

³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, համարը՝ ՀՕ-239, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ուժի մեջ է մտել 01.01.1999: Գործում է:

⁴ Տե՛ս **Богданов, О. В.** Вред – как условие гражданско-правовой ответственности: автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 2001: Տե՛ս նաև **Романов, В. С.** Моральный вред как институт гражданского права: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2006: Տե՛ս նաև **Բերմեյան, Գ.** Արտապայմանագրային պարտավորություններ, ԵՊՀ իրատարակչություն, Եր., 2009:

Քրեական իրավունքի տեսությունում ևս «վնաս» հասկացությունը գիտական հետազոտման առարկա է⁵: Քրեական իրավունքում «վնաս» հասկացությունն առաջարկվում է ամենաընդհանրական ձևով ընկալել որպես արարքի կատարման հետևանքով առաջացած օբյեկտիվ իրականության այնպիսի փոփոխություններ, որոնք արտահայտվում են քրեական օրենքով պաշտպանվող սոցիալական կապերի ոչնչացմամբ կամ խեղումով⁶:

Մենք կհստակ ենք քրեական իրավունքի տեսությունում արտահայտված այն տեսակետը⁷, ըստ որի՝ «վնասը» քրեական իրավունքում միայն բացասական իմաստով ընկալելը ճիշտ չէ: Տարբեր հանգամանքների և գործոնների (այդ թվում՝ պետության կամ հասարակության օրինական շահերի) հաշվառմամբ՝ վնասի բովանդակությունը կարող է նաև դրականորեն ընկալվել: Վնասի սոցիալական էությամբ և բնույթով պայմանավորված՝ այն քրեական իրավունքում կարող է դասակարգվել հանցավորի և ոչ հանցավորի:

Քրեական իրավունքի տեսությունում «հանցավոր վնաս» հասկացությունն օգտագործվում է հանցագործության օբյեկտը կամ հանցակազմի հատկանիշ հանդիսացող հետևանքը նկարագրելիս: Այսպես, քրեական իրավունքի տեսությունում համընդհանուր ճանաչում է ստացել այն կարծիքը, համաձայն որի՝ հանցագործության օբյեկտ են համարվում հասարակական այն հարաբերությունները, որոնց դեմ ուղղվում և որոնց վնաս են հասցնում հանցագործությունները⁸, կամ որոնց վնաս պատճառելու հնարավորություն են ստեղծում⁹: Հանցագործության հետևանքների վերաբերյալ քրեական իրավունքի տեսությունում համընդհանուր ճանաչում է ստացել այն տեսակետը, ըստ որի՝ յուրաքանչյուր հանցավոր արարք ունի ձգտում է քրեական օրենքով պահպանվող հասարակական հարաբերությունների դեմ, այսինքն՝ վնաս է պատճառում դրանց և որոշակի փոփոխություններ առաջացնում քրեական օրենքով պահպանվող օբյեկտներում: Այդ փոփոխություններն էլ ամենաընդհանուր իմաստով անվանվում են հանցավոր հետևանքներ: Հանցավոր հետևանքները հասկացվում են երկու իմաստով՝ ա) հետևանքներ՝ որպես հանցագործության օբյեկտին հասցվող վնաս, և բ) հետևանքներ՝ որպես հանցագործության առարկային հասցվող

⁵ Տե՛ս **Землюков, С. В.** Преступный вред: теория, законодательство, практика: дис. ... д-ра юрид. наук. М., 1994:

⁶ Տե՛ս **Шкабин, Г.С.** Уголовно-правовое обеспечение оперативно-разыскной деятельности: теоретико-прикладные и законодательные аспекты. Диссертация на соискание учёной степени доктора юридических наук, М., 2018, էջ 69:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 69:

⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), խմբագրությամբ՝ ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյանի, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 113:

⁹ Տե՛ս Уголовное право. Общая и Особенная части: учеб. для вузов / Н. И. Ветров, Г. В. Дашков, В. И. Динека и др.; под ред. Н. Г. Кадникова. М., 2006, էջ 116:

վնաս: Հենց վերջինս էլ հանցակազմի օբյեկտիվ կողմի ֆակտուալտիվ հատկանիշ հանդիսացող հանրորեն վտանգավոր հետևանքն է¹⁰:

Ոչ հանցավոր վնասը լայն իմաստով արտաքինից հանցագործությանը (հանցավոր վնասին) նմանություն ունի, սակայն այդպիսին չի համարվում հակաիրավականության հատկանիշի բացակայության պատճառով: Հետագոտվող վնասի իրավական էությունը երկակի բնույթ ունի: Հիմք ընդունելով վնասի սոցիալական և ձևական չափանիշները՝ կարելի է առանձնացնել ոչ հանցավոր վնասի երկու խումբ՝ ձևականորեն ոչ հանցավոր վնաս և իրավաչափ վնաս:

Ձևականորեն ոչ հանցավոր վնասը բնութսով մոտ է հանցավոր վնասին, սակայն ձևականորեն ամրագրված որևէ հանգամանքի առկայության կամ բացակայության հիմքով արարքը հանցանք չէ, հետևաբար՝ վնասը հանցավոր չի համարվում: Այսպես, քրեական պատասխանատվության տարիքի չհասած անձի կողմից քրեական օրենքով արգելված արարք կատարելու դեպքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասը հանցագործության սուբյեկտի որպես հանցակազմի պարտադիր տարրի բացակայության հիմքով ձևականորեն չի կարող համարվել հանցավոր: Շարադրվածը վերաբերում է նաև անմեղսունակության վիճակում կամ առանց մեղքի կամ նյարդահոգեկան ծանրաբեռնվածության վիճակում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելուն:

Վնասի հանցավորությունը ձևականորեն բացառող հանգամանքներ են ՀՀ քրեական օրենսգրքի¹¹ 16-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումները (նվազ վտանգավորության պատճառով էական վնաս պատճառած չլինելու համատեքստում), հանցագործությունից կամովին հրաժարվելու վերաբերյալ նորմը և այլ կարգավորումներ:

Քրեական օրենսգրքում տեղ գտած կարգավորումների ուժով (ձևական չափանիշ) նման վնասը հանցավոր չի համարվում: Վերը թվարկված հանգամանքների դեպքում ընդունված է խոսել հանցագործության բացակայության կամ քրեական պատասխանատվությունից ազատող հանգամանքների մասին (բացառությամբ անմեղսունակության, առանց մեղքի վնաս պատճառելու և նյարդահոգեկան ծանրաբեռնվածության վիճակում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու դեպքերի, որոնք ՀՀ քրեական օրենսգրքով համարվում են քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքներ):

Իրավաչափ վնասը, ի տարբերություն ձևականորեն ոչ հանցավոր վնասի, ունի դրական նշանակություն: Սոցիալական բովանդակության դիտանկյունից

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), էջ 140:

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքը: Ընդունվել է 05.05.2021, ուժի մեջ է մտել 01.07.2022, ՀՕ-199-Ն: Գործում է:

այն ընդունված է անվանել սոցիալապես թույլատրելի կամ հանրորեն օգտակար¹²: Մենք կհստակ ենք քրեական իրավունքի տեսությունում արտահայտված այն տեսակետը, ըստ որի՝ վնասի թույլատրելիության հիմքում ընկած է սոցիալմի պատկերացումը այդպիսի արարքների հարկադրության մասին¹³: Օգտակարության էությունը, ըստ քրեական իրավունքի տեսությունում տեղ գտած տեսակետի, հասարակության համար կոնկրետ իրադրությունում այս կամ այն արարքների ցանկալիությունն է¹⁴: Այս չափանիշից ելնելով՝ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը համապատասխան պայմանների առկայության դեպքում պետք է դիտարկել որպես իրավաչափ վնաս:

Իրավաչափ վնասի քրեաիրավական էության հետազոտման համատեքստում ընդգծման է արժանի առկա տարիմաստությունը (պարադոքսալությունը). միևնույն բառակապակցության մեջ տեղ են գտել երկու հակադիր հասկացություններ: Առաջինը դրական կամ հասարակության համար թույլատրելի (իրավաչափ) արարքն է, իսկ երկրորդը՝ քրեական օրենքով պահպանվող հասարակական հարաբերությունների դեմ ոսնձգող և դրանցում փոփոխություններ առաջացնող վնասը: Իրավաչափ վնասի՝ արտաքուստ հանցագործությանը նմանության մասին մասնագիտական գրականությունում բազմիցս է խոսվել¹⁵: Ասվածի մասին է վկայում այն հանգամանքը, որ ՀՀ քրեական օրենսգրքի՝ «Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները» վերաբերությամբ 6-րդ գլխում տեղ գտած բոլոր հանգամանքները (բացառությամբ՝ անմեղսունակության և առանց մեղքի վնաս պատճառելու վերաբերյալ նորմերի) սկսվում են «Քրեական պատասխանատվության ենթակա չէ» բառերով, ինչով էլ հենց ընդգծվում է հակաիրավականության՝ որպես հանցանքի պարտադիր հատկանիշի բացակայությունը:

Քննարկվող իրավաչափության պայմանի էական հանգամանքներից է նաև այն իրադրությունը, որի պայմաններում ՕՀՄ իրականացման ժամանակ քրեա-

¹² Տե՛ս **Дмитренко, А. П.** Институт обстоятельств, исключающих преступность деяния, в уголовном праве России: основы теории, законодательной регламентации и правоприменения: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 2010, էջ 12:

¹³ Տե՛ս **Михайлов, В. И.** Отраслевая принадлежность норм главы 8 УК, էջեր 131–133:

¹⁴ Տե՛ս **Кудрявцев, В. Н.** Правовое поведение: норма и патология. М., 1982, էջ 94:

¹⁵ Տե՛ս **Келина, С. Г.** Обстоятельства, исключающие преступность деяния // Уголовное право. 1999, № 3, էջ 4: Տե՛ս նաև **Милюков, С. Ф.** Российское уголовное законодательство: опыт критического анализа. СПб., 2000, էջ 91: Տե՛ս նաև **Орешкина, Т.** Постановление Пленума Верховного Суда РФ от 27 сентября 2012 г. № 19 «О применении судами законодательства о необходимой обороне и причинении вреда при задержании лица, совершившего преступление» // Уголовное право. 2013, № 2, էջեր 23–28: Տե՛ս նաև **Блинные, В. А.** Обстоятельства, исключающие преступность деяния, в уголовном праве России. М., 2014, էջ 21:

կան օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում: Արարքին քրեաիրավական ստույգ գնահատական տալու տեսանկյունից այն ունի կարևոր նշանակություն:

Իրադրության էության կարևորությունն ու առանձնահատկությունը համապարփակ բացահայտելու և այն ներկայացնելու համար առաջարկում ենք ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու իրադրության առանձնահատկությունները հետազոտման առարկա դարձնել «Օպերատիվ ներդրում» օպերատիվ-հետախուզական միջոցառման համատեքստում: Այս ՕՀՄ առանձնացումը պայմանավորված է նաև օպերատիվ ներդրման իրադրության տևական և էքստրեմալ բնույթով: «Օպերատիվ ներդրում» ՕՀՄ իրականացնելու բարդությունները պայմանավորված են օբյեկտիվ և սուբյեկտիվ մի շարք գործոններով, որոնք համապարփակ վերլուծված են ակնանավոր իրավագետ, պրոֆեսոր Գենադի Շկաբինի աշխատություններում¹⁶:

Հետազոտական հետաքրքրություն ներկայացնող առաջին հանգամանքը իրադրության դինամիզմն է, տեղեկության և ժամանակի սղությունը: Իրավիճակը, որում հայտնվում է ներդրված անձը, զարգանում է այնքան արագ, որ հաճախ հնարավոր չէ կանխատեսել դրա հետագա զարգացումը: Ինֆորմացիայի արագացված մշակման անհրաժեշտությունը հանգեցնում է նրան, որ հնարավոր վարքագծի ընտրության վերաբերյալ կայացված որոշումները երբեմն կարող են լինել ոչ ճիշտ կամ անգամ հակաօրինական: Երկրորդը օպերատիվ ներդրում ՕՀՄ իրականացնող անձի հոգեբանական բարձր լարվածությունն է: Այս անձանց համար օպերատիվ ներդրումը, առաջին հերթին, նշանակում է հանցավոր խմբում ադապտացիա, որի ներքո լայն իմաստով հասկացվում են խմբի և անհատի փոխհարաբերությունների ձևավորում, գործունեության նպատակներին և արժեքային կողմնորոշումներին մոտարկում, ավանդույթների և նորմերի յուրացում, միկրոմիջավայրի դերային կառուցվածքի մեջ ներգրավում¹⁷: Այսպիսի ադապտացիան ներդրված անձի համար վարքագծի արտաքին դրսևորումն է միայն: Նրա անձը, կարծես, երկատվում է, քանզի նա մշտապես գտնվում է մի կողմից խմբի ճնշման տակ, իսկ մյուս կողմից՝ հոգեբանական մեկուսացման մեջ: Քրեական իրավունքի գիտությունում տեսակետ է արտահայտվել այն մասին, որ նման դեպքերում անգամ կարող է առաջանալ առանց մեղքի վնաս պատճառելու իրավիճակ¹⁸:

¹⁶ Տե՛ս **Шкабин, Г.С.** Уголовно-правовое обеспечение оперативного внедрения: монография. М.: ИД «Юриспруденция», 2018, էջեր 129-130, **նույնի՝** Уголовно-правовое обеспечение оперативно-разыскной деятельности: теоретико-прикладные и законодательные аспекты. Диссертация..., էջեր 275-277:

¹⁷ Տե՛ս **Кожухов, Н.И.** Словарь-справочник по психологии. М., 1996, էջ 5:

¹⁸ Տե՛ս **Плешаков, А.М.** Невиновное причинение вреда при оперативном внедрении (к постановке проблемы) // Проблемы применения уголовного законодательства при осуществлении оперативно-разыскной деятельности, էջեր 140-148:

Հուզական դիտանկյունից բավականին բարդ է տևական ժամանակ ցուցադրել շինծու լոյալություն, խմբի անդամների և նրանց արարքների նկատմամբ արտաքին բարյացակամություն: Հոգեբանական ծանրաբեռնվածության իրավիճակը պայմանավորված է բացահայտվելու հնարավորության վտանգով և սեփական անվտանգության համար վախով, քանզի ձախողման դեպքում ներդրված անձի պաշտպանությունը իրավապահ մարմինների կողմից ոչ միայն քիչ հավանական է, այլև գործնականում անհնար:

Գաղտնի գործակալների (ՕՀԳ իրականացնող անձանց) սպանությունների վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել համացանցում, այդ թվում՝ ՋԼՄ հրապարակումներում: Որպես օրինակ կարող ենք հիշատակել BBC NEWS-ի հրապարակած հոդվածները՝ բավականին հնչեղ խորագրերով՝ «Իսլամական պետության զինյալները ցուցադրել են ԱԴԾ գործակալի նկատմամբ հաշվեհարդարի տեսանյութը»¹⁹, «Իսլամական պետության զինյալները երկու անձի են սպանել Ռուսաստանի օգտին լրտեսության համար»²⁰:

Գաղտնի գործակալների՝ առաջադրանքների կատարման ժամանակ սպանության վերաբերյալ պաշտոնական տվյալներ են հրապարակված նաև ԱՄՆ Հետաքննությունների դաշնային բյուրոյի (FBI) պաշտոնական կայքում²¹: Որպես օրինակ կարող ենք նշել Հետաքննությունների դաշնային բյուրոյի հատուկ գործակալ (FBI-ի բառերով՝ FBI Family member) Չարլզ Լեո Ռիդի՝ գաղտնի հետաքննության ժամանակ սպանության մասին:

Բերված օրինակները վկայում են ՕՀԳ իրականացնող անձին սպառնացող բարձր վտանգի մասին: Ստեղծված պայմաններում վարքագծի բնույթը պայմանավորված է անձի հոգեկան կայունությամբ, մոտիվացիայով, կամքով, հավասարակշռվածությամբ, կերպարի երկարատև պահպանման ունակությամբ: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ սոցիալական այն միկրոմիջավայրը, որտեղ առաջադրանքը պետք է կատարվի, հանցավոր է, և դրան հատուկ է հակաիրավական վարքագիծը: Անձը, հայտնվելով օպերատիվ ներդրման օբյեկտում, պետք է դրսևորի կոնկրետ վարքագիծ: Այլ խոսքերով՝ նրա արարքները պետք է համապատասխանեն խմբի ուղղվածությանը և կառուցվեն խմբում ընդունված նորմերի վրա:

Հակաիրավական վարքագիծը ենթադրում է իրավախախտումների կամ հանցանքների կատարում կամ դրանք կատարելու պատրաստակամություն: Ինչպես նշվում է քննարկվող թեմային նվիրված մասնագիտական գրականությամբ՝

¹⁹ St' u BBC. Русская служба: Боевики ИГ показали видео расправы над «агентом ФСБ». https://www.bbc.com/russian/news/2015/12/151202_isis_russia_fsb_agent_video (10.02.2025):

²⁰ St' u BBC. Русская служба: Боевики ИГ убили двоих "за шпионаж в пользу России" https://www.bbc.com/russian/international/2015/01/150113_isis_video_killing (10.02.2025):

²¹ St' u FBI: Wall of Honor. We will never forget our fallen FBI Family members ... <https://www.fbi.gov/history/wall-of-honor> (10.02.2025):

յունում, ներդրված անձը ինչ-որ պահի ստիպված է լինում ցուցադրել իր ձեռն-հասությունը, անձնական, բացառված չէ, ուժային որակները և գործառական ունակությունները²²:

Հարկ է նաև հաշվի առնել խմբի անդամների կողմից պրովոկացիա իրականացնելու հնարավորությունը: Լիովին հնարավոր է «գործի մեջ» անձի ստուգումը՝ պարզելու՝ ունակ է նա արդյոք կոնկրետ հանցանք կատարելու: Որոշ հետազոտողների կարծիքով՝ հանցավոր խմբի յուրաքանչյուր նոր անդամ ստուգվում է: Ստուգման էությունը տվյալ անդամին հանցանք կատարելու հանձնարարությունն է կամ նրան հանցագործության մեջ ներգրավելը²³: Սավաճն առավել պատկերավոր ընկալելու համար քննարկենք պրոֆեսոր Շկաբինի բերած բավականին ցայտուն օրինակը (փաստական տվյալները փոփոխված են), որը, պրոֆեսորի խոսքերով, նրան հայտնի էր դարձել իր հետազոտության շրջանակներում իրականացված հարցազրույցից: Այսպես, իրավապահ մարմնի աշխատակից Կ.-ն ներդրվել էր զենքի իրացման մեջ կասկածվող անձանց կազմակերպված խմբում՝ որպես խոշոր խմբաքանակի պոտենցիալ գնորդ: «Վաճառող» կողմը չէր շտապել գործարք կնքել և բազմաթիվ հանդիպումների ընթացքում փորձել էր ամեն կերպ ստուգել «հաճախորդի» հուսալիությունը: Ամեն ինչ սկսվել էր մանրամասն հարցումներից և տեղեկություն ստանալուց, որը կարող էր հաստատվել: Սակայն ստուգման հաջորդ փուլում՝ սրճարանում տեղի ունեցած հանդիպումներից մեկի ժամանակ, վաճառողների ներկայացուցիչներն ակնհայտորեն կոնֆլիկտ էին հրահրել այլ այցելուների հետ: Ծեծկոտուք էր սկսվել, որի մեջ ներքաշվել էր նաև ներդրված աշխատակիցը: Լեզենդը պահպանելու և իր անվտանգությունն ու օպերացիայի հաջողությունն ապահովելու համար նա ստիպված էր եղել կիրառել պայքարի հատուկ տեխնիկա: Արդյունքում նա (ներդրված անձը) միջին ծանրության վնաս էր հասցրել սրճարանի այցելուներից մեկի առողջությանը: Քրեական գործի քննության ընթացքում տվյալ դեպքը չի արտացոլվել, և մարմնական վնասվածք հասցնելու փաստն իրավական գնահատական չի ստացել²⁴:

Բերված օրինակից ակնհայտ է, որ ներդրված անձը նման դեպքերում հավասարակշռում է «թույլատրելի խորամանկության և արգելված խաբեության» միջև²⁵, այսինքն՝ այն արարքների, որոնք նա պետք է երբեք չկատարի: Օպերա-

²² Տե՛ս **Мухачев, В.А., Тарсуков, К.М.** Приоритетные направления и методика исследования проблем оперативного внедрения // Правовые, научные и организационно-тактические проблемы оперативно-розыскной деятельности в современных условиях. М., 1997, էջեր 72–73:

²³ Տե՛ս **Антонов, В.М., Кувалдин, В.П.** Противодействие преступных структур органам внутренних дел и меры по его нейтрализации: лекция. М., 1997, էջեր 23–24:

²⁴ Տե՛ս **Шкабин, Г.С.** Уголовно-правовое обеспечение оперативного внедрения: монография, էջեր 132–133:

²⁵ Տե՛ս **Кваша, Ю.Ф., Сурков, К.В., Васильев, Н.Н.** Законодательные основы оперативно-розыскной деятельности: курс лекций / под общей ред. Ю.Ф. Кваши. М., 2005, էջ 699:

տիվ ներդրման իրադրության էքստրեմալ բնույթը և քրեաիրավական պաշտպանության օբյեկտներին վնաս պատճառող արարքների հարկադրությունը պահանջում են քրեաիրավական արձագանքման մեխանիզմներ:

Մասնագիտական գրականության մեջ առկա են օպերատիվ-հետախուզական գործունեության դեպքում վնաս պատճառելուն հարկադրման սահմանումներ: Օրինակ՝ Վագինը հարկադիր է համարում վնաս պատճառելը, երբ այլ միջոցներով օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակների իրականացումը և խնդիրների լուծումը կոնկրետ պայմաններում հնարավոր չէ իրագործել²⁶: Հեղինակը այդ իրավիճակների շարքին է դասում նաև այն օբյեկտիվ հանգամանքները, որոնք օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնող անձին դնում են այնպիսի պայմաններում, երբ նա վնաս է պատճառում ավելի ծանր հետևանքները կանխելու նպատակով, եթե այլ միջոցներով (արարքներով) դրանք կանխելը անհնար է կամ խիստ դժվար²⁷:

«Հարկադիր» և «հարկադրություն» եզրույթների բառարանային բացատրություններում ընդգծված է այս երևույթների ոչ կամավոր, ստիպողաբար, պարտադրված լինելու հանգամանքը²⁸: Տրամաբանորեն առաջին հայացքից տարօրինակ իրավիճակ է առաջանում: Ստացվում է, որ, մի կողմից, անձը ինքնակամ ներդրվում է հանցավոր կազմակերպությունում՝ նախապես ենթադրելով, որ, հնարավոր է, ստիպված լինի հանցանք կատարել, այլ խոսքերով՝ ինքն է դնում իրեն հանցավոր վիճակում: Իսկ մյուս կողմից՝ մենք խոսում ենք վնասի՝ արտաքին հանգամանքներով պայմանավորված ոչ կամավոր պատճառման մասին:

Բանն այն է, որ անմիջական վտանգի վիճակն առաջանում է միջնորդավորված կերպով՝ վնաս պատճառելու պահին կամ անմիջապես դրանից առաջ: Այսպիսի իրավիճակը ՕՀՄ պլանավորելիս պետք է դիտարկվի որպես ՕՀՄ հնարավոր զարգացման տարբերակ: Այսպես կոչված՝ հարկադրող հանգամանքները կարող են կանխատեսվել, և եթե դրված նպատակին հասնելու համար չկան օրինական այլ միջոցներ, ապա ներդրված անձը պետք է ստանա թույլատրելի վարքագծի վերաբերյալ հրահանգներ: Հարկադրված վնաս պատճառելու իրադրությունը նշանակում է, որ օրենքով պաշտպանվող շահերի պաշտպանությանն ուղղված արարքները անխուսափելիորեն անհրաժեշտ են տվյալ պահին և տվյալ վիճակում:

Հարկ է նկատել, որ հարկադրության հատկանիշը բնութագրական է քրեական պատասխանատվությունը բացառող այլ հանգամանքների ևս: Քրեական

²⁶ Տե՛ս **Варин, О.А.** Конституционные проблемы оперативно-розыскной деятельности (научный доклад) // Конституционно-правовые проблемы оперативно-розыскной деятельности: сборник материалов Всероссийского круглого стола (3 ноября 2011 г.). СПб., 2012:

²⁷ Տե՛ս նույն տեղը:

²⁸ Տե՛ս **Աղայան, Է.** Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Եր., 1976, հատոր 1, էջ 845:

իրավունքում արտահայտված տեսակներից մեկի համաձայն՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների իրավաչափության համար հարկադրությունը ընդհանուր պայման է²⁹:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների դեպքում, պայմանավորված դրանց էության և բնույթով, հարկադրության վիճակ և դրանից բխող վնաս պատճառելու անհրաժեշտություն կարող են առաջանալ տարբեր գործոնների և հանգամանքների ազդեցությամբ: Օրինակ, օպերատիվ ներդրման դեպքում, հաշվի առնելով հարկադրության վիճակը, պատճառվող վնասը կարելի է տարբերակել երկու տեսակի՝ օժանդակող և ուղեկցող:

Օժանդակող է համարվում այն վնասը, որն ուղղված է ՕՀՄ իրականացման ապահովմանը: Օպերատիվ ներդրման դեպքում այն կարող է պայմանավորված լինել երկու հանգամանքով:

1) *Ներդրվող անձի համապատասխան կերպարի ստեղծման անհրաժեշտություն*: Հանցավոր խմբերը, որպես կանոն, ունեն փակ և քողարկված բնույթ, հետևաբար այդտեղ մուտք կարող են գործել միայն ստուգված մարդիկ՝ բարեկամներ, ծանոթներ և այլք, որոնք ևս հանցավոր կենսակերպ ունեն: Կոնկրետ դեպքում հանցավոր խումբ մուտք գործելու՝ հանցանք կատարելու հետ չկապված եղանակների բացակայության դեպքում, մեր կարծիքով, ՕՀԳ իրականացնող անձինք հանցավոր խումբ մուտք գործելու նպատակով կարող են կատարել քրեաիրավական պաշտպանության օբյեկտներին վնաս պատճառող արարք:

Այս դեպքում վնաս պատճառելը պայմանավորված է հանցավոր խումբ մուտք գործելու անհրաժեշտությամբ: Անձը կարող է կատարել նույնիսկ մի քանի նման արարք, որպեսզի իր համար ստեղծի համապատասխան կերպար: Այդ արարքները կարող են տարաբնույթ լինել՝ գողություն, խարդախություն, թմրամիջոցների կամ զենքի ապօրինի շրջանառություն և այլն: Ընդ որում, այդ արարքները հստակորեն (ցուցադրաբար) կատարվում են օպերատիվ հետաքրքրության օբյեկտի համար՝ նրա ուշադրությունը գրավելու և նույնիսկ հետաքրքրելու համար:

Քննարկվող վնասի պատճառման օրինակներ կան ինչպես գիտական աղբյուրներում, այնպես էլ դատական պրակտիկայում: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության վերաբերյալ գործերով բնութագրական է դարձել իրավիճակը, երբ օպերատիվ ներդրմանը նախորդում կամ դրան զուգահեռ կատարվում է նաև վերահսկելի գնում ՕՀՄ:

2) *Ներդրված անձի ստեղծած կերպարի պահպանման անհրաժեշտություն*: Այսպիսի իրավիճակը հնարավոր է, երբ անձն արդեն հանցավոր խմբի ներսում է, և հիմքեր կան կարծելու, որ այդտեղ նրա հետագա գործունեությունը թույլ կտա հասնել ՕՀԳ նպատակներին: Այս փուլում ներդրված անձի կողմից հանցանք կատարելը պայմանավորված է իր անձի կամ իրական նպատակների

²⁹ См. у Баулин, Ю.В. Право граждан на задержание преступника. Харьков, 1986, էջ 103:

բացահայտումը կանխելու անհրաժեշտությամբ: Դրանք կարող են լինել անձր հաստատող կեղծ փաստաթղթեր պատրաստելը, թմրամիջոցների կամ զենքի ապօրինի ձեռքբերումը շարունակելը կամ այլ արարքներ կատարելը՝ սեփական մտադրությունների «խսկությունը» հաստատելու նպատակով:

Վնասի երկրորդ տեսակը ուղեկցողն է, որը պատճառվում է հենց ՕՀՄ իրականացմամբ: Օպերատիվ ներդրման դեպքում նման վնասը այն արարքների կատարմանը մասնակցելն է, որոնց առնչությամբ իրականացվում է ՕՀՄ: Սա հնարավոր է այն դեպքում, երբ ներդրված անձն արդեն գտնվում է օպերատիվ ներդրման օբյեկտում և կատարում է հանցավոր կազմակերպության պլանից կամ դերաբաշխումից բխող արարքներ: Այս արարքները, մեր կարծիքով, կարող են կատարվել տեղեկություն ստանալու նպատակով, որը կարող է քրեաիրավական, քրեադատավարական կամ օպերատիվ էական նշանակություն ունենալ: Նման տեղեկությունը կարող է վերաբերել նախապատրաստվող կամ կատարվող հանցանքի, հանցավորի կազմակերպության ղեկավարի/ղեկավարների, անդամների մասին տվյալներին: Ամեն դեպքում այդ տվյալները պետք է ձեռք բերվեն հանցագործության կանխման, բացահայտման կամ ավելի ծանր հետևանքների կանխման նպատակով: Նման դեպքում ներդրված անձը կարող է ինքնակամ ցանկություն հայտնել անձամբ կամ խմբի կազմում «հանցանք» կատարելու, եթե դա նրան ավելի կմոտեցնի դրված նպատակի իրականացմանը: Օրինակ՝ մարդկանց առևանգմամբ և նրանց կամ նրանց օրգանների թրաֆիքինգով զբաղվող հանցավոր կազմակերպությունում ներդրված անձը հանցավոր կազմակերպության ղեկավարի վերաբերյալ տվյալներ հավաքելու, այդ թվում՝ նրան տեսնելու, հնարավորության դեպքում լուսանկարելու նպատակով կազմակերպության անդամների հետ մասնակցում է մեքենա և հոգեներգործուն թմրեցնող նյութեր հափշտակելուն: Ընդ որում, ակնկալվող տեղեկությունը ստանալու և հանցավոր կազմակերպության գործունեությունը խափանելու այլ հնարավորությունները բացակայում են: Բնականաբար, նման արարքները չեն կարող քրեական պատասխանատվության հանգեցնել, քանզի անձն իրավաչափորեն գործել է հարկադրության իրադրությունում:

Պետք է նկատի ունենալ, որ օպերատիվ-հետախուզական տարբեր միջոցառումների իրականացման պարագայում նույն վնասը մի դեպքում կարող է լինել օժանդակող, մեկ այլ դեպքում՝ ուղեկցող: Ենթադրենք, որ զենքի ապօրինի վաճառքով զբաղվող հանցավոր կազմակերպությունում անձի ներդրման համար կատարվում է զենքի վերահսկելի գնում: Այս դեպքում օպերատիվ ներդրում օպերատիվ-հետախուզական միջոցառման առնչությամբ զենքի ապօրինի գնումը օժանդակող է, քանի որ այն նպաստում է անձի՝ հանցավոր կազմակերպություն մուտք գործելուն, իսկ ահա վերահսկելի գնում օպերատիվ-հետախուզական միջոցառման առնչությամբ զենքի ապօրինի գնումը ուղեկցող վնաս է, քանի որ վերահսկելի գնման էությունը հենց այդպիսի արարքներն են, և դրանով իսկ իրականացվում է վերահսկելի գնում ՕՀՄ-ի նպատակը:

Այսպիսով, օպերատիվ ներդրման դեպքում վնաս պատճառելու իրադրությունը բնութագրվում է, մի կողմից, պաշտպանվող շահերի համար տարատեսակ վտանգների գոյությամբ և իրական նպատակը թաքցնելու անհրաժեշտությամբ՝ իր և այլ անձանց նկատմամբ հաշվեհարդարի սպառնալիքի ներքո, մյուս կողմից՝ դրված նպատակներին հասնելու և համապատասխան խնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Այնուամենայնիվ, վնաս պատճառելու իրադրությունն ինքնին չի կարող միակ հիմնավորումը լինել արարքի հանրային օգտակարության կամ հակաիրավականության գնահատման համար: Ամենից առաջ դա բացատրվում է այն հանգամանքով, որ հարկադրության վիճակները ամեննին չեն նշանակում քրեաիրավական պաշտպանության օբյեկտներին ցանկացած վնաս պատճառելու հնարավորություն: Ըստ այդմ, քննարկվող հանգամանքի առկայության համար անհրաժեշտ է իրավաչափության այլ պայմանների առկայություն, այդ թվում և մասնավորապես՝ վնասի պատճառման սահմանները:

2. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի իրավաչափության երկրորդ պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի կողմից:

«Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ» հասկացությունը բացահայտելու նպատակով մենք առաջարկել ենք Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածը լրացնել նոր՝ 4-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի իմաստով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձ է համարվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակիցը, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձը»: Այսինքն՝ միջազգային ընդունված չափանիշներին և պահանջներին համապատասխանող այս կարգավորման ուժով ՕՀԳ իրականացնող անձ պետք է համարել ինչպես օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցին, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձին:

3. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի իրավաչափության երրորդ պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում:

Տրված հանձնարարության մասին ուղղակիորեն նշված է Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում՝ ինչպես գործող, այնպես էլ մեր կողմից առաջարկվող տարբերակում: Հանձնարարության առկայությունը՝ որպես քննարկվող

հանգամանքի իրավաչափության պայման, առանձնացվում և կարևորվում է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ասպեկտներին նվիրված գրեթե բոլոր հետազոտություններում:

Այս համատեքստում կարևոր ենք համարում հետազոտության առարկա դարձնել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության արտահայտման ձևը՝ գրավոր կամ բանավոր լինելը: Քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածը որևէ նշում չունի հանձնարարության արտահայտման ձևի վերաբերյալ, ինչից և կարելի է ենթադրել, որ այն կարող է լինել թե՛ գրավոր, թե՛ բանավոր: Բնականաբար, տրված հանձնարարության սահմանները հստակորեն որոշելը ավելի հեշտ կլինի գրավոր հանձնարարության առկայության դեպքում, սակայն օպերատիվ-հետախուզական միջոցառումների բնույթով պայմանավորված՝ չպետք է բացառել բանավոր հանձնարարության հնարավորությունը ևս:

Վերը շարադրվածն առավել պատկերավոր ընկալելու համար դիտարկենք հետևյալ օրինակը: ՆԳՆ ոստիկանության հետ համագործակցող անձ Ջ.-ն տրված գրավոր հանձնարարության հիման վրա և դրա սահմաններում մասնակցում է «վերահսկելի գնում» ՕՀՄ իրականացմանը՝ հանդես գալով որպես զենքի [ապօրինի] «գնորդ»: Ըստ տրված հանձնարարականի՝ Ջ.-ն պետք է գնի 1 «SS» և 1 «Մակարով» տեսակի ատրճանակ: ՕՀՄ իրականացումը հեշտացնելու և դրա ընթացքը վերահսկելու նպատակով Ջ.-ի մարմնի վրա տեղադրվել են գաղտնատուր և կապի սարքեր՝ ՕՀՄ ընթացքը վերահսկող անձի հետ մշտական կապը ապահովելու համար: Վերահսկելի գնման ընթացքում, սակայն, «SS» և «Մակարով» տեսակի ատրճանակների փոխարեն «վաճառողն» առաջարկում է «գնորդին» 1 հատ «CZ Shadow 2» տեսակի ատրճանակ, ինչին ՕՀՄ ընթացքը վերահսկող և նրա հետ կապի մեջ գտնվող անձը հանձնարարում է համաձայնվել: Արդյունքում զենքի ապօրինի վաճառքով զբաղվող անձը ձերբակալվում է:

Հանձնարարականը պետք է տրված լինի կոնկրետ նպատակով, այն է՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը:

Հանցագործությունը կանխել հնարավոր է նախապատրաստության կամ հանցավորձի դեպքում:

Քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հանցագործության նախապատրաստություն է համարվում դիտավորությամբ հանցանք կատարելու համար գործիք կամ միջոց ձեռք բերելը, գործիքը կամ միջոցը հարմարեցնելը կամ դիտավորությամբ այլ պայման ստեղծելը, եթե անձն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողանում սկսել դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը»: Նախապատրաստվող հանցագործության դեպքում հանցավորի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը թեև չի սկսվում, սակայն քրեական օրենքով պաշտպանվող շահերն արդեն իսկ ոտնձգվում են: Այդ իսկ պատճառով,

եթե հանցագործության կանխման նպատակով անձի՝ հանցագործության նախապատրաստություն համարվող արարքների նկատմամբ չիրականացվի համապատասխան հակազդեցություն, ապա այն կհանգեցնի առավել վտանգավոր հետևանքների:

Այս համատեքստում հարկ է հիշատակել, որ, ըստ Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին օրենքի, օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներից մեկը հանցագործությունների կանխումն է... հանցագործություն նախապատրաստող անձանց հայտնաբերումը (հոդված 4):

Հանցագործության նախապատրաստության դեպքում քրեական օրենքով պաշտպանվող շահերի նկատմամբ ոտնձգությունը դադարում է կամ, այլ կերպ, հանցագործության նախապատրաստությունը ավարտվում է հետևյալ երեք դեպքերում. առաջին՝ հանցագործության նախապատրաստության՝ հանցափորձի կամ անմիջապես ավարտված հանցագործության վերաճում, երկրորդ՝ հանցավորից կախված հանգամանքներով հանցագործության նախապատրաստության դադարեցում, երրորդ՝ հանցավորից անկախ հանգամանքներով հանցագործության նախապատրաստության դադարեցում:

Կատարվող հանցագործության դեպքում քրեական օրենքով պաշտպանվող շահերին հասցվող վնասն էականորեն ավելի մեծ է՝ հանցագործության նախապատրաստություն համարվող արարքների համեմատությամբ: Օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հանցափորձ է համարվում այն դիտավորյալ գործողությունը կամ անգործությունը, որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն և պարունակում է սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, սակայն անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը նրա կամքից անկախ հանգամանքներով չի իրագործվում տվյալ հանցակազմի որևէ հատկանիշի բացակայության հետևանքով»: Հանցափորձի ավարտին ևս, ինչպես հանցագործության նախապատրաստության ավարտին, բնութագրական է երեք հնարավոր իրավիճակ. առաջին՝ անձի դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարում (ավարտված հանցագործություն), երկրորդ՝ հանցավորից կախված հանգամանքներով հանցափորձի դադարեցում, երրորդ՝ հանցավորից անկախ հանգամանքներով հանցափորձի դադարեցում:

«Հանցագործությունը բացահայտել» բառակապակցությունը բնութագրական է առավելապես ավարտված հանցագործությանը (թեև կարող է կիրառվել չավարտված հանցագործության առնչությամբ ևս): ՕՀԳ նպատակներից են հանցագործությունների հայտնաբերումը, բացահայտումը, հանցանք կատարած անձանց հայտնաբերումը, քրեական պատասխանատվությունից կամ պատժից խուսափող անձանց հետախուզումը և հայտնաբերումը: Այսպիսի նպատակների սահմանումը բխում է իրավական պետության էությունից, իրավակարգի պատշաճ ապահովման հրամայականից՝ պետության իրավապահ գործառնությունից: Ավարտված հանցագործության դեպքում հանցագործությունը

բացահայտելու, հանցանք կատարած անձանց հայտնաբերելու և ապացույցներ ձեռք բերելու նպատակով ՕՀՄ իրականացումը կոչված է հնարավորինս բացառելու անպատժելիության մթնոլորտի ձևավորումը, ապահովելու քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունը, և այս դիտանկյունից այն բխում է Քրեական օրենսգրքում ամրագրված արդարության սկզբունքից:

Հաջորդ նպատակը ապացույցներ ձեռք բերելուն աջակցելն է: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետի համաձայն՝ «ապացույցը փաստի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ստացված տվյալն է, որի հիման վրա քննիչը, դատախազը, դատարանը պարզում են ապացուցման ենթակա հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

Մեջբերված նորմի բովանդակությունից հետևում է, որ ապացույց ձեռք բերելը ենթադրում է կոնկրետ գործով ապացուցման ենթակա հանգամանքների առկայության/բացակայության կամ վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների վերաբերյալ տվյալներ ստանալը, իսկ ապացույց ձեռք բերելուն աջակցելը՝ այդպիսի տվյալներ ստանալուն նպաստելը (աջակցելը):

4. *Իրավաչափության չորրորդ պայմանն այն է, որ պետք է բացակայեն հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակին հասնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները:*

Ինչպես մեր նախորդ աշխատանքներում արդեն նշել ենք, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող սկզբունքորեն նոր հանգամանքը պետք է մոդելավորվի ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էության, ինչպես նաև իրավական որոշակիության (կանխատեսելիության) սկզբունքի հաշվառմամբ³⁰: Հետևաբար, վնաս պատճառելու հետ չկապված միջոցների բացակայության վերաբերյալ նշումը բխում է ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էությունից:

Ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափության պայմանները քննարկելիս մասնագիտական գրականությունում նշվում է օրենքի տեքստում ամրագրված կարգավորումից բխող հետևությունն այն մասին, որ «ծայրահեղ անհրաժեշտություն» հասկացությունն արդեն իսկ ցույց է տալիս, որ սպառնացող վտանգը կարելի էր կանխել միայն երրորդ անձանց շահերին վնաս հասցնելով: Եթե տվյալ իրադրությունում առկա են վտանգը կանխելու այլ միջոցներ, որոնք կապված չեն վնաս հասցնելու հետ, ապա վտանգը երրորդ անձանց շահերին

³⁰ Տե՛ս **Բաքսեղյան, Գ.** Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները, Դատական իշխանություն, № 1-3 (307-309), 2025, էջ 102:

վնաս հասցնելու միջոցով կանխելը չի համարվի ծայրահեղ անհրաժեշտություն: Նման դեպքերում երրորդ անձանց շահերին վնաս հասցրած անձը պատասխանատվության կենթարկվի ընդհանուր հիմունքներով (եթե անձը տվյալ իրադրությունում սխալվել է վտանգը կանխելու այլ միջոցների առկայության հարցում, ապա նրա պատասխանատվության հարցը լուծվում է փաստական սխալի կանոններով)³¹:

Հիմնավորված ռիսկի պարագայում ևս մասնագիտական գրականությունում քննարկվում է օրենքում ամրագրված կարգավորումից բխող հետևություն առ այն, որ այս հանգամանքի առկայության համար անհրաժեշտ է հաստատել, որ հանրորեն օգտակար նպատակին չէր կարելի հասնել ռիսկի հետ չկապված գործողություններով: Իրավաչափության այս պայմանով հիմնավորված ռիսկը, էական տարբերություններով հանդերձ, գրեթե նույնանում է ծայրահեղ անհրաժեշտության հետ³²:

Հետևաբար, օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու վերաբերյալ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի առկայության համար ևս իրավաչափության պարտադիր պայման է այն հանգամանքը, որ պետք է բացակայեն հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակին հասնելու այլ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները:

5. *Իրավաչափության վերջին՝ հինգերորդ պարտադիր պայմանը օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս իրավաչափ վնասի սահմանների պահպանումն է:*

Մեր ձևակերպած՝ «Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը» վերտառությամբ՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի բովանդակությունը անշուշտ պահանջում է իրավաչափ վնասի սահմանների որոշում: Այլ խոսքերով՝ պետք է հնարավորինս հստակորեն ուրվագծվեն այն սահմանները, որի շրջանակներում ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասը կհամարվի իրավաչափ: Իրավաչափ վնասի սահմանները որոշելու համար մենք ելակետ ենք ընդունել ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակը, այն է՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը:

Մինչ մեր կողմից առաջարկվող կարգավորումը ներկայացնելը և այն հետազոտելը անհրաժեշտ ենք համարում քննարկել գործող կարգավորումը: Այսպես, Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է որ, «օպերատիվ-

³¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), էջեր 345-346:

³² Տե՛ս նույն տեղը, էջեր 354-355:

հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը ենթակա է քրեական պատասխանատվության մարդու դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք կատարելու դեպքում»: Մեջբերված կարգավորման և ամբողջ 41-րդ հոդվածի կարգավորումների բովանդակության համադրված վերլուծությունից հետևում է, որ անձը ցանկացած դեպքում ենթակա է քրեական պատասխանատվության մարդու դեմ ուղղված ծանր ավարտված հանցանք կամ ցանկացած առանձնապես ծանր ավարտված հանցանք կատարելիս: Ի լրումն այս կարգավորման՝ 41-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ «եթե օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցելիս անձը մասնակցել է հանցավոր կազմակերպությանը կամ հանցանքը կատարել է հանցավոր կազմակերպության կազմում, որը սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված է որպես ծանրացնող հանգամանք, և այդ ծանրացնող հանգամանքի հիման վրա է հանցանքը համարվում առանձնապես ծանր կամ ծանր, կամ եթե նրա կողմից կատարված հանցանքն առանձնապես ծանր կամ ծանր է համարվում «առանձնապես խոշոր» չափով կատարած լինելու հատկանիշով, ապա դա օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձին չի մեղսագրվում»:

Ջերմ մնալով հիշատակված կարգավորումների լեզվական և տրամաբանական մի շարք թերությունները վերլուծելուց՝ կանդիդատնանք միայն իրավական թերություններին (անկատարությանը) և բացերին:

Այսպես, ըստ 41-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համագործակցող անձը [իմպերատիվ կերպով] ենթակա է քրեական պատասխանատվության մարդու դեմ ուղղված ավարտված ծանր հանցանք կատարելու դեպքում: Մինչդեռ հնարավոր են իրավիճակներ, երբ ՕՀԳ իրականացնող անձը ներդրված լինի, օրինակ, մարդու օրգանների թրաֆիքինգով զբաղվող հանցավոր կազմակերպությունում և հանցավոր կազմակերպության ղեկավարին (ղեկավարներին) կամ անդամներին բացահայտելու և հանցավոր կազմակերպության գործունեությունը խափանելու համար կատարի Քրեական օրենսգրքի Հատուկ մասում ամրագրված արարքներ, որոնք ինքնին արդեն կվկայեն մարդու դեմ ուղղված ավարտված ծանր հանցանքի մասին:

Ասվածն ավելի պատկերավոր ընկալելու համար դիտարկենք հետևյալ օրինակը: Անձը «օպերատիվ ներդրում» ՕՀՄ շրջանակներում ներդրվել և հաջողությամբ «ինտեգրվել» է մարդկանց առևանգմամբ և մարդու օրգանների թրաֆիքինգով զբաղվող հանցավոր կազմակերպությունում: Հանցավոր կազմակերպության ղեկավարների ինքնությունը բացահայտելու և/կամ նրանց վերաբերյալ ապացույցներ ձեռք բերելու նպատակով ներդրված անձը հանցավոր կազմակերպության որևէ անդամի հանձնարարությամբ կազմակերպության ղեկավարի գտնվելու վայր է տանում դիակից վերցված օրգաններ և հյուսվածքներ՝ փաստացի կատարելով Քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված

արարքներ (պահում և փոխադրում է): Քանի որ Քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածում նկարագրված է երկրնտրելի օբյեկտիվ կոդմով հանցակազմ, հանցանքն ավարտված է, հետևաբար ներդրված անձի կողմից կատարված արարքը մարդու դեմ ուղղված ավարտված ծանր հանցանք է: Շարունակելով ձեռք բերել հանցավոր կազմակերպության գործունեության, ղեկավարների և անդամների վերաբերյալ տեղեկություններ (ապացույցներ)՝ ներդրված անձը, հեռախոսակապի միջոցով տեղյակ պահելով համապատասխան ՕՀԳ-ն իրականացնող մարմնին, հանցավոր կազմակերպության առաջադրանքով խմբի կազմում մասնակցում է հղի կնոջ և անչափահասի առևանգմանը: Ընդ որում, ներդրված անձը ՕՀԳ իրականացնող մարմնին նախապես հայտնել էր առևանգվածներին տեղափոխելու վայրը, ինչպես նաև այն մասին, որ այնտեղ հավանաբար գտնվելու են հանցավոր կազմակերպության ղեկավարներից: Արդյունքում ղեկավարների և անդամների մի մասը ձերբակալվում է, իսկ առևանգվածներն անվնաս ազատ են արձակվում: Այս դեպքում ևս ներդրված անձի արարքում առկա են մարդու դեմ ուղղված ավարտված ծանր հանցակազմի հատկանիշներ՝ Քրեական օրենսգրքի 191-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով ամրագրված: Հարկ է նաև նշել, որ ըստ 41-րդ հոդվածի 3-րդ մասի՝ անձին չի մեղսագրվում միայն «հանցավոր կազմակերպությանը մասնակցելը» ծանրացնող հանգամանքը:

Դիտարկենք ևս մեկ օրինակ: «Օպերատիվ ներդրում» ՕՀՄ շրջանակներում ներդրված անձը հանցավոր կազմակերպության կազմում հատուկ հարմարեցված սարքավորման գործադրմամբ մասնակցում է միջուկային նյութերի հափշտակմանը (Քրեական օրենսգրքի, հոդված 332, մաս 4, առանձնապես ծանր հանցանք է): Հափշտակության ավարտից հետո հանցավոր կազմակերպության անդամները ձերբակալվում են, հանցավոր կազմակերպության գործունեությունը՝ խափանվում: Ըստ 41-րդ հոդվածի 3-րդ մասի՝ անձին չի մեղսագրվում միայն «հանցավոր կազմակերպությանը մասնակցելը» ծանրացնող հանգամանքը, մինչդեռ տվյալ դեպքում առանց այս ծանրացնող հանգամանքի մեղսագրման էլ հանցանքը համարվում է առանձնապես ծանր. 332-րդ հոդվածի 3-րդ մասի սանկցիան նախատեսում է ազատազրկում վեցից տասներկու տարի ժամկետով (առանձնապես ծանր է): Ստացվում է այնպես, որ այս դեպքում ՕՀԳ իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության, ինչը, մեր կարծիքով, ողջամիտ և իրավաչափ չէ:

Նույնն է լինելու պատկերը նաև այն դեպքերում, երբ օպերատիվ ներդրումն իրականացվի, օրինակ, պետական դավաճանությունը, լրտեսությունը կամ վարձկանությունը բացահայտելու կամ կանխելու նպատակով: ՕՀԳ իրականացնող անձի կողմից պետական դավաճանություն, լրտեսություն կամ վարձկանություն կանխելու նպատակով այդ հանցանքների վերաբերյալ նորմերում (հանցակազմերում) նկարագրված որևէ արաքի կատարումը արդեն իսկ ավարտված առանձնապես ծանր հանցանք է:

Քննարկենք մեկ այլ օրինակ ևս: Բազմասպեկտր ուղղվածություն ունեցող հանցավոր կազմակերպությունում ներդրված անձը կազմակերպության կազմում ինտեգրվելու նպատակով կազմակերպության առաջադրանքով խմբի կազմում մասնակցում է բնակարան ապօրինի մուտք գործելով առանձնապես խոշոր չափերով ավազակությանը, ինչի հաջող իրականացման արդյունքում ներդրված, կազմակերպության կողմից «ստուգված» անձը ընդունվում է կազմակերպության կողմից: Ներդրված անձի գործունեության շնորհիվ հնարավոր է լինում ձեռքբերել կազմակերպության ղեկավարներին և անդամներին փաստացի դադարեցնելով հանցավոր կազմակերպության գործունեությունը:

Այս իրավիճակում ևս ներդրված անձը ենթակա է քրեական պատասխանատվության, քանի որ նրա կատարած արարքը փաստացի առանձնապես ծանր ավարտված հանցանքի հատկանիշներ է պարունակում: Իսկ Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը բացառություն է նախատեսում միայն հանցավոր կազմակերպությանը մասնակցելու և առանձնապես խոշոր չափերով ծանրացնող հանգամանքների մեղսագրման վերաբերյալ: Ստացվում է բնակարան ապօրինի մուտք գործելու վերաբերյալ ծանրացնող հանգամանքը ներդրված անձին մեղսագրվելու է:

Կարծում ենք, որ նկարագրված և նմանատիպ իրավիճակներում ՕՀԳ իրականացնող անձին քրեական պատասխանատվության ենթարկելը, հավասարապես նաև հանցանք կատարած լինելու հանգամանքը «չնկատելը» ոչ իրավաչափ է, անարդարացի և չեն բխում իրավական պետության էությունից:

Իրավաչափության այս պայմանի հետազոտման համատեքստում աներկբա արձանագրման է ենթակա այն հանգամանքը, որ ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառած ՕՀԳ իրականացնող անձը քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի անկախ դասակարգման խմբից ցանկացած հանցանքի կատարման համար, որը պայմանավորված չի եղել քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի կոնկրետ նպատակով, այն է՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը: Այսինքն, անկախ հանցանքի ծանրության աստիճանից, ՕՀԳ իրականացնող անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած հանցանքը պայմանավորված չի եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով: Եվ հակառակը, անկախ հանցանքի ծանրության աստիճանից, ՕՀԳ իրականացնող անձը չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած արարքը պայմանավորված է եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

Այս համատեքստում, կարծում ենք, բացառություն են մարդու կյանքի կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ ա-

ռանձնապես ծանր ավարտված հանցանքները, որոնց կատարումը որևէ պարագայում չի կարելի համարել արդարացված: Այսպես, որևէ հանցագործություն բացահայտելու, ապացույց ձեռք բերելու կամ հանցավոր կազմակերպության կազմում ինտեգրվելու նպատակով չի կարելի սպանություն կամ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ իրականացնել: Սակայն հարկ է նաև նկատել, որ խոսքը ավարտված հանցանքների մասին է: Հանցանքի ավարտված լինելու շեշտադրումը պայմանավորված է երբեմն հանդիպող այն դեպքերով, երբ նշված հանցանքների նախապատրաստությունը կամ փորձն անհրաժեշտ է հանցագործությունը բացահայտելու, հանցավոր գործունեությունը խափանելու կամ ապացույցներ ձեռք բերելու նպատակով:

Իրավաչափության այս պայմանի հետազոտման արդյունքներով առաջարկել ենք Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. *«Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս մարդու կյանքի կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով»:*

Առաջարկվող կարգավորման հետագա հետազոտման, մեկնաբանման կամ կիրառման համար հարկ ենք համարում հատուկ ընդգծել, որ «... այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով» ձևակերպումը չի կարող մեկնաբանվել այնպես, որ ՕՀԳ իրականացնող անձինք իրավունք ունեն նշված նպատակով կատարելու ցանկացած հանցանք: Բնականաբար, առաջարկվող կարգավորումը պետք է մեկնաբանվի և կիրառվի ողջամտության սահմաններում և ոչ երբեք ծայրահեղական կամ ոչ ողջամիտ մոտեցմամբ: Հանցագործությունը բացահայտելու կամ կանխելու նպատակով ՕՀԳ իրականացնող անձը չի կարող կատարել, օրինակ, ահաբեկչություն, խոշտանգում և մարդկայնության դեմ ուղղված հանցանքներ և այլն:

Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի մասին հետազոտություններ իրականացնելիս հեղինակները որպես այս հանգամանքի իրավաչափության պայման երբեմն նշում են սահմանազանցման բացակայության մասին³³: Սակայն, մեր կարծիքով, «սահմանազանցում» տերմինը այս հանգամանքի պարագայում կիրառելի չէ, քանզի օպերատիվ-հետախուզական միջոցառումների բնույթով, դրանց իրականացման ժամանակ ստեղծված էքստրեմալ իրադրությունով պայմանավորված՝ գործնականում հաճախ անհնար է լինելու որոշել՝ արդյոք կանխված վնասի համեմատությամբ

³³ St' u Шкабин, Г.С. Уголовно-правовое обеспечение оперативно-разыскной деятельности: теоретико-прикладные и законодательные аспекты. Диссертация..., էջեր 312-313, 315-316:

ավելի փոքր վնաս է պատճառվել, թե ոչ: Բացի այդ, «սահմանազանցում» տերմինը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների համատեքստում մշտապես ընկալվում է սահմանները գերազանցելու իմաստով: Մինչդեռ, մեր կարծիքով, ցանկացած հանցանք կատարելը, անկախ այն հանգամանքից՝ գերազանցել է սահմանները, թե ոչ (պատճառել է ավելի թեթև վնաս), պետք է հանգեցնի ՕՀԳ իրականացնող անձի քրեական պատասխանատվության, եթե պայմանավորված չի եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

Գիտագործնական հետաքրքրություն ունեն նաև այն դեպքերը, երբ օպերատիվ գործակալները, իրենց ինքնության բացահայտման վտանգով կամ բացահայտումից բխող հետևանքներով պայմանավորված, կյանքից զրկում են իրենց բացահայտած անձանց, որոնց կապակցությամբ իրականացվում էր ՕՀՄ, կամ այդ անձանց առողջությանը կամ գույքին վնաս են պատճառում: Կարծում ենք, որ նմանատիպ իրավիճակները չեն կարող դիտարկվել քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի տիրույթում, այլ դրանց գնահատական պետք է տրվի անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի կարգավորումների տիրույթում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, երբ կոնկրետ արարքին գնահատական պետք է տրվի ծայրահեղ անհրաժեշտության կամ հակաիրավական արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու վերաբերյալ կարգավորումների տիրույթում:

Կ. Եզրակացություն

Մույն հոդվածի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքում կատարել ենք մի շարք եզրակացություններ, որոնցից հիմնականները հանգում են հետևյալին:

1. Քրեական պատասխանատվությունը բացառող ցանկացած հանգամանքի կիրառելիությունը փաստելու համար պետք է հաստատել դրա իրավաչափության պայմանների առկայությունը: Մույն հոդվածի շրջանակներում մենք դիտարկել և հետազոտության առարկա ենք դարձրել մեր կողմից առաջարկված՝ քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքի իրավաչափության պայմանները:

2. Քրեական պատասխանատվությունը բացառող մեր կողմից առաջարկված հանգամանքի բովանդակության հետազոտման արդյունքում կարելի է առանձնացնել այդ հանգամանքի իրավաչափության հետևյալ պայմանները՝

- քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պետք է պատճառվի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս,
- վնասը պետք է պատճառվի օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի կողմից,

- վնասը պետք է պատճառվի հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում,

- պետք է բացակայեն այդ նպատակին հասնելու համար վնաս պատճառելու հետ չկապված միջոցները,

- պետք է պահպանված լինեն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս իրավաչափ վնասի պատճառման սահմանները:

3. Իրավաչափության առաջին պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պետք է պատճառվի օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս:

3.1. Օպերատիվ-հետախուզական գործունեությունը և օպերատիվ-հետախուզական միջոցառումը որպես երևույթներ գտնվում են ամբողջի և մասի հարաբերակցության մեջ, որտեղ ամբողջը օպերատիվ-հետախուզական գործունեությունն է, իսկ մասը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումը: Շարադրվածից հետևում է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս կարող է պատճառվել միայն օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս, քանզի օպերատիվ-հետախուզական գործունեության՝ որպես երևույթի արտահայտման ձևը օպերատիվ-հետախուզական միջոցառումն է:

3.2. Իրավաչափության առաջին պայմանի համատեքստում հետազոտման առանձին առարկա է «վնաս» հասկացության քրեաիրավական ընկալումը: Այս հասկացությունը, մեր կարծիքով, չունի կոնկրետ ճյուղային պատկանելություն և օգտագործվում է մեծաքանակ իրավական ակտերում՝ անգամ Սահմանադրությունում:

3.3. «Վնասը» քրեական իրավունքում միայն բացասական իմաստով ընկալելը ճիշտ չէ: Տարբեր հանգամանքների և գործոնների (այդ թվում՝ պետության կամ հասարակության օրինական շահերի) հաշվառմամբ՝ վնասի բովանդակությունը կարող է նաև դրականորեն ընկալվել: Վնասի սոցիալական էությամբ և բնույթով պայմանավորված՝ այն քրեական իրավունքում կարող է դասակարգվել հանցավորի և ոչ հանցավորի: Ոչ հանցավոր վնասն էլ, վնասի սոցիալական և ձևական չափանիշների հաշվառմամբ, դասակարգվում է երկու խմբի՝ ձևականորեն ոչ հանցավոր վնաս և իրավաչափ վնաս:

3.4. Ձևականորեն ոչ հանցավոր վնասը բնույթով մոտ է հանցավոր վնասին, սակայն ձևականորեն ամրագրված որևէ հանգամանքի առկայության կամ բացակայության հիմքով արարքը հանցանք, հետևաբար՝ վնասը հանցավոր չի համարվում:

3.5. Իրավաչափ վնասը, ի տարբերություն ձևականորեն ոչ հանցավոր վնասի, ունի դրական նշանակություն: Սոցիալական բովանդակության դիտանկյունից այն ընդունված է անվանել սոցիալապես թույլատրելի կամ հանրորեն օգտակար:

3.6. Քննարկվող իրավաչափության պայմանի էական հանգամանքներից է այն իրադրությունը, որի պայմաններում ՕՀՄ իրականացման ժամանակ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս է պատճառվում: Արարքին քրեաիրավական ստույգ գնահատական տալու տեսանկյունից այն ունի կարևոր նշանակություն:

4. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի իրավաչափության երկրորդ պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձի կողմից:

4.1. Միջազգային ընդունված չափանիշներին և պահանջներին համապատասխան՝ առաջարկել ենք ՕՀԳ իրականացնող անձ համարել ինչպես օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցին, այնպես էլ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի հետ օրենքով սահմանված կարգով համագործակցող անձին:

5. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի իրավաչափության երրորդ պայմանն այն է, որ քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնասը պետք է պատճառվի հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով տրված հանձնարարության սահմաններում:

5.1. Տրված հանձնարարության մասին ուղղակիորեն նշված է Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածում՝ ինչպես գործող, այնպես էլ մեր կողմից առաջարկվող տարբերակում: Հանձնարարության առկայությունը՝ որպես քննարկվող հանգամանքի իրավաչափության պայման, առանձնացվում և կարևորվում է օպերատիվ-հետախուզական գործունեության քրեաիրավական ասպեկտներին նվիրված գրեթե բոլոր հետազոտություններում:

5.2. Կարևոր ենք համարել հետազոտության առարկա դարձնել հանձնարարության արտահայտման ձևը՝ գրավոր կամ բանավոր լինելը: Քրեական օրենսգրքի հիշյալ հոդվածը որևէ նշում չունի հանձնարարության արտահայտման ձևի վերաբերյալ, ինչից և կարելի է ենթադրել, որ այն կարող է լինել թե՛ գրավոր, թե՛ բանավոր: Բնականաբար, տրված հանձնարարության սահմանները հստակորեն որոշելը ավելի հեշտ կլինի գրավոր հանձնարարության առկայության դեպքում, սակայն օպերատիվ-հետախուզական միջոցառումների բնույթով պայմանավորված՝ չպետք է բացառել բանավոր հանձնարարության հնարավորությունը ևս:

5.3. Հանձնարարականը պետք է տրված լինի կոնկրետ նպատակով, այն է՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը:

6. Իրավաչափության չորրորդ պայմանն այն է, որ պետք է բացակայեն հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն

աջակցելու նպատակին հասնելու այլ՝ վնաս պատճառելու հետ չկապված միջոցները:

6.1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող սկզբունքորեն նոր հանգամանքը պետք է մոդելավորվի ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էության, ինչպես նաև իրավական որոշակիության (կանխատեսելիության) սկզբունքի հաշվառմամբ: Հետևաբար, վնաս պատճառելու հետ չկապված միջոցների բացակայության վերաբերյալ նշումը բխում է ծայրահեղ անհրաժեշտության և հիմնավորված ռիսկի իրավական էությունից:

7. Իրավաչափության վերջին՝ հինգերորդ պարտադիր պայմանը օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս իրավաչափ վնասի սահմանների պահպանումն է:

7.1. Մեր կողմից ձևակերպված՝ «*Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելը*» վերտառությամբ հանգամանքի բովանդակությունը պահանջում է իրավաչափ վնասի սահմանների որոշում: Այլ խոսքերով՝ պետք է հնարավորինս հստակորեն ուրվագծվեն այն սահմանները, որի շրջանակներում ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին պատճառված վնասը կհամարվի իրավաչափ: Իրավաչափ վնասի սահմանները որոշելու համար մենք ելակետ ենք ընդունել ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանվող շահերին վնաս պատճառելու նպատակը, այն է՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը:

7.2. Իրավաչափության այս պայմանի հետազոտման համատեքստում աներկբա արձանագրման է ենթակա այն հանգամանքը, որ ՕՀՄ իրականացնելիս քրեական օրենքով պաշտպանող շահերին վնաս պատճառած ՕՀԳ իրականացնող անձը քրեական պատասխանատվության պետք է ենթարկվի անկախ դասակարգման խմբից, ցանկացած հանցանքի կատարման համար, որը պայմանավորված չի եղել քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի կոնկրետ նպատակով, այն է՝ հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելը: Այսինքն, անկախ հանցանքի ծանրության աստիճանից, ՕՀԳ իրականացնող անձը պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած հանցանքը պայմանավորված չի եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով: Եվ հակառակը, անկախ հանցանքի ծանրության աստիճանից, ՕՀԳ իրականացնող անձը չպետք է ենթարկվի քրեական պատասխանատվության, եթե նրա կատարած արարքը պայմանավորված է եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

7.3. Իրավաչափության այս պայմանի հետազոտման արդյունքներով՝ առաջարկել ենք Քրեական օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ

խմբագրությամբ. «Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձը ենթակա է քրեական պատասխանատվության օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս մարդու կյանքի կամ սեռական ազատության և անձեռնմխելիության դեմ ուղղված ծանր կամ առանձնապես ծանր ավարտված հանցանք, ինչպես նաև այնպիսի հանցանք կատարելու դեպքում, որը պայմանավորված չի եղել հանցագործությունը բացահայտելուն, կանխելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով»:

7.4. Քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի մասին հետազոտություններ իրականացնելիս հեղինակները որպես այս հանգամանքի իրավաչափության պայման երբեմն նշում են սահմանազանցման բացակայության մասին: Սակայն, մեր կարծիքով, «սահմանազանցում» տերմինը այս հանգամանքի պարագայում կիրառելի չէ, քանզի, օպերատիվ-հետախուզական միջոցառումների բնույթով, դրանց իրականացման ժամանակ ստեղծված էքստրեմալ իրադրությունով պայմանավորված, գործնականում հաճախ անհնար է լինելու որոշել՝ արդյո՞ք կանխված վնասի համեմատությամբ ավելի փոքր վնաս է պատճառվել, թե՞ ոչ: Բացի այդ, «սահմանազանցում» տերմինը քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների համատեքստում մշտապես ընկալվում է սահմանները գերազանցելու իմաստով: Մինչդեռ, մեր կարծիքով, ցանկացած հանցանք կատարելը, անկախ այն հանգամանքից՝ գերազանցել է սահմանները, թե ոչ (պատճառել է ավելի թեթև վնաս), պետք է հանգեցնի ՕՀԳ իրականացնող անձի քրեական պատասխանատվության, եթե պայմանավորված չի եղել հանցագործությունը կանխելուն, բացահայտելուն կամ ապացույցներ ձեռք բերելուն աջակցելու նպատակով:

7.5. Գիտագործնական հետաքրքրություն են ներկայացնում նաև այն դեպքերը, երբ օպերատիվ գործակալները, իրենց ինքնության բացահայտման վտանգով կամ բացահայտումից բխող հետևանքներով պայմանավորված, կյանքից զրկում են իրենց բացահայտած անձանց, որոնց կապակցությամբ իրականացվում էր ՕՀՄ, կամ այդ անձանց առողջությանը կամ գույքին վնաս են պատճառում: Կարծում ենք, որ նմանատիպ իրավիճակները չեն կարող դիտարկվել քրեական պատասխանատվությունը բացառող քննարկվող հանգամանքի տիրույթում, այլ դրանց գնահատական պետք է տրվի անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի կարգավորումների տիրույթում:

7.6. Օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելիս հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, երբ կոնկրետ արարքին գնահատական պետք է տրվի ծայրահեղ անհրաժեշտության կամ հակաիրավական արարք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելու վերաբերյալ կարգավորումների տիրույթում:

ГЕВОРГ БАРСЕГЯН – Условия правомерности причинения вреда охраняемым уголовным законом интересам при осуществлении оперативно-розыскного мероприятия. – Для обоснования применимости любого из обстоятельств, исключających уголовную

ответственность, требуется установление наличия условий их правомерности. В настоящей статье предметом исследования стали условия правомерности предлагаемого нами обстоятельства, исключающего уголовную ответственность, сформулированного как "Причинение вреда охраняемым уголовным законом интересам при проведении оперативно-розыскного мероприятия".

В ходе исследования содержания указанного обстоятельства были выделены следующие условия его правомерности, которые в статье подвергнуты отдельному и детальному анализу:

- причинение вреда охраняемым уголовным законом интересам должно происходить при проведении оперативно-розыскного мероприятия,
- вред должен причиняться лицом, осуществляющим оперативно-розыскную деятельность в установленном законом порядке,
- вред должен причиняться в рамках поручения, направленного на предотвращение преступления, его раскрытие или на получение доказательств,
- должны отсутствовать иные способы достижения указанной цели, не связанные с причинением вреда,
- должны быть соблюдены пределы причинения правомерного вреда при проведении оперативно-розыскного мероприятия.

Только при одновременном наличии всех вышеуказанных условий возможно признание наличия рассматриваемого обстоятельства, исключающего уголовную ответственность.

По результатам проведённого исследования в статье сформулирован ряд предложений, обладающих научной и практической ценностью.

Ключевые слова: *обстоятельство, исключающее уголовную ответственность, условие правомерности, правомерный вред, оперативно-розыскное мероприятие, лицо, осуществляющее оперативно-розыскную деятельность, пределы поручения, меры, не связанные с причинением вреда, пределы причинения вреда*

GEVORG BARSEGHIAN – Conditions of Lawfulness for Causing Harm to Interests Protected by Criminal Law in the Course of Conducting an Operational-Search Measure. – In order to establish the applicability of any circumstance excluding criminal liability, the existence of the conditions of lawfulness for that circumstance must be confirmed. In this article, we examine the conditions of lawfulness for the circumstance excluding criminal liability, which we have proposed under the title "Causing Harm to Interests Protected by Criminal Law in the Course of Conducting an Operational-Search Measure".

As a result of the study of the proposed content of this circumstance excluding criminal liability, the following conditions of lawfulness have been identified, the essence of which is examined in detail in separate sections of this article:

- harm to interests protected by criminal law must be caused in the course of conducting an operational-search measure,
- the harm must be caused by a person conducting operational-search activity in accordance with the procedure established by law,
- the harm must be caused within the scope of an assignment given for the purpose of preventing or detecting a crime, or obtaining evidence,
- there must be no alternative measures unrelated to causing harm that could achieve the intended purpose,
- the limits of causing lawful harm must be maintained during the conduct of the operational-search measure.

Only in the presence of all the listed conditions simultaneously can the existence of the circumstance excluding criminal liability under consideration be confirmed.

Based on the results of the research conducted, the article presents a number of proposals of scientific and practical value.

Key words: *circumstance excluding criminal liability, condition of lawfulness, legal harm, operational-search measure, person conducting operational-search activity, scope of assignment, measures not related to causing harm, limits of harm causation*

Գրականության ցանկ

- Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1976, հատոր 1, էջ 845:
- Բարսեղյան Գ. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքների արդի հիմնախնդիրները և զարգացման միտումները, Դատական իշխանություն, № 1-3 (307-309), 2025, էջ 100-118: https://www.researchgate.net/publication/391804425_Operativ-hetaxuzakan_gorcuneutyun_irakanacnog_anjanc_kreakan_patasxanatvutyun_bacarog_hangamankneri_ardi_himnaxndimer_ev_zargacman_mitumner_Current_Issues_and_Development_Trends_of_Circumstances_Excl [Barseghyan G. O'perativ-hetaxowzakan gorc'owneowt'yown irakanacnog and'anc kreakan patasxanatvowt'yowny' bacar'ogh hangamanqneri ardi himnaxndimery' ev zargacman mitowmnery', Datakan ishxanowt'yown, № 1-3 (307-309), 2025]:
- Բեքմեզյան Գ. Արտապայմանագրային պարտավորություններ, մենագրություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2009 [Beqmezian G. Artapaymanagrayin partavorowt'yownner, menagrowt'yown, EPH hratarakchowt'yown, Erevan, 2009]:
- Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով), խմբագրությամբ ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյանի, Եր., ԵՊՀ հրատ., 2012 [Hayastani Hanrapetowt'yan qreakan iravownq: Y'ndhanowr mas (vecerord hratarakowt'yown' p'op'oxowt'yownnerov ev Iracowmnnerov), xmbagrowt'yamb' i.g.d., profesor, HH GAA t'ght'akic andam G.S. Ghazinyani, Er., EPH hrat., 2012]:
- ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, համարը՝ ՀՕ-239, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Գործում է [HH qaghaqaciakan o'rensgirq, hamary' HO'-239, skzbnaghbyowry' HHPT 1998.08.10/17(50), owjhi mej e' mtel 01.01.1999t'.: Gorc'owm e']:
- ՀՀ քրեական օրենսգիրք: Ընդունվել է 05.05.2021թ., ուժի մեջ է մտել 01.07.2022թ., ՀՕ-199-Ն: Գործում է [HH qreakan o'rensgirq: Y'ndownvel e' 05.05.2021t', owjhi mej e' mtel 01.07.2022t', HO'-199-N: Gorc'owm e']:
- ՀՀ օրենքը Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին: Ընդունվել է 22.10.2007թ., ուժի մեջ է մտել 08.12.2007թ., ՀՕ-223-Ն: Գործում է [HH o'renqy' O'perativ-hetaxowzakan gorc'owneowt'yan masin: Y'ndownvel e' 22.10.2007t', owjhi mej e' mtel 08.12.2007t', HO'-223-N: Gorc'owm e']:
- Антонов В.М., Кувалдин В.П. Противодействие преступных структур органам внутренних дел и меры по его нейтрализации: лекция. М., 1997 [Antonov V.M., Kuvaldin V.P. Protivodejstvie prestupnyh struktur organam vnutrennih del i mery po ego nejtralizacii: lekcija. M., 1997].
- Баулин Ю.В. Право граждан на задержание преступника. Харьков, 1986 [Baulin Ju.V. Pravo grazhdan na zaderzhanie prestupnika. Har'kov, 1986].
- Блинников В. А. Обстоятельства, исключающие преступность деяния, в уголовном праве России. М., 2014 [Blinnikov V. A. Obstojel'stva, iskljuchajushhie prestupnost' dejanija, v ugovolnom prave Rossii. M., 2014].
- Богданов О. В. Вред – как условие гражданско-правовой ответственности: автореф. дис. ... канд. юрид. наук. Саратов, 2001 [Bogdanov O. V. Vred – kak uslovie grazhdansko-pravovoj otvetstvennosti: avtoref. dis. ... kand. jurid. nauk. Saratov, 2001].
- Вагин О.А. Конституционные проблемы оперативно-розыскной деятельности (научный доклад) // Конституционно-правовые проблемы оперативно-розыскной деятельности: сборник материалов Всероссийского круглого стола (3 ноября 2011 г.). СПб., 2012, СПС «КонсультантПлюс» [Vagin O.A. Konstitucionnye problemy operativno-rozysknoj dejatel'nosti (nauchnyj doklad) // Konstitucionno-pravovye problemy operativno-rozysknoj dejatel'nosti:

- sbornik materialov Vserossijskogo kruglogo stola (3 nojabrja 2011 g.). SPb., 2012, SPS «Konsul'tantPljus»].
- BBC. Русская служба: Боевики ИГ показали видео расправы над «агентом ФСБ». https://www.bbc.com/russian/news/2015/12/151202_isis_russia_fsb_agent_video (10.02.2025) [BBC. Russkaja sluzhba: Boeviki IG pokazali video raspravu nad «agentom FSB»].
- BBC. Русская служба: Боевики ИГ убили двоих "за шпионаж в пользу России" https://www.bbc.com/russian/international/2015/01/150113_isis_video_killing (10.02.2025) [BBC. Russkaja sluzhba: Boeviki IG ubili dvoih "za shpionazh v pol'zu Rossii"]].
- Дмитренко А. П. Институт обстоятельств, исключающих преступность деяния, в уголовном праве России: основы теории, законодательной регламентации и правоприменения: автореф. дис. ... д-ра юрид. наук. М., 2010 [Dmitrenko A. P. Institut obstoitel'stv, iskljuchajushhih prestupnost' dejanija, v ugovnomn prave Rossii: osnovy teorii, zakonodatel'noj reglamentacii i pravoprimerenienija: avtoref. dis. ... d-ra jurid. nauk. M., 2010].
- Землюков С. В. Преступный вред: теория, законодательство, практика: дис. ... д-ра юрид. наук. М., 1994 [Zemljukov S. V. Prestupnyj vred: teorija, zakonodatel'stvo, praktika: dis. ... d-ra jurid. nauk. M., 1994].
- Кваша Ю.Ф., Сурков К.В., Васильев Н.Н. Законодательные основы оперативно-розыскной деятельности: курс лекций / под общей ред. Ю.Ф. Кваши. М., 2005 [Kvasha Ju.F., Surkov K.V., Vasil'ev N.N. Zakonodatel'nye osnovy operativno-rozysknoj dejatel'nosti: kurs lekciy / pod obshhej red. Ju.F. Kvashi. M., 2005].
- Келина С. Г. Обстоятельства, исключающие преступность деяния // Уголовное право. 1999. № 3 [Kelina S. G. Obstoitel'stva, iskljuchajushhie prestupnost' dejanija // Uголовное право. 1999. № 3].
- Кожухов Н.И. Словарь-справочник по психологии. М., 1996 [Kozhuhov N.I. Slovar'-spravochnik po psihologii. M., 1996].
- Кудрявцев В. Н. Правовое поведение: норма и патология. М., 1982 [Kudrjavcev V. N. Pravovoe povedenie: norma i patologija. M., 1982].
- Миллюков С. Ф. Российское уголовное законодательство: опыт критического анализа. СПб., 2000 [Miljukov S. F. Rossijskoe ugovnoe zakonodatel'stvo: opyt kriticheskogo analiza. SPb., 2000].
- Михайлов В. И. Отраслевая принадлежность норм главы 8 УК [Mihajlov V. I. Otrasleyaja prinadlezhnost' norm glavy 8 UK].
- Мухачев В.А., Тарсуков К.М. Приоритетные направления и методика исследования проблем оперативного внедрения // Правовые, научные и организационно-тактические проблемы оперативно-розыскной деятельности в современных условиях. М., 1997 [Muhachev V.A., Tarsukov K.M. Prioritetnye napravlenija i metodika issledovanija problem operativnogo vnedrenija // Pravovye, nauchnye i organizacionno-takticheskie problemy operativno-rozysknoj dejatel'nosti v sovremennyh uslovijah. M., 1997].
- Орешкина Т. Постановление Пленума Верховного Суда РФ от 27 сентября 2012 г. № 19 «О применении судами законодательства о необходимой обороне и причинении вреда при задержании лица, совершившего преступление» // Уголовное право. 2013. № 2, СПС «КонсультантПлюс» [Oreshkina T. Postanovlenie Plenuma Verhovnogo Suda RF ot 27 sentjabrja 2012 g. № 19 «O primenenii sudami zakonodatel'stva o neobhodimoj oborone i prichinenii vreda pri zaderzhanii lica, sovershivshego prestuplenie» // Uголовное право. 2013. № 2, SPS «Konsul'tantPljus»].
- Плешаков А.М. Невинное причинение вреда при оперативном внедрении (к постановке проблемы) // Проблемы применения уголовного законодательства при осуществлении оперативно-розыскной деятельности, [Pleshakov A.M. Nevinovnoe prichinenie vreda pri operativnom vnedrenii (k postanovke problemy) // Problemy primenenija ugovalnogo zakonodatel'stva pri osushhestvlenii operativno-razysknoj dejatel'nosti].
- Романов В. С. Моральный вред как институт гражданского права: автореф. дис. ... канд. юрид. наук. М., 2006 [Romanov V. S. Moral'nyj vred kak institut grazhdanskogo prava: avtoref. dis. ... kand. jurid. nauk. M., 2006].
- Уголовное право. Общая и Особенная части: учеб. для вузов / Н. И. Ветров, Г. В. Дашков, В. И. Динека и др.; под ред. Н. Г. Кадникова. М., 2006 [Uголовное право. Obshhaja i Osobennaja

chasti: ucheb. dlja vuzov / N. I. Vetrov, G. V. Dashkov, V. I. Dineka i dr.; pod red. N. G. Kadnikova. M., 2006].

Шкабин Г.С. Уголовно-правовое обеспечение оперативного внедрения: монография / Москва: ИД «Юриспруденция», 2018 [Shkabin G.S. Uголовno-pravovoe obespechenie operativnogo vnedrenija: monografija / Moskva: ID «Jurisprudencija», 2018].

Шкабин Г.С. Уголовно-правовое обеспечение оперативно-разыскной деятельности: теоретико-прикладные и законодательные аспекты. Диссертация на соискание учёной степени доктора юридических наук, Москва, 2018 [Shkabin G.S. Uголовno-pravovoe obespechenie operativno-razysknoj dejatel'nosti: teoretiko-prikladnye i zakonodatel'nye aspekty. Dissertacija na soiskanie uchjonoj stepeni doktora juridicheskikh nauk, Moskva, 2018].

FBI: Wall of Honor. We will never forget our fallen FBI Family members ... <https://www.fbi.gov/history/wall-of-honor> (10.02.2025).

**ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՈՒՆԵՐԻ ԱՆՋԱՏՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՍԱՍՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ^{ID}, ԴԱՎԻԹ ՄԵԼՔՈՆՅԱՆ^{ID}
Երևանի պետական համալսարան

Հոդվածը նվիրված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով քրեական վարույթների անջատման գործնական խնդիրների ուսումնասիրմանը: Հիմնվելով իրավաբանական գրականության մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումների վրա՝ արձանագրվում է, որ քրեական վարույթների միացման և անջատման ինստիտուտը չի կարելի դիտարկել որպես զուտ տեխնիկական այն միջոցներից մեկը, որոնց օգնությամբ իրավակիրառողը կարող է փոփոխել, այսինքն՝ ընդլայնել կամ հակառակը՝ նեղացնել իր վարույթում գտնվող գործով հետազոտման առարկան: Ավելին, նշված ինստիտուտի կիրառումը պահանջում է խորքային և կշռադատված մոտեցում, քանի որ դրանով կարգավորվող իրավահարաբերությունների համալիրը անմիջականորեն կապված է ամբողջ քրեական դատավարության հիմնական, սկզբունքային դրույթների և ընդհանուր առմամբ քրեական դատավարության առջև դրված խնդիրների հետ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի կիրառման պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա կիրառումը հետապնդում է բոլորովին այլ նպատակ, որը չի բխում քրեական վարույթների անջատման ինստիտուտի էությունից: Քրեական վարույթների անջատման առկա իրավական պրակտիկան

Սամվել Դիլբանդյան – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ

Самвел Дилбандян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики юридического факультета ЕГУ

Samvel Dilbandyan – Doctor of Law, Professor, Head at YSU Chair of Criminal Procedure and Criminalistics
Էլ. փոստ՝ iravdilbandyan@gmail.com <https://orcid.org/0000-0001-6494-2791>

Դավիթ Մելքոնյան – իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Давид Мелконян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

David Melkonyan – Candidate of Legal Sciences, Associate Professor at YSU Chair of Criminal Procedure and Criminology

Էլ. փոստ՝ melkd@yahoo.com <https://orcid.org/0000-0001-9993-6404>



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 31.01.2025

Գրախոսվել է՝ 07.05.2025

Հաստատվել է՝ 25.06.2025

© The Author(s) 2025

պայմանավորված է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում քրեական հետապնդման ժամկետների ամրագրմամբ: Եթե քրեական վարույթով մեղադրյալները մի քանիսն են, և նրանց մեղսագրվում են տարբեր ծանրության հանցագործություններ, ապա վարույթն իրականացնող մարմինը դատաքնության ժամկետները չխախտելու համար, սակայն, միևնույն ժամանակ խախտելով քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածը, անջատում է առանձին վարույթ և փոխանցում դատարան: Այս պրակտիկան հակասում է վարույթի անջատման ինստիտուտի իմաստին և խախտում մեղադրյալի սահմանադրական իրավունքները:

Բանալի բառեր – վարույթի անջատում, քրեական հետապնդման ժամկետներ, անմեղության կանխավարկած, անաչառ դատարան, մեղադրանք, հանցագործության ծանրության աստիճան, առանձին վարույթ, ՄԻԵԴ պրակտիկա, Վճռաբեկ դատարանի պրակտիկա, իրավակիրառական պրակտիկա

Ներածություն

Քրեական վարույթների անջատման ինստիտուտի օրենսդրական կարգավորման և գործնական կիրառման հարցերը իրավաբանական գրականության մեջ մշտապես քննարկվել և ներկայումս էլ շարունակում են քննարկվել¹: Քրեական վարույթների միացման և անջատման ինստիտուտը ավանդաբար դասվել և դասվում է իրավական այն միջոցների շարքին, որոնք ուղղված են քրեական դատավարության նպատակների կենսագործմանը, ավելի ստույգ՝ անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ արդյունավետ վարույթի իրականացման ապահովմանը:

Իրավաբանական գրականության մեջ իրավացիորեն տեսակետ է արտահայտվել, որ քրեական վարույթների միացման և անջատման ինստիտուտը չի կարող դիտարկվել որպես տեխնիկական միջոց, որի օգնությամբ իրավապահ մարմինը կարողանում է փոխել, այսինքն՝ նվազեցնել կամ ընդլայնել քրեական վարույթի հետազոտության առարկան: Ընդհակառակը, այս ինստիտուտի կիրառումը պահանջում է խորը և մտածված մոտեցում, քանի որ դրա միջոցով կարգավորվող իրավահարաբերությունները անմիջականորեն կապված են ամբողջ քրեական դատավարության հիմնական սկզբունքային դրույթների և քրեական դատավարության առջև դրված խնդիրների հետ²: Պատահա-

¹ Այդ մասին տե՛ս **Татьянина, Л. Г.** Выделение и соединение уголовных дел на предварительном слушании // Экономика и право, 2020, Т. 30, вып. 3, էջեր 445-449; **Ретюнских, И. А.** Современные проблемы соединения и выделения уголовных дел. Актуальные проблемы борьбы с преступлениями и иными правонарушениями. Материалы пятнадцатой международной научно-практической конференции, часть 1, Барнаул 2017, էջեր 146-147; **Рязанцев, В. А.** Процессуальный порядок выделения уголовного дела и материалов в стадии предварительного расследования // Научный портал МВД России, № 3, 2014, էջեր 24-28:

² Տե՛ս **Кадацкий, С.Н.** Соединение и выделение уголовных дел в стадии предварительного расследования: Дисс. ... канд. юрид. наук. – Караганда, 2009, էջ 148:

կան չէ, որ որոշ պետությունների քրեադատավարական օրենսգրքեր վարույթների անհիմն անջատումը գնահատում են որպես վարույթը խոչընդոտող հանգամանք և անգամ հնարավորություն են նախատեսում դատական քննության փուլում գտնվող վարույթը վերադարձնելու դատախազին՝ վարույթների միացման հարցը լուծելու³:

Հետազոտական մաս

Քրեական վարույթների (քրեական գործերի) անջատման ինստիտուտը նախատեսված էր 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 28), այն նախատեսվեց նաև 2021 թվականի հունիսի 30-ի քրեական դատավարության օրենսգրքում (հոդված 10): Թեև քրեական վարույթների անջատման դատավարական կարգը սահմանող իրավադրույթները բովանդակային առումով էականորեն չեն տարբերվում, սակայն նոր օրենսգրքում, հաշվի առնելով Եվրոպական դատարանի իրավաբանությունը, որոշակիացվել և հստակ ամրագրվել են նոր վարույթ անջատելու շարժառիթը, ինչպես նաև այն ստուգանիշը, որը թույլ կտա գնահատել դրա իրավաչափությունը⁴:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Մեկից ավելի անձանց կողմից մեկ կամ ավելի ենթադրյալ հանցանքներ կատարելու կապակցությամբ իրականացվող վարույթից կարող է անջատվել նոր վարույթ, եթե դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա»*:

Ինչպես երևում է վերոգրյալից, մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարմանը մասնակից անձանց նկատմամբ քրեական գործից մաս անջատելը քննիչի, դատախազի կամ դատարանի հայեցողական լիազորության տիրույթում է, սակայն յուրաքանչյուր դեպքում նման որոշում կայացնելիս նրանք պետք է հիմնավորեն, որ

1. դա թելադրված է արդարադատության շահի պաշտպանության անհրաժեշտությամբ և,

2. դա չի կարող բացասաբար անդրադառնալ վարույթի արդարացիության վրա:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի վերոգրյալ կանոնի կիրառմամբ գործից մաս անջատելու և այն առանձին քննելու դրույթը սերտորեն փոխկապված է ՀՀ քրեական դատավարության օրենսդրության մի

Կարևորվել է նաև դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվող դատական սանկցիաների կամ իրավական ներգործության այլ համաչափ միջոցների ընտրությունը, որը դատարանի հայեցողական լիազորությունն է և պայմանավորված է դատավարության մասնակիցների իրավունքների, ինչպես նաև օրենքով պահպանվող մասնավոր և (կամ) արդարադատության իրականացման հանրային շահերի խախտումների վերացման, դրանց հակազդելու արդյունավետության աստիճանով:

Բանալի բառեր – *իրավունքի չարաշահում, պարտականության ոչ բարեխիղճ կատարում, նպատակային նշանակությանն անհամապատասխան գործել, իրավունքի իրական կրող, ոչ իրավաչափ ակնկալիք, իրավախախտում, անբարեխիղճ վարքագիծ, չարաշահման արգելք, կանխավարկած, իրավական ներգործության միջոց, սանկցիա, հայեցողություն*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի¹ (այսուհետ՝ նաև ՔԴՕ) 14-րդ հոդվածը ամրագրելով դատավարական իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքը, միաժամանակ պայմաններ է պարունակում ՀՀ Սահմանադրության² (այսուհետ՝ նաև Սահմանադրություն) 75-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ապահովման, իրավունքներն իրականացնելիս այլ անձանց իրավունքների և հանրային շահերի խախտման կամ ոտնահարման արգելքի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի³ (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) 6-րդ և 13-րդ հոդվածների վերաբերյալ ՄԻԵԴ դիրքորոշումներում արդար դատաքննության իրավունքի օրգանական և գործառության լիարժեք իրացման և իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորման համար:

Մասնավորապես, ներկայիս քաղաքացիադատավարական իրավակարգավորումների համաձայն՝ դատավարության մասնակիցները պետք է իրենց

¹ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի, ընդունվել է 2018 թ. փետրվարի 9-ին, ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), հոդված 1, 2. 1 մաս:

² Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 06.12.2015 թ., ՀՀՊՏ 2015.12.21 / Չատուկ թողարկում, հոդ. 1118:

³ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա, ընդունվել է 04.11.1950 թ., ՀՀՊՏ 2002.06.05/17(192), հոդ. 367:

դատավարական իրավունքներից օգտվեն և իրենց դատավարական պարտականությունները կատարեն բարեխղճորեն: Դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվում են չարաշահմանը համաչափ՝ օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ (ՀՀ ՔԴՕ հոդված 14-րդ, 1-ին և 2-րդ մասեր): Ընդ որում, իրավունքների չարաշահման արգելքը, որպես ելակետային դրույթ նախատեսված լինելով Կոնվենցիայի 17-րդ հոդվածով, արգելում է կոնվենցիոն դրույթների որևէ մեկնաբանում այն իմաստով, թե որևէ պետություն, անձանց խումբ կամ որևէ անձ իրավունք ունեն զբաղվելու այնպիսի գործունեությամբ կամ կատարելու այնպիսի գործողություն, որն ուղղված է Կոնվենցիայում շարադրված ցանկացած իրավունքի և ազատության վերացմանը կամ դրանց սահմանափակմանն ավելի մեծ չափով, քան նախատեսված է Կոնվենցիայով: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում իրավունքների չարաշահման արգելքն ուղղված է կոնվենցիոն իրավունքների լիարժեք, ամբողջական ծավալով արդյունավետորեն ապահովելու կառուցակարգերի ներդրման՝ պետության պոզիտիվ պարտականության ճիշտ մեկնաբանմանը՝ փաստացի ներառելով ներպետական, այդ թվում՝ դատական պաշտպանության միջոցով սուբյեկտիվ իրավունքները և օրինական շահերը բացառապես իրավաչափ նպատակներով և դրանց էությանը համապատասխան երաշխավորելը⁴:

Իրավունքների չարաշահման անթույլատրելիության՝ կոնվենցիոն պահանջի արդյունավետ ապահովման կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը բխում է դեռևս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Արդարադատության արդյունավետության բարձրացմանն ու կատարելագործմանն ուղղված քաղաքացիական դատավարության սկզբունքների»՝ 28.02.1984 թ. թիվ 84(5) հանձնարարականի բովանդակությունից (այսուհետ՝ նաև Հանձնարարական), որը պայմանավորվող պետությունների համար արդարադատության արդյունավետ իրականացումը խոչընդոտող քաղաքացիադատավարական կարգավորումները բացառող, դատական գործընթացները ձգձգող և դրանց էությունը խեղաթյուրող չարաշահումները կանխարգելող իրավական ներգործության միջոցների հնարավորություն է սահմանում՝ դրանց շրջանակ ներառելով դատավարական իրավունքների սահմանափակումը (դատավարական գործողությունների կատարման հնարավորությունից զրկելը), վնասների հատուցումը, դատական ծախսերի բաշխման անհամաչափ բեռ սահմանելը, հայցային պահանջներն առանց քննության թողնելը, դատական սանկցիա կիրառելը, արագացված դատաքննության կամ պարզեցված կարգով եզրափակիչ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելը⁵:

⁴ Տե՛ս Եվրոպական դատարանի *Zemmour v France* (dec), no. 63539/19, 20/12/22, *Zhablyanov v. Bulgaria*, no 36658/18, 20/12/22 վճիռներ և այլն:

⁵ Տե՛ս Հանձնարարականի 1-ին սկզբունքի 2-րդ մաս, 2 -րդ սկզբունք և այլն:

Հանձնարարականը, համադրելով դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումները⁶, իրավունքների չարաշահման արգելք է սահմանել քաղաքացիական դատավարության կարգով գործերի քննության ողջ ընթացքի համար՝ ներառելով նաև գործն ըստ էության լուծող եզրափակիչ դատական ակտի կատարման փուլային սահմանները:

Մահմանադրական դատարանը 24.09.2013 թվականի թիվ ՄԴՌ-1115 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտի նպատակը, վերջին հաշվով, խախտված իրավունքները վերականգնելու նկատառումներով արդարադատության իրականացման արդյունքում ընդունված ակտի կատարումն ապահովելն է: Այսինքն՝ դատական ակտերի հարկադիր կատարում պահանջելու իրավունքն ածանցվում է դատարանի մատչելիության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքներից, որպիսի պայմաններում այդ իրավունքը պետք է վերապահվի դատավարության այն մասնակցին, որի խախտված իրավունքը վերականգնելու նպատակով ընդունվել է համապատասխան դատական ակտ կամ դատական գործառնություններ իրականացնող մարմնի ակտ: Հետևաբար, դատական ակտերի հարկադիր կատարման ինստիտուտը դատարանի մատչելիության իրավունքի բաղադրատարր է և «իր գործի հրապարակային քննության»՝ որպես դատավարական գործընթացի փուլ:

Իրավունքների չարաշահման անթույլատրելիությունը, լինելով անգլոսաքսոնական և ռոմանագերմանական իրավական համակարգերում միջգիտակարգային և միջճյուղային գործողության սկզբունք, թե՛ հայրենական, թե՛ արտասահմանյան իրավաբանական գրականության շրջանակներում տարբեր հետազոտողների շարունակական ուսումնասիրության առարկա է, որպիսի պայմաններում հատկապես կարևորվել է դրա առանձին տարրերի, իրացման ձևերի, սուբյեկտային շրջանակի, իրավական բնույթի և ապահովման քաղաքացիադատավարական կառուցակարգերի համակարգային վերլուծությունը:

Իրավաբանական գրականության մեջ իրավունքների չարաշահման բնորոշման կամ հասկացության ձևակերպման միասնական մոտեցում մինչ օրս չի ձևավորվել, սակայն դրանց ընդհանրացումը հանգում է իրավունքի ոչ նպատակային իրացման դրսևորումները, ինչպես նաև այն իրավունքները և շա-

⁶ Արդար դատաքննության իրավունքը ներառում է գործի փաստական հանգամանքներին համապատասխան օրինական և հիմնավորված դատական ակտի կայացման և դատական ակտի կատարման իրավունքները՝ իրավունքի իրական վերականգնումը, առանց որի դատական պաշտպանության արդյունքները կդառնան առոչինչ (Եվրոպական դատարանի Case of Hornsby v Greece, judgment, 27.09.1976 վճիռ):

հերն ընդգծելուն, որոնք կարող են վնասվել քաղաքացիական դատավարությունում իրավունքի չարաշահման դեպքում⁷: Ընդ որում, իրավունքի չարաշահումը բնորոշվում է որպես քաղաքացիական դատավարական իրավախախտման հատուկ ձև՝ գործին մասնակցող անձանց կողմից սուբյեկտիվ դատավարական իրավունքների իրացման պայմանների խախտմամբ դիտարկությամբ կատարված գործողություն, որի նպատակը գործին մասնակցող այլ անձանց իրավունքների իրացման հնարավորության սահմանափակումը կամ խախտումն է, ինչպես նաև արդարադատության արդյունավետությունը, դատարանի կողմից գործի արագ և ճիշտ քննությունը խոչընդոտելը, որը հանգեցնում է դատավարական հարկադրանքի կիրառման⁸:

Իրավունքի չարաշահումը իրավախախտման ինքնուրույն տեսակ դիտարկելու մոտեցումը տեղ է գտել նաև ՔԴՕ-ի փոփոխության օրենսդրական առաջարկի հիմնավորումներում⁹, որտեղ ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1397/02/11 քաղաքացիական գործով 08.10.2020 թ. որոշմամբ ձևավորված պրակտիկայի վերլուծությունը հանգել է իրավունքի չարաշահումը որպես իրավախախտման տեսակ դիտարկելուն:

Իրավաբանական գրականության մեջ և դատական պրակտիկայում տեղ գտած ձևակերպումներն անհրաժեշտ են, սակայն բավարար չեն իրավունքների չարաշահումը սահմանելու և բովանդակությունը բացահայտելու համար: Մասնավորապես, չի կարելի իրավունքների չարաշահումը նույնացնել իրավախախտմանը կամ դրա բնորոշման հիմքում դնել բացառապես իրավունքի ոչ նպատակային իրացման հանգամանքը:

Հարկ է նշել, որ ներկայումս ՀՀ վճռաբեկ դատարանն իր մի շարք որոշումներով տարանջատել է իրավունքի չարաշահումն ու իրավախախտումը որպես առանձին հասկացություններ¹⁰, սակայն, ինչպես իրավագիտորեն նշում է պրոֆեսոր Գ. Դանիելյանը, որն է կերպ չի բացահայտել, թե ինչ չափանիշներով է դա արել:

Ի տարբերություն իրավախախտման՝ իրավունքների չարաշահման պարագայում դատավարության մասնակիցն առերևույթ գործում է օրենքի պահանջներին համապատասխան, իրավական նորմերով թույլատրելի վարքագծի սահմաններում: Ընդ որում, դատավարական իրավունքների չարաշահման փաստը գնահատելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ դատավա-

⁷ Տե՛ս **Թորոսյան, Գ., Թորոսյան, Ս.** Իրավունքի չարաշահում, Եր., «Հայրապետ» հրատ., 2019, էջեր 338-339:

⁸ Տե՛ս **Юдин, А.В.** Злоупотребление процессуальными правами в гражданском судопроизводстве, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Санкт-Петербургский государственный университет. СПб., 2009, էջեր 14-16:

⁹ Տե՛ս http://www.parliament.am/draft_docs8/K-902_himnavorum.pdf 16.12.2024:

¹⁰ Տե՛ս **Դանիելյան, Գ.** Իրավունքի չարաշահումը // Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն, թիվ 2, 3-21, 2021, էջ 12, <https://doi.org/10.46991/BYSU:C/2021.12.2.003>:

րության մյուս մասնակիցների՝ արդյունավետ արդարադատության նպատակներին համընկնող իրավունքների և օրինական շահերի խախտման վտանգին կամ հնարավորությանը, որն աներկբայորեն պետք է պայմանավորված լինի իրավունքը ոչ իրավաչափ ակնկալիքներով կամ դրա նշանակությամբ հակառակ, ոչ նպատակային իրացնելու հանգամանքով:

Մեր կարծիքով՝ իրավունքների չարաշահումը ոչ իրավաչափ վարքագծի ինքնուրույն տեսակ է, որը, ի տարբերություն իրավախախտման, առերևույթ չի դրսևորվում իրավական նորմերի պահանջների, քաղաքացիական շրջանառության մասնակիցների սուբյեկտիվ իրավունքների կամ հանրային շահերի խախտմամբ, չունի հստակորեն ձևակերպված և որոշակի օբյեկտիվ կողմ: Ուստի, կարող ենք փաստել, որ դատավարական իրավունքների չարաշահումը ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման ինքնուրույն ձև է, որը հանգում է դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական իրավունքներն ու պարտականությունները ոչ բարեխղճորեն, այն է՝ ոչ իրավաչափ ակնկալիքներով կամ դրանց նպատակային նշանակությանն անհամապատասխան իրացնելուն:

Այսպես, ՀՀ ՔԴՕ 32-47-րդ հոդվածների համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դատավարության մասնակիցների իրավունքները հանգում են դատավարական օրենքով սահմանված գործողությունների կատարման հնարավորությանը կամ դրանից ձեռնպահ մնալուն: Հանրահայտ ճշմարտություն է, որ դատավարական գործողություններն ուղղված են կոնկրետ դատավարական նպատակների իրացմանը, որոնք վերջնականորեն ապահովում են արդարադատության արդյունավետ իրականացումը, հանգում են սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությանն ու օրինական և հիմնավորված դատական ակտ կայացնելուն: Հետևաբար, իրավունքի չարաշահումը հնարավոր է նաև այն դեպքում, երբ անձը դատավարական գործողության կատարման հնարավորությունն իրացնում է դրա նպատակային նշանակությամբ համապատասխան, սակայն ոչ իրավաչափ ակնկալիքներով: Մասնավորապես, ՀՀ ՔԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում: Վերոնշյալ իրավակարգավորմամբ օրենսդիրը բացառել է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման առկայության պայմաններում քաղաքացիական գործի հարուցման և գործի քննությանն ուղղված դատավարական գործողությունների կատարման հնարավորությունը, ինչը կանխորոշում է դատարանի դիմողի համար հայցադիմումի ընդունումը մերժելու որոշումը բողոքարկելու միջոցով իր դատական պաշտպանության իրավունքն իրացնելու վարքագծի դրսևորումը, որն ուղղված կլինի քաղաքացիական գործի հարուցման նպատակին հասնելուն: Հետևաբար, այս պարագայում հայցադիմումը կրկին ներկայացնելը չի

կարող լինել քաղաքացիական գործի հարուցմանն ուղղված դատավարական գործողություն, թեև կողմը նշված դատավարական գործողությունը կատարելիս միանշանակորեն հաղես է գալիս այդպիսի նպատակադրմամբ, սակայն դատավարական գործողության կատարման ակնկալիքներն ինքնըստինքյան դառնում են ոչ իրավաչափ փաստելով իրավունքի չարաշահման առկայությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը հստակորեն արձանագրել է, որ «իրավունքի չարաշահման» պարտադիր պայման է որևէ իրավունք իրականացնելիս այնպիսի վարքագիծ դրսևորելը, որը, թեև ձևականորեն դուրս չի գալիս անձի սուբյեկտիվ իրավունքի բովանդակությունը կազմող իրավագործությունների (օրենքով երաշխավորված իրավական հնարավորությունների) շրջանակից, սակայն վնաս է պատճառում իրավաստիքոջ հետ փոխհարաբերվող այլ անձանց կամ հանրային շահերին¹¹:

Մեր կարծիքով ժամանակավրեպ է նաև իրավունքի չարաշահումը բացառապես դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ թույլ չտալու՝ դատավարական իրավունքի տեսության մեջ շրջանառվող մոտեցումը: Նախևառաջ, ՀՀ ՔԴՕ 14-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվում են չարաշահմանը համաչափ՝ օրենսգրքով նախատեսված դատական սանկցիաներ կամ օրենքով նախատեսված իրավական ներգործության այլ միջոցներ: Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դատավարության մասնակիցների պատշաճ վարքագիծն ապահովող բազմաթիվ իրավակարգավորումներ և կառուցակարգեր է պարունակում, որոնք պետական հարկադրանքի տարրեր չպարունակող իրավական ներգործության միջոցներ են ենթադրում և լայնորեն կիրառվում են դատական պրակտիկայում: Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը, «09» հոկտեմբերի 2024 թ. թիվ ՍԴ3/0572/02/20 որոշմամբ արձանագրելով բողոքաբերի կողմից վճռաբեկ բողոքարկման իրավունքի չարաշահման փաստը (*բողոքաբերը հանդես է եկել ձևականորեն օրենքի պահպանմամբ, սակայն իրավունքի նպատակային նշանակությանը հակառակ գործելու մտադրությամբ*), առանց քննարկման է թողել վճռաբեկ բողոքը, որը փաստացի հարկադրանքի տարրեր չպարունակող իրավական ներգործության միջոցի կիրառման դասական օրինակ է: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը արձանագրել է, որ իրավունքի չարաշահմամբ ձեռք բերված սուբյեկտիվ իրավունքը ենթակա չէ պաշտպանության, իսկ արդարադատություն իրականացնող մարմինը չի կարող կրել ոչ իրավաչափ նպատակ հետապնդող ակնկալիքին պաշտպանություն տրամադրելու պարտականություն, քանի որ այդ կերպ արդարադատություն իրականացնող

¹¹ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/ 1397/02/11 քաղաքացիական գործով 08.10.2020 թ. որոշում, ՍԴ3/0572/02/20 քաղաքացիական (սնանկության) գործով «09» հոկտեմբերի 2024 թ. որոշում:

մարմինը, ըստ էության, կօրինականացնի անբարեխիղճ վարքագիծն ու իրավունքի չարաշահումը՝ հեղինակագրվելով ամբողջ դատական իշխանությունը:

Հատկանշական է, որ Վճռաբեկ դատարանը չարաշահման բացասական հետևանքները և դրա լուծման մեխանիզմները, այդ թվում՝ կիրառման ենթակա համարժեք ներգործության միջոց օրենսդրությամբ ուղղակիորեն նախատեսված չլինելու հանգամանքն իրավական որոշակիության տեսանկյունից խնդրահարույց չի համարել և գտել է, որ արդարադատություն իրականացնող մարմինն պետք է ընձեռվի կոնկրետ դեպքի առանձնահատկություններին պատշաճ արձագանքելու հնարավորություն՝ արդարադատություն իրականացնող մարմինն հայեցողություն տրամադրելով կոնկրետ դեպքում կիրառման ենթակա իրավական հետևանքի առնչությամբ:

Քաղաքացիական դատավարությունում իրավունքների չարաշահման արգելքը կարող է դրսևորվել ինչպես իրավունքներից ոչ բարեխղճորեն օգտվելու հնարավորությունը բացառելուն, այնպես էլ դատավարության մասնակիցների կողմից բացառապես բարեխիղճ վարքագծի դրսևորումներն ապահովելուն ուղղված դատավարական գործիքակազմի կիրառման հնարավորությամբ (շեղատառը հեղինակինն է՝ Վ. Հ.): Այսպես, իրավունքից ոչ բարեխղճորեն օգտվելու արգելքը նախատեսված է, օրինակ, ՔԴՕ 152-րդ հոդվածի 8-րդ մասով, որը դատարանին իրավունք է վերապահում մերժելու գործին մասնակցող անձի միջնորդությունը, եթե այն ներկայացվել է միջնորդություն ներկայացնելու իրավունքի չարաշահմամբ՝ ակնհայտորեն նպատակ հետապնդելով խափանելու դատական նիստը, ձգձգելու գործի դատական քննությունը: Իրավունքներից բարեխղճորեն օգտվելու դատավարական արդյունավետ գործիքակազմ են նախատեսում, օրինակ, ՔԴՕ 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 292-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հայցն (դիմումն) առանց քննության թողնելու և հեռակա դատաքննություն կիրառելու իրավակարգավորումները: Մասնավորապես, դատարանը հայցը (դիմումը) թողնում է առանց քննության, եթե ծանուցված հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, և պատասխանողը չի միջնորդել գործի քննությունը շարունակելու վերաբերյալ, բացառությամբ այն գործերի, որոնցում սկզբնական հայցի հետ քննվում է նաև հակընդդեմ հայց: Բացի այդ, առաջին ատյանի դատարանը հայցվորի, իսկ գործին մի քանի հայցվորների մասնակցության դեպքում՝ նրանց բոլորի համաձայնությամբ իրավունք ունի կիրառելու հեռակա դատաքննություն այն դեպքերում, երբ ծանուցված պատասխանողը չի ներկայացել նախնական դատական նիստին և չի ներկայաց-

րել գործի քննությունը հետաձգելու, գործն իր բացակայությամբ՝ ներկայացված փաստաթղթերի և նյութերի հիման վրա քննելու կամ դատական նիստն իր բացակայությամբ անցկացնելու մասին միջնորդություն:

Քաղաքացիական դատավարությունում իրավունքների չարաշահման արգելքը ներառում է նաև դատավարական պարտականությունների պատշաճ կատարումն ապահովող կառուցակարգերը, որպիսիք առավելապես ուղղված են դատավարական պարտականությունների չկատարման, ոչ պատշաճ կամ անբարեխիղճ կատարման համար իրավական հետևանքներ նախատեսելուն: Ընդ որում, ՔԴՕ-ի և դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատական սանկցիաների կիրառումն առավելապես պայմանավորված է օրենքով կամ դատարանի կողմից սահմանված պարտականությունների չկատարմամբ (ՔԴՕ հոդվածներ 64-րդ, 69-րդ, 132-րդ) և այլն¹²: Հարկ է նշել, որ դատավարական պարտականությունների պատշաճ կատարումն օրենսդիրն ապահովում է նաև պետական հարկադրանքի տարրեր չպարունակող դատավարական ներգործության միջոցներով: Մասնավորապես, ՔԴՕ 63-րդ հոդվածի համաձայն՝ դատարանն ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշմամբ սահմանված ժամկետի ավարտից հետո գործին մասնակցող անձի ներկայացրած լրացուցիչ ապացույցի ընդունումը կամ ապացույց ձեռք բերելուն ուղղված միջնորդությունը մերժում է, եթե դրանք ներկայացնողը չի հիմնավորում դատարանի սահմանած ժամկետում տվյալ ապացույցը կամ միջնորդությունը ներկայացնելու անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով: Այսինքն՝ նշված իրավակարգավորումն առնվազն ապահովում է գործին մասնակցող անձանց՝ ապացուցման բեռի շրջանակներում օրենքով կամ դատարանի կողմից սահմանված ժամկետներում ապացույցներ ներկայացնելու կամ ապացույցներ ձեռք բերելուն ուղղված միջնորդությունները բարեխղճորեն կատարելու պարտականությունը, որպեսզի վերջիններս խուսափեն բացասական դատավարական հետևանքներից:

Հատկանշական է, որ դատավարական պարտականությունների բարեխիղճ կատարումը, ուղղված լինելով արդարադատության արդյունավետության, ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի ապահովմանը, նույնպես չարաշահման արգելքի բովանդակային տարր է: Հիմք ընդունելով և զարգացնելով ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումները (տե՛ս ՄԴՈ-652, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-765, ՄԴՈ-844, ՄԴՈ-873, ՄԴՈ-890, ՄԴՈ-932, ՄԴՈ-942, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1052, ՄԴՈ-1115, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192, ՄԴՈ-1196, ՄԴՈ-1197, ՄԴՈ-1220, ՄԴՈ-1222, ՄԴՈ-1257, ՄԴՈ-1289, ՄԴՈ-1420 որոշումներ), ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ «իրավակարգի միջոցով պետք է արդար բաշխվեն իրավունքները և

¹² ՔԴՕ քննարկվող հոդվածներով օրենսդիրը դատավարության մասնակիցների կողմից օրենքով կամ դատարանի կողմից սահմանված դատավարական պարտականությունները չկատարելու համար սահմանել է դատական տուգանքի կիրառում:

պարտականությունները, արդար լուծվեն իրավունքների ու շահերի բախումները, այսինքն՝ արդարությունը նախ ունի ձևական տեսանկյուն, որի իմաստն այն է, որ իրավունքը բոլորի համար հավասար է: Արդարության հիմնաքարը հավասարության գաղափարն է և հիմնված է ոչ կամայականորեն փոփոխելի արժեհամակարգի վրա: Մահմանադրորեն ամրագրված արդյունավետ և ողջամիտ ժամկետում դատական պաշտպանության, արդար դատաքննության, դատարանի մատչելիության և բողոքարկման իրավունքները երաշխավորված իրավունքներ են **նաև դատավարության մյուս կողմի համար**: Շահագրգիռ անձը, դատարան դիմելով, իրացնում է դատական պաշտպանության, արդար դատաքննության իր իրավունքը, որը միաժամանակ ՀՀ Մահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունք է նաև դատավարության մյուս կողմի համար»¹³: Այսինքն՝ ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է իրավունքների և պարտականությունների հավասարակշռումը, որը ներառում է նաև իրավունքներից օգտվելու և պարտականությունները կատարելու բարեխղճությունը:

Վերոգրյալից կարող ենք բխեցնել, որ դատավարական պարտականությունների բարեխիղճ կատարման սկզբունքը՝ որպես հավասարության պայմաններում գործի քննության իրավունքի ապահովման կառուցակարգ, լինելով չարաշահման արգելքի բաղադրատարր, միաժամանակ ուղղված է ինչպես գործի քննության մասնակիցների մասնավոր դատավարական շահի, այնպես էլ արդյունավետ արդարադատության վերջնական նպատակներով պայմանավորված հանրային շահերի կենսագործմանը:

Ընդհանրացնելով իրավունքի տեսության մեջ առկա մոտեցումները՝ Մահմանադրական դատարանը 12.02.2021 թվականի թիվ ՄԴՌ-1576 որոշմամբ բացահայտել է այն «չափորոշիչները», որոնց հիման վրա արարքը կարող է գնահատվել որպես իրավունքի չարաշահում: Մասնավորապես, նշված որոշմամբ ընդգծել է, որ՝

«Իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը.

1. անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը,
2. իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան,
3. անձի՝ առերևույթ իրավաչափ գործողությունները հանգեցնում են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձը ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին,
4. իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար,

¹³ ՀՀ վճռաբեկ դատարանի 16.12.2020 թվականի թիվ ԵԴ/16359/02/18 որոշում:

պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին:

Այդ առումով իրավունքի չարաշահման առանձնահատկությունն այն է, որ իրավունքի սուբյեկտն իր գործունեության ընթացքում գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, կատարում է օրենքով իր վրա դրված ֆորմալ պարտականությունները, սակայն խեղաթյուրում է իրավունքի նշանակությունը՝ գործելով տվյալ իրավանորմի նպատակային նշանակությանը կամ (...) իրավունքի նպատակին և ոգուն հակառակ, ինչի արդյունքում վնաս է հասցվում այլ անձին, պետությանը, հասարակությանը:

Կարծում ենք, որ դատավարական իրավունքի զարգացման տեսանկյունից խնդրահարույց են տեսության մեջ առկա և ՀՀ սահմանադրական դատարանի կողմից իրավունքի չարաշահման ինստիտուտի վերաբերյալ կատարված ընդհանրացումները: Մասնավորապես, իրավունքի չարաշահման համար որպես պարտադիր պայման է դիտարկվել համապատասխան իրավունքն ունենալու, այսինքն՝ իրավունքի կրող լինելու հանգամանքը: Մինչդեռ, անհրաժեշտ էր տարբերակել իրավունքի իրական և ձևական կրող լինելու հասկացությունները, որպիսին անտեսվել կամ ուշադրության չի արժանացել թե՛ դատավարագետների կողմից, թե՛ ՀՀ սահմանադրական դատարանի՝ խնդրո առարկային վերաբերող դիրքորոշումներում: Այսպես, իրավունքի չարաշահում կարող է թույլ տալ համապատասխան իրավունքի իրական կրող չհանդիսացող անձը: Օրինակ՝ ՀՀ ՔԴՕ 126-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշում, ինչը ենթադրում է համապատասխան անձի՝ նույնական հայցով դատարան դիմելու հնարավորության սպառվելը՝ բացառությամբ վերադաս դատական ատյանի կողմից հացադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումը վերացնելու դեպքի: Հետևաբար, հացադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման առկայությունը հայցի իրավունքի բացասական նախադրյալների¹⁴ խախտում է, ինչը վկայում է համապատասխան անձի՝ քաղաքացիական դատավարության կարգով վարույթ նախաձեռնելու՝ հայց հարուցելու իրական իրավունքի բացակայության մասին, քանի որ յուրաքանչյուր պարագայում որևէ կերպ վերջինիս համար բացառվում է հայցադիմումը վարույթ ընդունելու իրավական հնարավորությունը: Այսինքն՝ այս դեպքում մենք գործ կունենանք հայցի իրական իրավունքով չօժտված անձի կողմից իրավունքի չարաշահման հետ, եթե վերջինս հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման առկայության պայմաններում քաղաքացիական գործի հարուցման նպատակադրմամբ նույնական հայցով դիմում է դատարան, ինչը նրա ակնկալիքը դարձնում է ոչ

¹⁴ Մանրամասն տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության դասագիրք (Վ. Հովհաննիսյանի, Ս. Մեղրյանի խմբագրությամբ), Եր., «Հայրապետ» հրատ., 2022, 372-376 էջեր:

իրավաչափ, հանրային և մասնավոր շահերին հակասող: Ուստի, թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով իրավունքի չարաշահում կարող են թույլ տալ նաև համապատասխան իրավունքի իրական կրող չհանդիսացողները կամ իրավունքն իրացնելու իրական հնարավորությամբ չօժտված անձինք:

Կարծում ենք, որ ներկայացված հակասության հաղթահարման նպատակով անհրաժեշտ է ներդնել և դատավարական առումով կարևորել իրավունքի իրական կրող և ձևական կամ ֆորմալ կրող լինելու հանգամանքները, որպիսին հնարավորություն կընձեռի նաև իրավունքի չարաշահման արգելքն ապահովող իրավական ներգործության միջոցների կիրառմամբ բացառելու ոչ իրավաչափ ակնկալիքներով դատավարական գործողությունների կատարման կամ իրավունքի ոչ նպատակային օգտագործման հնարավորությունը:

Դատավարական իրավունքի տեսության մեջ առավել ընդունելի կարելի է համարել իրավունքի չարաշահումը գործի ճիշտ և ժամանակին քննության ու լուծման կամ կողմերի հավասարության դեմ ուղղված կամ կողմի համար ծայրահեղ անարդար հետևանքների հանգեցնող՝ իրավունքի անթույլատրելի իրացում դիտարկելը¹⁵: Նշված ձևակերպմամբ իրավունքի անթույլատրելի իրացումը կարող է գնահատվել բացառապես չարաշահման արգելքի սկզբունքի տարածական մեկնաբանմամբ, որի պարտականությունը կրում է դատարանը:

Ինչպես տեսնում ենք, իրավունքի չարաշահման՝ տեսության մեջ տեղ գտած մոտեցումները լիարժեքորեն չեն ապահովում քաղաքացիական դատավարությունում իրավունքի չարաշահման արգելքի դրսևորման սուբյեկտային և բովանդակային առանձնահատկությունները: Մասնավորապես, դատարանը՝ որպես քաղաքացիական դատավարության հիմնական և պարտադիր սուբյեկտ և պետական իշխանության մարմին, կարող է ոչ թե իրավունքի չարաշահում, այլ լիազորությունների չարաշահում թույլ տալ¹⁶: Վերոգրյալը չի ենթադրում, սակայն, որ պետական մարմինները քաղաքացիական դատավարությունում բացառապես լիազորությունների չարաշահման հնարավորության կրողներ են, քանի որ դատավարական իրավունքների և պարտականությունների կատարման չարաշահում կարող է թույլ տալ քաղաքացիական դատավարության մասնակցի կարգավիճակ ունեցող յուրաքանչյուր անձ՝ անկախ հանրային իրավունքի սուբյեկտ կամ պետական իշխանության մարմին լինելու հանգամանքից: Քաղաքացիական դատավարության օրենսգրքում հստակորեն սահմանված է *դատավարության մասնակիցների* (կողմեր, երրորդ անձինք, դիմողներ և դիմումի քննության ելքով շահագրգռված անձինք,

¹⁵ Տե՛ս Abuse in issuing speculative proceedings <https://www.mills-reeve.com/publications/issuing-claim-forms-can-involve-abuse-of-process/> 16.12.2024, **Старицын, А. Ю.** О злоупотреблении правом в гражданском процессе, <https://lawinfo.ru/releases/675/arbitraznyi-i-grazdanskii-process-7-2024> 16.12.2024 և այլն:

¹⁶ Տե՛ս **Դանիելյան, Գ.** նշվ. աշխ., էջ 10:

նրանց ներկայացուցիչները, վկա, փորձագետ, մասնագետ, թարգմանիչ, իրավասու անձինք և մարմինները՝ օրենքով նախատեսված դեպքերում) կողմից իրավունքների և պարտականությունների չարաշահման արգելքը, որը վերաբերում է բացառապես քաղաքացիադատավարական կոնկրետ կարգավիճակ ունեցող սուբյեկտներին: Հետևաբար, դատարանի՝ որպես քաղաքացիադատավարական հարաբերությունների սուբյեկտի կողմից իրավունքի չարաշահման հնարավորությունն ի սկզբանե բացառվել է, քանի որ օրենսդիրը հատակորեն սահմանել է իրավունքի չարաշահման սուբյեկտային շրջանակը՝ ՔԴՕ 30-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց՝ դատավարության մասնակիցներին, որոնց մեջ դատարանը ներառված չէ:

Իրավունքի չարաշահման արգելք սահմանող ՔԴՕ նորմերի համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք փաստել նաև, որ քաղաքացիական դատավարությունում գործում է դատավարության մասնակիցների **բարեխղճության կանխավարկածը** (ընդգծումը հեղինակինն է): Բարեխղճության կանխավարկածը ենթադրում է, որ դատավարության մասնակիցներն իրենց դատավարական իրավունքներից օգտվում են և իրենց դատավարական պարտականությունները կատարում են բարեխղճորեն, քանի դեռ դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով չի գնահատվել և հաստատվել իրավունքի չարաշահման փաստը: Հետևաբար, բարեխղճության կանխավարկածը ենթադրում է յուրաքանչյուր դեպքում իրավունքի չարաշահման փաստն արձանագրելու և գնահատելու՝ դատարանի պարտականությունը, որը կարող է իրացվել և՛ սեփական նախաձեռնությամբ, և՛ գործին մասնակցող անձի միջնորդության արդյունքում: Բարեխղճության կանխավարկածը քաղաքացիական դատավարությունում ունի կարևոր գործնական նշանակություն, քանի որ ի սկզբանե պայմանավորում է դատավարության մասնակիցների իրավունքների և պարտականությունների իրացումը, ինչպես նաև դրանց պաշտպանությունն ապահովելու՝ դատարանի պոզիտիվ պարտականության առկայությունն այն մեկնաբանմամբ, որ թե՛ նյութական, թե՛ դատավարական հարաբերություններում արգելվում է իրավունքների չարաշահման արդյունքների իրավական պաշտպանությունը: Այսինքն՝ դատարանի կողմից պաշտպանության ենթակա չեն բացառապես չարաշահմամբ ձեռք բերված իրավունքներն ու դրանց արդյունքները: Բացի այդ, *իրավունքի չարաշահման անթույլատրելիության սկզբունքի բովանդակությունից բխող բարեխղճության կանխավարկածն այս առումով պետք է քաղաքացիադատավարական այլ նորմերի մեկնաբանման ելակետ հանդիսանա, որպիսին դրված կլինի նաև քաղաքացիադատավարական գործառության սկզբունքների իրացման հիմքում* (շեղատառը հեղինակինն է՝ Վ. Հ.): Ընդ որում, օրենսդրական վերջին փոփոխությունների արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք են ներդրվել դատական սանկցիաներ, որոնք իրավունքի չարաշահման

դեպքում դատարանի կողմից դատական տուգանք կամ իրավունքի սահմանափակումը որպես ներգործության միջոց կիրառելու հնարավորություն են սահմանում¹⁷: Հարկ է նշել, որ իրավունքի սահմանափակումը որպես դատական սանկցիա կիրառելու հնարավորությունը նորոյթ է ՀՀ դատավարական իրավունքում: Մասնավորապես, դատավարության ընթացքում իրավունքի չարաշահմամբ դատավարական գործողությունների կատարումը, այդ թվում՝ դատական նիստը խափանելու, գործի քննությունը ձգձգելու, վարույթից դատավորին հեռացնելու կամ ոչ իրավաչափ այլ ակնկալիքներով նույնական կամ շարունակական միջնորդությունների հարուցումն օրենսդիրը հնարավոր է համարել կանխել իրավունքի սահմանափակումը դատարանի կողմից որպես սանկցիա կիրառելով, որը փաստացի բացառում կամ նվազագույնի է հասցնում իրավունքի չարաշահմամբ դատավարության մյուս մասնակիցների իրավունքներին և արդարադատության իրականացման հանրային շահերին վնաս պատճառելու հավանականությունը:

Ընդ որում, դատարանը իրավունքի սահմանափակումը կարող է իրականացնել ՔԴՕ-ով նախատեսված իրավունքների և դատավարական գործողությունների ժամանակային կամ քանակական սահմանափակումների սպառնիչ ցանկ սահմանելով, որպիսիք, սակայն, չպետք է հանգեցնեն դատավարության մասնակցի բուն իրավունքների բացառմանը կամ դրանց էության խաթարմանը: Ուստի, նախատեսվում է սահմանել գործի նյութերին ծանոթանալու, դրանց պատճեններ ստանալու, քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճենները անելու, բացարկ հայտնելու և ինքնաբացարկի միջնորդությամբ հանդես գալու, ապացույցներ ներկայացնելու և դրանց հետազոտմանը մասնակցելու, դատավարության մասնակիցներին հարցեր տալու, միջնորդություններ ներկայացնելու, ցուցմունքներ տալու, դիրքորոշում ներկայացնելու ժամանակային և քանակական սահմանափակումներ կիրառելու դատարանի իրավասությունը, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են վերանայվել համապատասխան սահմանափակումը կիրառած դատարանի կողմից:

Մեր կարծիքով՝ օրենսդրի կողմից որպես ելակետ պետք է ընդունվեր իրավունքի չարաշահումը բացառող կամ կանխող իրավական ներգործության միջոցների արդյունավետության գաղափարը: Դատավարական իրավունքների չարաշահմանը հակազդելու միջազգային առաջադեմ փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարաններն օժտված են չարաշահմանը համարժեք իրավական ներգործության միջոց ընտրելու և կիրառելու հայեցողությամբ, որպիսին պայմանավորված է դատավարության մասնակիցների իրավունքներին կամ գործի քննությանը վնասելու հավանականությունը չեզո-

¹⁷ Տե՛ս http://www.parliament.am/draft_docs/K-902_himnavorum.pdf 15.01.2025:

քացնելու, չարաշահման հետևանքները վերացնելու արդյունավետության աստիճանով: Դատավարական իրավունքների չարաշահմանը արդյունավետորեն հակազդել հնարավոր է ինչպես դատական սանկցիաների կիրառմամբ, այնպես էլ այնպիսի ներգործության միջոցներով, ինչպիսիք են գործին մասնակցող անձի վրա դատական ծախսերի հատուցման անհամաչափ բեռ դնելը, դատավարության մասնակիցներին պատճառված նյութական և ոչ նյութական վնասի, այդ թվում՝ ժամանակի կորստի ֆինանսական հատուցման պարտականություն սահմանելը, արագացված ռեժիմով իրավունքի պաշտպանությունը մերժելը, հարցը առանց քննության թողնելը և այլն¹⁸: Կարծում ենք, որ պրակտիկայում բավականին խնդրահարույց է լինելու իրավունքի՝ դատավարական գործողությունների կատարման ժամանակային և քանակական սահմանափակումները կիրառել այնպես, որ որևէ կերպ չբացառի կամ չհակասի դատական պաշտպանության կամ արդար դատաքննության իրավունքների բուն էությանը: Մասնավորապես, կրկնվող և շարունակական նույնաբովանդակ դատավարական գործողությունների կատարման պարագայում քանա-

¹⁸ Իրավունքների չարաշահմանը հակազդող ներգործության միջոցների կիրառման դատական լայն հայեցողություն է նախատեսված հատկապես ընդհանուր իրավական համակարգի երկրներում, երբ դատարանն իրավասու է կիրառելու չարաշահման հետևանքներն արդյունավետորեն չեզոքացնող իրավական ներգործության այնպիսի միջոցներ, որոնք բխում են չարաշահման կոնկրետ դեպքի առանձնահատկություններից:

Տե՛ս <https://www.lexisnexis.co.uk/legal/guidance/strike-out-no-reasonable-grounds-for-bringing-or-defending-the-claim-cpr-3-42a>, <http://wbus.westlaw.co.uk/parts/3pd.shtml>, <http://disputeresolutionblog.practicallaw.com/strike-out-and-summary-judgment-saeed-and-another-v-ibrahim-and-others/> 15.01.2025 և այլն:

Իրավունքի չարաշահման արգելքն ապահովող արդյունավետ կառուցակարգեր են նախատեսվել նաև մերձբայթյան երկրների դատավարական օրենսդրությամբ: Օրինակ՝ Լիտվայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձը, ով գործել է անբարեխիղճ (ներկայացրել է ներհայտ անհիմն հայց, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք, գործի քննությունը վերսկսելու մասին միջնորդություն կամ չարաշահմամբ այլ դատավարական փաստաթուղթ) կամ գիտակցաբար գործել է ընդդեմ գործի արդար և արդյունավետ քննության և լուծման, դատարանն իրավասու է պարտավորեցնելու փոխհատուցել գործին մասնակցող մյուս անձանց կրած վնասները: Բացի այդ, դատարանը հաստատված համարելով իրավունքի չարաշահման փաստը, կարող է իրավունքը չարաշահողի նկատմամբ կիրառել մինչև հինգ հազար եվրո դատական տուգանք: Ընդ որում, դատարանն իրավասու է իրավունքի չարաշահման հետևանքով հնարավոր վնասների կամ լրացուցիչ դատական այլ ծախսերի փոխհատուցումն ապահովելու համար պարտավորեցնել կողմին դրանց համարժեք գումար վճարել դեպոզիտ, եթե բավարար հիմքեր ունի ենթադրելու, որ վերջինս կարող է չփոխհատուցել դրանք (<https://e-seims.irs.lt/portal/legalact/it/tad/tais.162435/asr>): Էստոնիայի քաղաքացիական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարության այն կողմը, ով դատավարական ժամկետի խախտմամբ առարկություններ կամ ապացույցներ ներկայացնելով կամ այլ կերպ պատճառ է դառնում գործի քննության, դատավարական գործողության տեղափոխմանը կամ հետաձգմանը կամ ժամկետի հետաձգմանը, կրում է գործի լրացուցիչ այն ծախսերը հատուցելու պարտականություն, որոնք բխում են դրանից (տե՛ս <https://www.riigiteataja.ee/en/eli/522022023001/consolide>) 02.02.2025:

կական կամ ժամանակային սահմանափակման կիրառումը կարող է հակասական մեկնաբանությունների տեղիք տալ, այդ թվում՝ ընկալվել որպես կոնվենցիոն իրավունքների էությանը հակասող ներգործություն: Հետևաբար, ավելի ճիշտ կլիներ, որ **իրավունքի սահմանափակումն օրենսդրորեն ամրագրվեր որպես իրավունքի չարաշահմամբ կատարված դատավարական գործողությանն օրենքով սահմանված կարգով արձագանքելու կամ համարժեք դատավարական գործողություն կատարելու միջոցով դատավարության մասնակցի իրավունքի իրացումն ապահովելու՝ դատարանի պոզիտիվ պարտականության բացակայություն:** Այսպես, իրավունքի չարաշահմամբ ներկայացված միջնորդությունները դատարանի կողմից կարող են ընդհանրապես չքննարկվել, եթե դատարանն իր գնահատողական լիազորության կիրառմամբ արձանագրել է իրավունքի չարաշահման փաստը: Հատկանշական է, որ իրավունքի չարաշահմանը հակազդող իրավական ներգործության ընտրությունը դատարանի հայեցողության սահմաններում է, որը սահմանափակված է բացառապես չարաշահման արդյունքում իրավունքների և օրենքով ապահովվող շահերի խախտման հետևանքների վերացման արդյունավետությամբ: Դատական հայեցողության սահմաններում դատարանը պարտավոր է ընտրել և կիրառել իրավական ներգործության, այդ թվում՝ դատական սանկցիայի այնպիսի միջոց, որն առավելագույնս կապահովի չարաշահման հետևանքների արդյունավետ վերացումը: Մասնավորապես, եթե նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշման առկայության պայմաններում իրավունքի չարաշահմամբ շարունակաբար հայց է ներկայացվում, ապա հայցադիմումի ընդունումը մերժելը, որպես քաղաքացիական գործ հարուցելու դատարանի պոզիտիվ պարտականության բացակայության դրսևորում, արդյունավետ համարվել չի կարող, և իրավունքի չարաշահմանը հակազդելու արդյունավետ դատավարական միջոցը դատական տուգանքն է:

Բացի այդ, պարտադիր չէ, որ իրավունքի չարաշահումը բացառող կամ դրան հակազդող կոնկրետ դատավարական ներգործության միջոցները սպառնալիք կերպով սահմանված լինեն օրենքով, ինչը բխում է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի պրակտիկայից: ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ներգործության կոնկրետ միջոցի բացակայությունը պետք է գնահատվի դրա անհրաժեշտության տեսանկյունից, այն է՝ արդյո՞ք բացակայող ներգործության միջոցի կիրառումը բխում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների էությունից, կամ՝ արդյո՞ք այդպիսի ներգործության միջոցի բացակայությունը խաթարում է նշված սահմանադրական իրավունքների էությունը: «Արդարադատություն իրականացնող մարմնին պետք է ընձեռվի կոնկրետ դեպքի առանձնահատկություններին պատշաճ արձագանքելու հնարավորություն՝ արդարադատություն իրականացնող մարմնին հայեցողություն տրամադրելով

կոնկրետ դեպքում կիրառման ենթակա իրավական հետևանքի առնչությամբ»¹⁹:

Մեր կարծիքով՝ ՀՀ ՔԴՕ կարգավորումներում և դատական պրակտիկայում խնդրահարույց է նաև իրավունքի չարաշահումը բացառապես կոնկրետ քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում իրականացվող դատավարական գործողությունների գնահատմամբ արձանագրելը: Ճիշտ է, դատավարության օրենքի կիրառման արդյունքում ձևավորված պրակտիկայի տրամաբանությունից բխում է, որ դատարանը գնահատում է իր կողմից իրականացվող քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում դատավարության մասնակցի կողմից կատարվող գործողությունները, դատավարական իրավունքներից օգտվելու և դատավարական պարտականությունները կատարելու բարեխղճությունը, սակայն իրավունքի չարաշահումը կարող է պայմանավորված լինել նաև կոնկրետ քաղաքացիական գործով վարույթից դուրս ոչ իրավաչափ ակնկալիքներով կատարվող այնպիսի գործողություններով, որոնք ուղղակի բացասական ազդեցություն կամ ներգործություն են ունենում քննվող քաղաքացիական գործով դատավարության մասնակիցների իրավունքների, ինչպես նաև արդարադատության իրականացման հանրային շահերի վրա՝ հանգեցնելով դրանց խախտման կամ իրավունքի չարաշահման արդյունքում վրա հասնող նույնական հետևանքների: Օրինակ՝ ՔԴՕ 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը կասեցնում է քաղաքացիական գործով վարույթը, եթե անհնար է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Դատական պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ գործի քննությունը ձգձգելու համար գործին մասնակցող անձը այլ վարույթ է նախաձեռնում, որպեսզի դատարանին գործի քննությունը կասեցնելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնելու հնարավորություն ունենա: Հետևաբար, դատարանի կողմից պետք է գնահատվի քաղաքացիական գործով վարույթի մասնակիցների իրավունքների և պարտականությունների վրա ներգործող՝ նաև վարույթի շրջանակներից դուրս կատարվող գործողությունների բարեխղճությունը:

Հատկանշական է, որ իրավաբանական գրականության մեջ վերոնշյալ խնդիրն այս դիտանկյունից բավարար չափով չի վերլուծվել: Ժամանակակից դատավարագիտությանը հայտնի են այսպես կոչված չարաշահմանը հարակից ինստիտուտներ, որոնք լայնորեն կիրառվում են ընդհանուր իրավական համակարգի երկրներում՝ ապահովելով դատական վարույթի արդյունավետությունը, յուրիսդիկցիոն արդարադատության շահը, սակայն իրավունքի

¹⁹ Քաղաքացիական գործ թիվ ՄԴ3/0572/02/20 2024 թ., 09 հոկտեմբերի 2024 թ.:

չարաշահման տարածական գնահատում չի իրականացվել, ինչը հնարավորություն չի ընձեռում համակողմանիորեն բացահայտելու իրավունքի չարաշահման՝ որպես ոչ բարեխիղճ վարքագծի դրսևորման շրջանակները: Այսպես, անգլիական իրավունքում կիրառվող anti-suit injunction-ը, ուղղված լինելով դատարանի՝ քաղաքացիական գործը քննելու իրավասության ապահովմանը կամ պաշտպանությանը, ենթադրում է դատարանի կողմից գործին մասնակցող անձի նկատմամբ այնպիսի ներգործության միջոցների կիրառման հնարավորություն, որը բացառում է որևէ այլ դատարանում կամ մարմնում նույն անձանց միջև, նույնական փաստական հիմքերով, միևնույն առարկայով վարույթ նախաձեռնելու հավանականությունը կամ արդեն իսկ հարուցված քաղաքացիական գործի քննությունը: Ավելին, Անգլիայի Արդարադատության թագավորական դատարանը (Թագուհու արդարադատության ատյանի առևտրային պալատ) (The High Court of Justice, Queen's Bench Division Commercial Court) Արդարադատության բարձր դատարանի Անգլիայի և Ուելսի գործարարության և սեփականության գործերով առևտրային ատյանի (The High Court of Justice Business and Property Courts of England and Wales Commercial Court (QBD)) թիվ case No: CL-2021-000092 գործով 25.05.2021 թ. և 05.11.2021 թ. վճիռների հիման վրա 02.06.2021 թ. և 05.11.2021 թ. տրված օրոգրներով կողմին պարտավորեցրել է Երևանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննվող թիվ ԵՔԴ31505/02/19 գործի շրջանակներում մի դեպքում ակտիվություն չցուցաբերել, ինչը պետք է հանգեցներ հայցն առանց քննության թողնելու, իսկ երկրորդ դեպքում պարտավորեցրել է հրաժարվել հայցից²⁰: Քննարկվող ինստիտուտը թեև ընդհանրական է և ուղղված է անգլիական դատարանների իրավասության պաշտպանությանն անկախ այլ յուրիսդիկցիոն մարմնում նույն անձանց միջև, նույնական փաստական հիմքերով, միևնույն առարկայով հարուցված վարույթի առկայությունից կամ բացակայությունից, սակայն լիարժեքորեն ներառում է իրավունքի չարաշահման դրսևորումները՝ ենթադրելով դատարանի կողմից համապատասխան ներգործության միջոցների կիրառման հնարավորություն:

Հիմք ընդունելով դատավարական նորմերն իրավունքի անալոգիայով կիրառելու օրենսդրական հնարավորությունը (ՔԴՕ հոդվ. 4, մաս 1-ին), ինչպես նաև արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն ապահովելու կոնվենցիոն պահանջի անմիջական իրացման անհրաժեշտությունը՝ կարող ենք եզրակացնել, որ ՔԴՕ 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքների չարաշահման անթույլատրելիության սկզբունքն անհրաժեշտ է կիրառել լայն տարածական մեկնաբանմամբ, իսկ դատավարական իրավունքներից

²⁰ St' u <https://jsumundi.com/en/document/decision/en-vtb-bank-pjsc-v-vallex-group-companies-judgment-of-the-high-court-of-justice-of-england-and-wales-2021-ewhc-1386-tuesday-25th-may-2021>
 և <https://vlex.co.uk/vid/vtb-bank-pjsc-v-878682693>: 08.02.2025

օգտվելու և դատավարական պարտականությունները կատարելու՝ դատավարության մասնակցի բարեխղճությունը դատարանը կարող է որոշել նաև տվյալ քաղաքացիական գործով վարույթի շրջանակներից դուրս իրականացվող գործողությունների գնահատմամբ:

Ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ պետք է վերաիմաստավորել քաղաքացիական դատավարությունում դատավարական իրավունքների չարաշահման և դրա դրսևորումները զսպող իրավական ներգործության միջոցների տեսական և պրակտիկ ընկալումները: Դատավարական իրավունքների չարաշահումը ոչ իրավաչափ վարքագծի ինքնուրույն ձև է, որը հանգում է դատավարության մասնակիցների կողմից իրենց դատավարական իրավունքներն ու պարտականությունները ոչ բարեխղճորեն, այն է՝ ոչ իրավաչափ ակնկալիքներով կամ դրանց նպատակային նշանակությանն անհամապատասխան իրացնելուն:

Ընդ որում, իրավունքի չարաշահում կարող է թույլ տալ նաև համապատասխան դատավարական իրավունքի իրական կրող չհանդիսացող անձը, ինչը պայմանավորված է սուբյեկտիվ իրավունքի իրական և ձևական առումով կրող լինելու հասկացությունների տարբերակմամբ:

Իրավունքի չարաշահման արգելք սահմանող նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական դատավարությունում գործում է դատավարության մասնակիցների բարեխղճության կանխավարկածը, այն է՝ դատավարության մասնակիցներն իրենց դատավարական իրավունքներից օգտվում են և դատավարական պարտականությունները կատարում են բարեխղճորեն, քանի դեռ դատարանի կողմից օրենքով սահմանված կարգով չի գնահատվել և հաստատվել իրավունքի չարաշահմամբ դատավարական գործողության կատարման փաստը:

Դատավարական իրավունքների կամ այլ հնարավորությունների չարաշահում թույլ տված անձանց նկատմամբ կիրառվող դատական սանկցիաների կամ իրավական ներգործության այլ համաչափ միջոցների ընտրությունը դատարանի հայեցողական լիազորությունն է, որպիսին պայմանավորված է դատավարության մասնակիցների իրավունքների, ինչպես նաև օրենքով պահպանվող մասնավոր և (կամ) արդարադատության իրականացման հանրային շահերի խախտումների վերացման, դրանց հակազդելու արդյունավետության աստիճանով: Ընդ որում, չարաշահման կոնկրետ դեպքի առանձնահատկություններին համապատասխան կամ նման դեպքի համար օրենքով ուղղակիորեն նախատեսված ներգործության միջոցի բացակայությունն ինքնին չի կարող իրավական որոշակիության տեսանկյունից գնահատվել որպես խնդրահարույց, եթե դատարանի կողմից նման միջոց կիրառելը բխում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների էությունից կամ ուղղված է դրանց լիարժեք իրացումն ապահովելուն:

Բացի այդ, իրավունքի սահմանափակումը, այն է՝ դատավարական գործողությունների կատարման քանակական կամ ժամանակային սահմանափակման օրենսդրական սահմանափակումը, առաջին հերթին պետք է ենթադրի իրավունքի չարաշահմամբ կատարված դատավարական գործողությանն օրենքով սահմանված կարգով արձագանքելու կամ համարժեք դատավարական գործողություն կատարելու միջոցով դատավարության մասնակցի իրավունքի իրացումն ապահովելու՝ դատարանի պոզիտիվ պարտականության բացակայություն:

ВАГЕ ОГАНЕСЯН – Проблемы злоупотребления правами в гражданском процессе. –

В рамках настоящей статьи автором комплексно изучены и проанализированы содержательные элементы и функциональные особенности института злоупотребления процессуальными правами в гражданском судопроизводстве. Основанием для исследования послужила необходимость выявления круга носителей возможности злоупотребления процессуальными правами и обязанностями, содержания и проявлений злоупотребления, правовых механизмов устранения последствий.

Обосновано, что злоупотребление процессуальными правами не тождественно классическому правонарушению, поскольку в этом случае субъект права в ходе своей деятельности действует в соответствии с правовыми предписаниями, использует свои права или исполняет формальные обязанности, возложенные на него законом, но нарушает или причиняет вред правам других участников судопроизводства и публичным интересам эффективного осуществления правосудия. Обосновано, что злоупотребление процессуальными правами является самостоятельной формой противоправного поведения, в результате которого участники судопроизводства осуществляют свои процессуальные права и обязанности недобросовестно, то есть с неправомерными ожиданиями или не в соответствии с их целевым назначением. При этом злоупотребление правом может быть совершено и лицом, не являющимся фактическим обладателем соответствующего процессуального права, что обусловлено различием понятий действительного и формального обладателя субъективного права. Суд также может определить добросовестность участника процесса при осуществлении процессуальных прав и исполнении процессуальных обязанностей, оценив действия, совершенные вне рамок производства по данному гражданскому делу.

